²³ Տե՛ս Յովհան Աւձնեցի, Յովհաննու Իմաստասիրի հայոց կաթողիկոսի սակս ժողովոց, որ եղեն ի Հայք // Մատենագիրք Հայոց, Է., Անթիլիաս, 2007, էջ 123:

²⁴ Տե՛ս **Ղեւոնդ Վարդապետ**, Պատմաբանութիւն // Մատենագիրք Հայոց, հ. 2, Անթիլիաս, 2007, էջ 752-753: Հմմտ. **Մ. Օրմանյան**, Ազգապատում, Ա., Եր., 2001, էջ 913-914, 958-959:

Армению при католикосах Езре и Нерсесе. Но Армянская монофелитская церковь создавалась не параллельно с Армянской традиционной церковью, как Армянская халкидонская церковь десятки лет назад во время правления императора Морики, а вместо нее, лишь изменяя природу последней. Католикос Нерсес Тайеци основал новую резиденцию для новой церкви в Звартноце и построил новый собор Святого Звартноца, с такой богатой и величественной архитектурой, что он затмил не только соборы Эчмиадзина и Двина, но и халкидонский собор Авана. На церемонии освящения собора Звартноц присутствовал византийский император Константин, финансовый спонсор храма, которому так понравился новый храм, что он захотел иметь подобный храм в окрестностях Святой Софии, в столице. Поэтому он взял с собой Ована, престарелого архитектора Звартноца, который, к сожалению, умер в пути. Армянская монофелитская церковь, просуществовавшая до конца века, создала новую редакцию Агафангела в соответствии со своим новым символом веры, который, в то же время, был переведен на греческий язык и дошел до нас в форме рукописи, хранящейся в Охридской библиотеке, которую нашел известный востоковед Жерар Гаритт.

Ключевые слова: католикос Езр, Нерсес Тайеци, Звартноц, житие Григория, монофелитство, император Геракл, редакция Агафангела, Охридская рукопись

ARCRUNI SAHAKYAN – *Edition of the Armenian Monothelitism of the History of Agathangelos.* – In the 30s of the 7th century, the new confessional political course announced by Emperor Herakles, the Doctrine of Monothelitism, reached Armenia during the reign of Catholicoses Yezr and Nerses. But the Armenian Monothelitism was not created parallel to the Armenian traditional church, like the Armenian Chalcedonian church decades ago during the reign of Emperor Morik, but instead of it, only changing the nature of the latter. Catholicos Nerses Tayetsi established a new residence for the new church in Zvartnots and built a new cathedral named Saint Zvartnots, with such opulent and magnificent architecture that it overshadowed not only the cathedrals of Etchmiadzin and Dvin, but also the Chalcedonian cathedral of Avan. The consecration ceremony of Zvartnots Cathedral was attended by Byzantine Emperor Constantine, the financial sponsor of the temple, who liked the new temple so much that he wished to have a similar temple in the neighborhood of Saint Sofia, in the capital. That is why he took with him Hovhan, the old-aged architect of Zvartnots, who unfortunately died on the way. The Armenian Monothelitism, which survived until the end of the century, created a new edition of Agathangelos in accordance with its new creed, which, at the same time, was translated into Greek and reached us in a form of a manuscript preserved in the Ohrid library, which was discovered by the famous orientalist Gerard Garret.

Key words: *Yezr the Catholicos, Nerses Tayetsi, Zvartnots, Gregory's life, Monothelitism, Emperor Herakles, Agathangelos' edition, Ohrid manuscript*

ՈՒՍՏԱՆՏԻԿ ՄԻՐՈ ՓԻԼԻՍՈՓԱՅԱԿԱՆ-ՄԱՐԴԱԲԱՆԱԿԱՆ
ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ
ՍՐԲՈՒՀԻ ՏՅՈՒՍԱԲԻ ԵՎ ՄԻՊԻԼԻ ՎԵՊԵՐՈՒՄ*

ՆԱԻՐԱ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ, ՄԻՐԱՆՈՒՇ ՓԱՐՍԱԴԱՆՅԱՆ

Ուսումնասիրության նպատակն է 19-րդ դարի երկրորդ կեսին ապրած և ստեղծագործած արևմտահայ կին հեղինակների՝ Սրբուհի Տյուսաբի «Մայտա», «Սիրանոյշ», «Արաքսիա կամ վարժուհի», և Միպիլի «Աղջկան մը սիրտը» վեպերի օրինակով ցույց տալ ռոմանտիզմի դարաշրջանի գրական տեքստերը՝ որպես ռոմանտիկական սիրո փիլիսոփայական-մարդաբանական մեկնաբանության և մշակութաբանական ֆեմինիստի ձևավորման հնարավորություններ, ինչպես նաև ընդգծել *ռոմանտիկ սիրո* և *ռոմանտիկ դիսկուրսի* խորքային կապը անհատի ինքնիրացման կարիքների և հնարավորությունների հետ:

Ուսումնասիրության *խնդիրն* է փիլիսոփայական-մարդաբանական դիսկուրսի միջոցով ընդգծել ռոմանտիկ սիրո արտահայտություններով պայմանավորված այն բոլոր փոփոխությունները, որոնք նյութականացվում և իրացվում են արևմտահայ կին հեղինակների վեպերում և առկա են *սուբյեկտ* ու *սուբյեկտիվություն* կատեգորիաների իմաստաբանական տիրույթների բազմաչափության մեջ¹:

Ուսումնասիրության *արդիականությունը* պայմանավորված է արդի ընկալումներում 19-րդ դարի երկրորդ կեսի ռոմանտիկական վեպի նորովի բացահայտմամբ, ինչը պատմամշակութային համատեքստում որոշակիորեն հակադրվում է վերլուծության ավանդական մոդելին: Արևմտահայ կին հեղինակների՝ Սրբուհի Տյուսաբի և Միպիլի ռոմանտիկական տեքստերը (վեպերը) ուսումնասիրել ենք փիլիսոփայական-մարդաբանական պատկերավորման, կանանց ազատագրության համատեքստում սոցիալ-մշակութային և աշխարհայեցողական փոխակերպությունների, ինչպես նաև՝ նշանագիտության տեսանկյուններից:

Բանալի բառեր - Սրբուհի Տյուսաբ, Միպիլի, ռոմանտիկ սեր, արևմտահայ կին հեղինակներ, փիլիսոփայական-մարդաբանական մեկնաբանություն, սուբյեկտ, սուբյեկտիվություն

* Ուսումնասիրությունը իրականացվել է ՀՀ գիտության կոմիտեի կողմից ֆինանսավորվող գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային «Կանանց հիմնախնդիրները 19-րդ դարի երկրորդ կեսի արևմտահայ գրականության մեջ» թեմատիկ ծրագրի շրջանակներում: Ծածկագիր՝ 2IT-6B118:

¹ Տե՛ս **Naira Hambardzumyan, Siranush Parsadanyan**, Philosophical-Anthropological Concepts of Subject and Subjectivity as a Genesis of Women’s Emancipation. WISDOM, vol. 24, no: 4, 2022, էջ 56-63. DOI: <https://doi.org/10.24234/wisdom.v24i4.953>.

Ներածություն

Միջանձնային հարաբերությունների փոխակերպությունները և փոխադարձ հաղորդակցությունները հաճախ բացահայտվում են ռոմանտիկ սիրո ֆենոմենի այնպիսի դրսևորումների միջոցով, որոնք բնութագրական են 19-րդ դարի երկրորդ կեսի (նաև՝ հետագայի) սոցիոմներին, որոնք փորձում էին ավանդական ամուսնական հին կարգաբանությունից, այսպես կոչված, *միջնորդական* կամ *առքուվաճառքային առարկայացնող* մոդելից անցնել նորի՝ զգացմունքներով պայմանավորված զուգրնկերոջ ընտրությանը: Ըստ Շլեգելի՝ ռոմանտիկական տեքստի գլխավոր գործառույթը միֆի ստեղծումն է, ռոմանտիկ սիրո միֆականացումը²: Ռոմանտիկական սիրո միֆը, որ անվերապահորեն ստեղծվում էր ռոմանտիկ հեղինակների կողմից, վարքագծի առանձնահատուկ մոդել էր, որը բնութագրական չէր տվյալ ժամանակաշրջանի շատ ներկայացուցիչների: Այնուամենայնիվ, հասարակության մտավորական շերտը գրական շատ երկերում և, ընդհանրապես, արվեստում, արձարձում էր ռոմանտիկական կրթերի ծածկագրերը՝ սուբյեկտի խորը անհատական կարիքներին համապատասխան: Այս մոտեցումը առավել գրավիչ և արժեքավոր դարձրեց ռոմանտիկ սիրո մոդելը կին հեղինակների երկերում, որոնց ստեղծած միֆը վիպական ժանրում նրբորեն գործում է ոչ միայն իմաստաբանական, այլև շարահյուսական փոխներթափանցումների տիրույթներում:

Ռոմանտիկ սիրո արտահայտությունը արևմտահայ կանանց երկերում օգնում է մեկ տեքստում միավորելու սուբյեկտի³ *ինքնանկարագիրը*, որի միջոցով նա ձեռք է բերում իր անհատականությունը, ուստի նրա զգացմունքների բնագոյային դրսևորումները, որոնք արժեքավոր են սիրո սուբյեկտի առկայության տեսանկյունից, ուղղորդվում են քնարական երկխոսության միֆական վեհացումով:

Էնթոնի Գիդենսը նշում է, թե սիրո վեհության արտացոլման պատմական ընկալումը ներթափանցել է անհատական կյանք՝ զգալիորեն ընդլայնելով պատումի ռեֆլեքսայնությունը, իսկ պատմականությունը (նարատիվը) ինքնին անհատականացվել է՝ անկախ սոցիալական համատեքստից⁴: Վեպը, ինչպես և գրական նոր ժանրը (խոսքը էպիստոլ-

² Տե՛ս **Шлегель Ф.** Речь о мифологии. Литературные манифесты западноевропейских романтиков. М.: Изд-во Моск. ун-та, 1980, էջ 62-65:

³ A subject is a being who has a unique consciousness and/or unique personal experiences, or an entity that has a relationship with another entity that exists outside itself (called an object). A subject is an observer and an object is a thing observed. Տե՛ս **Solomon R.**, Subjectivity, in Honderich: United Kingdom: Ted. Oxford Companion to Philosophy: 2005. Oxford University Press: 900 էջ:

⁴ Քսաներոդ դարի վերջում Էնթոնի Գիդենսը ձևակերպեց սիրային հարաբերությունների առաջացման նոր թեզը և անվանեց այն կոնֆլուենտային սեր, որը ռոմանտիկ սիրո հակադրությունն էր: Կոնֆլուենտային սերը, ըստ Գիդենսի, հեղհեղուկ, անցողիկ սեր է, որը հիմնված է սուբյեկտների սեռական գրավչության վրա, ուլքեր, սակայն, միմյանց չեն օժտում հոգով միավորվելու հատկություններով, այլ ավելի շուտ հակված են վայելելու այդ հարաբերությունները՝ որպես փաստ կամ կյանքի իրադարձություն՝ այժմ և այստեղ: Այսօրինակ սիրային փոխհարաբերությունների տևողությունը որոշվում է միայն սուբյեկտների՝ այն երկարաձգելու պատրաստականությամբ,

յար (նամակագրական) վեպի մասին է), որը ստեղծեց Ժան Ժակ Ռուսոն «Նոր Էլոիզով», որպես սիրային ապրում կամ անհանգստություն և առօրեականությունից դուրս մեկ այլ իրականություն, տարբեր են, սակայն դրանք միֆեր են, որոնք ստեղծվում են ռոմանտիկ սուբյեկտի կողմից: Այդ առումով ռոմանտիկ սերը ինքնին զգացմունք չէ, այլ սիրո նկատմամբ սիրահարված սուբյեկտի մշակութային կարգավորումների (installations) համակարգ, որը վեպում իրացվում է ասացման և քնարական պատկերների ներքին մենախոսությունների միջոցով:

Սիրահարված սուբյեկտը (ռոմանտիկ սիրո սուբյեկտը, որը իրացնում է իր ներքին կարգավորումների համակարգը) ընկալվում է որպես սուբյեկտիվության տարաբնույթ ձևերից մեկը, որի հետևանքով թարմացվում է *Ուրիշ*⁵-ի հետ շփման հնարավորությունը: Սիրահարված սուբյեկտը ինքն իրենով է ընդգծում զգացմունքի առանձնահատուկ բնույթը, և դրա աստիճանական զարգացումը տեղի է ունենում հատկապես սեփական *ես*-ի և *Ուրիշ*-ի հետ ներքին փոխհարաբերությունների միջոցով:

Այսօրինակ վերաբերմունքը *Ուրիշ*-ին ընկալվում է որպես առանձնակի գաղափարաբանական, ինչպես նաև երկխոսական տարատեսակ աղբերից մաքրվելու հնարավորություն: Սուբյեկտիվության այս կերպը մինչ օրս ձգտում է պահպանելու *միաստության* ֆենոմեն դառնալու իր գործառույթն ու կարգավիճակը և հավակնում է բնականության և այն՝ կողմնայնության, որոնք ընդգծում են սիրո փորձառության սահմանը՝ չհավակնելով ոչնչի: Այս հանգամանքը չափազանց ուշագրավ է և արդյունավետ, քանի որ չափազանց բարձր է սիրային փոխհարաբերությունների և զգացմունքների գրավչությունը, իսկ բնագոյային (ռեֆլեքսայնության) մակարդակը ցածր է: Սոցիալական մոտիվացումը և ինժեներիան՝ որպես տեխնոլոգիական հնարք, մշտապես իր ուշադրության կենտրոնում են պահում անհատի գոյաբանության այս հիմնախնդիրը:

Աշխարհիկացման գործընթացները որպես *անհնայի* դրսևորում

Արդի ժամանակներում առավելապես օգտագործվում է *խոստովանական* սիրո դիսկուրսը՝ որպես տարբեր միֆոլոգեմների և գաղափարախոսությունների հաղորդագրություններ, զանգվածային մշակույթի տեքստերում՝ սերիալներում, մելոդրամաներում, սիրային վեպերում, պարահոգեբանական գրականության մեջ, *վանիլային* բովանդակություն ունեցող սոցիալական ցանցերում՝ ազդեցություններ գործելու նպատակով:

Սույն երևույթը ուշագրավ է նաև պատմամշակութային ենթատեքստ-

ուստի, զուգրնկերների գրավչությունից ու ցանկությունից բացի, ոչինչ չի ապահովում նրանց համատեղ կյանքը: Սա ինտիմ հարաբերությունների զարգացման նոր փուլ է, որը վերաբերում է սուբյեկտիվության նոր ձևերին, որոնք համապատասխանում են պոստմոդեռնիզմի դարաշրջանի նոր մարտահրավերներին: Տե՛ս **Anthony Giddens**, *The Transformation of Intimacy: Sexuality, Love and Eroticism in Modern Societies*, Stanford University Press, Stanford, California, 1992, 212 էջ:

⁵ Տե՛ս **Semone De Beauvoir**, *The Second Sex*: Translated and Edited by H.M. Parshley. Jonatan Cape: Thirty Bedford Square London, 1956, London, 701 էջ:

տում և հնարավորություն է ընձեռում տեսնելու և հիմնավորելու ռոմանտիկ սիրո այն բոլոր փոխակերպությունները, որոնք տարբեր ժամանակներում տեղի են ունեցել տարբեր սոցիումներում դեռևս այս միջի ձևավորման նախասկզբից: Այս համատեքստում 1880-90-ական թվականներին Օսմանյան կայսրությունում ապրած և ստեղծագործած արևմտահայ կին հեղինակների Սրբուհի Տյուսաբի «Մայտա»⁶, «Սիրանոյշ»⁷, Սիպիլի «Աղջկան մը սիրտը»⁸ վեպերը բացառություն չեն և ամփոփում են սիրո (որպես ուղղահայացի) հասկացման և վերապրումի հայեցակարգերը: Այդ ուղղահայացները պայմանավորված են արևմտահայ կին հեղինակների՝ աշխարհի նկատմամբ ունեցած դասական ռացիոնալության, ռոմանտիկական-միստիկական վերաբերմունքի և դրանցով պայմանավորվող գիտակցության գոբալ առձակատումով: Դրանք դրսևորվում են ոչ միայն գնոսեոլոգիական, այլև գոյաբանական տիրույթներում:

Գիտակցության *դասական* և *ռոմանտիկ* տիպերը իմացաբանության տիրույթում հարաբերվում են ճանաչողության *ռեֆլեքսային* և *ոչ ռեֆլեքսային* մեթոդներին և հոգեֆիզիոլոգիայի տիրույթում միավորում են մտածողության բոլոր դրսևորումները: Այդ կերպ ձևավորվում է սիրահարված սուբյեկտի, որը միաժամանակ օբյեկտն է, երկու տեսակ՝ *ռացիոնալ* և *զգացմունքային*, որոնք հարաբերականորեն հակալկշռում են միմյանց:

Ռոմանտիկ սիրո դրսևորումը՝ որպես կնոջ կողմից գնահատվող և իրացվող հոգեբանական և մտավոր վիճակների արտահայտություն, արևմտահայ գրականության մեջ առաջին անգամ բացահայտվում է կին հեղինակների երկերի՝ վեպերի, պատմվածքների, բանաստեղծությունների և միջոցով: Աշխարհիկացման այս դանդաղ գործընթացները, որոնք սկսվել էին 19-րդ դարի երկրորդ կեսին, կնոջը ուղղորդում են՝ ստեղծելու և զարգացնելու ինքնակատարելագործման, ինքնիրացման նոր օրինաչափություններ, որոնք օգնում են հայրիշխանական մշակույթում արդիականացնելու նաև իրենց ներքին կանացիությունը: Սիրո այսօրինակ փորձառության խորհրդանշական իմաստն այն է, որ իռացիոնալ աշխարհը առօրեականություն է ներթափանցում *անիմայի*⁹ կանխատեսումների միջոցով:

⁶ **Սրբուհի Տյուսաբ**, Մայտա, Կ. Պոլիս, 1883, տպ. Ջարդարեան, 249 էջ:

⁷ **Սրբուհի Տյուսաբ**, Սիրանոյշ, Կ. Պոլիս, 1885, տպ. Նշան Կ Պերպերեան, 408 էջ:

⁸ **Սիպիլի**, Աղջկան մը սիրտը, Կ. Պոլիս, 1891, տպ. Ճիվլէկեան, 251 էջ:

⁹ Անիման և անիմուսը (լատ. anima և animus - *հոգի*, համապատասխանաբար արական և իգական *հոգի*): Յունգի կողմից հոգեբանություն ներմուծված տերմիններ են՝ արական և իգական արքետիպերի նկարագրության համար: Յունգը *անիմուսը* առնչում էր կտրուկ, կոշտ, չափազանց սկզբունքային, արտաքին աշխարհի հետ կապված որոշումների հետ, իսկ *անիման*՝ էմոցիաների, տրամադրությունների և ներքին աշխարհի հետ: Յունգը գտնում էր, որ յուրաքանչյուր մարդ ունի անիմայի և անիմուսի տարրեր այնպիսի չափաբաժիններով, որոնք պայմանավորված չեն նրա սեռային պատկանելությամբ: Այսպիսով, տղամարդու բնավորության մեջ կարող է գերակայել անիմուսը, սակայն անկախ լինել նաև անիման: Տե՛ս **C. G. Jung**, Anima and Animus. N.Y.: Spring Magazine, 1957; **H. Binswanger**, Positive Aspects of the Animus. New York: Spring Magazine, 1963; **Anima J. Hillman**. New York: Spring Magazine, 1973; **Susan Rowland**, "Anima, Gender,

Նշված թեզի լավագույն օրինակ կարող է լինել Սրբուհի Տյուսաբի «Մայտա» վեպը, որը գրվել է *նամակագրական* վեպի ավանդույթներով: Վեպում նամակագրության միջոցով բացահայտվում են օսմանյան բռնապետական կայսրության փակ հասարակության հայրիշխանական բարքերը և սիրահարված սուբյեկտների՝ Մայտայի և Հերիգայի կարգավիճակները: Տյուսաբը բացահայտում է նաև ռոմանտիկ սիրո ֆենոմենը և դրա իրացումը պատմամշակութային համատեքստում՝ *անհասանելի սիրո էքստազի* փոխանցման միջոցով (Հերիգա-Տիգրան, Կոմս-Մայտա, Տիգրան-Մայտա), որը ստեղծվում է, երբ սիրահարված սուբյեկտը¹⁰ ամբողջանում է աշխարհի հետ իր ներքին *անհմայի*¹¹ միջոցով, որը կնոջ հանդեպ երկրային սերն է:

Զգացմունքի այսօրինակ փոխանցումը ստեղծում է հատուկ իդեալականացված բարձր և առանձնահատուկ սիրո կողմնորոշումը, որը այսպես թե այնպես ինչ-որ պատճառով հավերժական չէ և, հնարավոր է, նաև վտանգավոր է: Միաստիկական սիրո զգացմունքը ռոմանտիկական հարաբերությունների և ռացիոնալիստական ընկալումների համադրություն է, որը բնութագրական է 19-րդ դարի երկրորդ կեսի գրականությանն ընդհանրապես: Եվ չնայած տվյալ ժամանակաշրջանին հատուկ բարոյականության վերաբերյալ շեշտադրումներին, միևնույն է, Տյուսաբի «Մայտա»-ն *կանանց ազատագրությունը* հատկանշող գաղափարների համադրության տեքստ է: Այն բաղկացած է բազմաթիվ *նարատիվ-նամակներից*, որոնք կրում են «Մայտա առ տիկին Սիրա», «Տիկին Սիրա առ Մայտա», «Կոմս առ Մայտա» և «Մայտա առ Կոմս», «Տիգրան առ Մայտա» խորագրերը՝ կախված նրանից, թե ով է նամակի հեղինակը: Դրանցում հեղինակը և նրա հիմնական նամակագիրը՝ տիկին Սիրան, ինչպես նաև Կոմսը, Տիգրանը, Հերիգան, Պետրոսը պատմում են իրենց հույզերի, զգացմունքների և գործողությունների մասին:

Նամակ-հատվածների միջև սուբյեկտների *բազմակիություն* էֆեկտի միջոցով հստակորեն կարգավորված են տեքստի իմաստաբանական ու շարահյուսական տիրույթները: Սա Մայտա-Սիրա-Կոմս հաջողված դիսկուրս(ներ)ի միֆականացումն է, որում գաղտնագրվում է ստեղծագործական գործընթացը որպես փաստ, և նամակները ընթերցողի կողմից ընկալվում են որպես իրական մետապատումներ:

Անհրաժեշտ է նշել նաև, որ ուշադիր ընթերցման դեպքում առանձնանում են երեք հիմնական *մետապատկերումներ*, որոնք համակարգվում են հեղինակի կողմից: Սիրայի՝ որպես բարեկամուհու, կամ Մայտայի աղջկա Յուլիանեի անմեղության և ազատության պատկերումների թեմաները ստեղծում են նամակների միջոցով տրվող իրական զգացմունքների էֆեկտները:

Feminism”: Edited by Kelly Bulkeley, and Clodagh Weldon (eds), Teaching Jung, AAR Teaching Religious Studies Series, 2011, online edn, Oxford Academic, 22 Sept., 2011), <https://doi.org/10.1093/acprof:oso/9780199735426.003.0011>. 2022

¹⁰ Վեպում այն մարմնավորվում է Տիգրանի և Կոմսի կերպարներով:

¹¹ Տե՛ս **Susan Rowland**, Teaching Jung: Edited by Kelly Bulkeley and Clodagh Weldon: Chapter 2: Anima, Gender, Feminism, Oxford Academic, էջ 169-182:

Ռոմանտիկ սիրո ռացիոնալիստական համակարգումը

Տյուսաբի «Սիրանոյշ» վեպում ազդեցիկ դիրք է զբաղեցնում Սիրանուշի հայրը, «Արաքսյա կամ վարժուհի» վեպում՝ տիկին Աբգարյանը, «Մայտա» վեպում՝ տիկին Սիրան և Մայտան, որոնց հայացքների և սիրո ռացիոնալիստական համակարգումը, ներառյալ ինտելեկտի նկարագրության և գայթակղության պատկերավորման տեխնիկաների տիրապետումը, հեգնանքը և դինամիզմը, ներգրավումը *Ուրիշ*-ի տիրույթ, կերպարները գործնականում դարձնում են առավել կենսական:

Տյուսաբի և Սիպիլի վեպերում սիրահարված կանանց կերպարները (Մայտա, Սիրանուշ, Արաքսյա, Բուբուլ) պատկերվում են բարության և որոշ դեպքերում անմեղության հատկանիշներով՝ որպես *հայրիշխանական չգրված օրենքներով բանադրված բարոյականության զոհեր*: Մայտան առավել հասուն է, և ինչպես տեսնում ենք, նա Սիրայի հետ քննարկում է հայրիշխանական փակ սոցիումում կնոջը պարտադրվող կարգավիճակը համարելով նրան հասարակության *ողորմելի զոհը*՝ «Իրօք, ի՞նչ կ'ընէ օրենքը: Օրենքը կնոջ վիզը չուան մի կ'անցունէ, գոր կը սեղմէ և կը թուլցնէ ըստ հարկին <...> Օրենքը ներումն կը շնորհէ արանց մուլտեանց, մինչդեռ կնոջ ամենափոքրիկ յանցանքը կը պատժէ խստի» (էջ 158-159): Նշյալ բոլոր վեպերում ուշագրավ են սիրահարված կանայք, նրանց հիացական պատիվությունը ոչ միայն շրջապատի, այլև աշխարհի հանդեպ: Սա *բոնասպետական-փակ սոցիումի հատկանիշ է*:

Ընդգծված զգայականություն, անհավասարություն, զոհաբերության պատրաստականություն, գայթակղվելու անհնարինություն, *Ուրիշ*-ի հանդեպ վստահություն, անկեղծություն և զգացմունքների զսպված արտահայտություն. սրանք են այն բնութագրերը, որ Տյուսաբի «Մայտա», «Սիրանոյշ», «Արաքսիա կամ վարժուհի» և Սիպիլի «Աղջկան մը սիրտը» վեպերում ունեն սիրահարված կին-սուբյեկտները: Այս բնութագրերում *իրական կիրքը* և կանանց *էքստատիկ* վիճակները, որոնք կմղեին նրանց կենսական գործողությունների, բացակայում են: Սույն հանգամանքը պայմանավորված է հայրիշխանական սոցիումով, որի խիստ ավանդական կանոնները կանանց մղում են սոցիալական հասարակության լուսանցքներից դուրս: Սա տղամարդկանց հասարակությունն է, և այստեղ կինը մարգինալացվում է: Ուստի՝ սա բոլորովին այլ կյանքի *էթոս* է, որը *ուժ-գիտելիք* իշխանության ևս մեկ հնարք է: Ու թեև վերոնշյալ բոլոր վեպերի հեղինակներն էլ գլխավոր կերպարների միջոցով ստեղծում են տղամարդկանց բևեռացվածության կոլիզիան, որի զոհն են Մայտան («Մայտա»), Սիրանուշը («Սիրանոյշ»), Բուբուլը («Աղջկան մը սիրտը»), ինչ-որ չափով՝ Արաքսիան («Արաքսիա կամ վարժուհի»), այնուամենայնիվ նրանց բոլորի ներսում ապրում է սիրո ներքին զգացումը: Թեև Սիպիլի գլխավոր կերպարի՝ Բուբուլի դեպքում սիրո անկումը հանգեցնում է մահվան, քանի որ նա հանուն իրեն անձանոթ սիրո զգացմունքը լիարժեքորեն ապրելու հրաժարվում է ինքն իրենից, սեփական *էս*-ից: Նա հակված է իռացիոնալության ու այնկողմնայնության և գիտակցում է

կյանքի ավարտուն լինելը, գիտակցում է նաև սեփական մարմնի վերջավոր լինելը: Այնկողմնայնությունը դառնում է իրականություն և անհատական մակարդակում ձեռք է բերում գոհաբերության հատկանիշներ: Բուբուլը հրաժարվում է իր սիրուց: Այդ հրաժարումը, սակայն, մահվան միջոցով ամբողջանալու այն հնարավորությունն է, որ *Ուրիշ*-ը (Գառնիկը) իր սպառողական բնույթի շնորհիվ ձեռք է բերում կին-սուբյեկտի (Բուբուլի) գոհաբերության (մահվան կամ կյանքից հրաժարումի) հաշվին:

«Սիրանոյշ» վեպում իրավիճակը քիչ այլ է. հայրը Սիրանուշին պարտադրում է գոհաբերություն կատարել, և դրանով խախտվում են սրբացման ծեսը և ներքին հավասարակշռությունը աղջկա և սոցիումալի միջև, որը նույնպես հանգեցնում է մահվան: Այնկողմնայնությունը այս դեպքում ապահովում է հույզերի և զգացմունքների իրականությունը, որը անմիջականորեն արտացոլում է մարդկային հարաբերությունների տիրույթը, որտեղ մարդը մշտապես ձգտում է վերջնական իմաստի ձեռքբերմանը, որը մարդու այլության վերջնական արդյունքն է, քանի որ տեղի է ունենում հոգեբանական մաքրագործումը, որը ամբողջովին ներագրում է սիրո օբյեկտի վրա:

Էքզիստենցիան որպես ռոմանտիկ սիրո և տառապանքի գոյաբանական սահման

Սիրո փորձառության կախարդական հմայքը ընդհանրապես կրում է մարդկային բնագոյների անհավատալի վերափոխությունը և հուզական-զգայական էներգիայի ակնթարթային վերաբաշխումն ու վերաուղղորդումը: Սիրահարվելով մարդը հավատում է, որ գտել է իր կյանքի իմաստը և վերջնանպատակը, որոնք նա բացահայտում է մեկ այլ մարդու գոյությամբ: Գտնելով իր բացակայող կեսին՝ մարդը ունենում է ամբողջականության զգացողությունը և լիանում է: Հետևաբար, նա ինքն է իրեն զգում որպես ամբողջական սուբյեկտ, որը կարող է իրական կյանքով ապրել: Նրան թվում է, թե կյանքը լցվել է գերմարդկային էներգիայով և սովորական երկրային գոյությունից հասել է անմատչելի բարձունքների: Նման անմատչելիությունը նրա համար իսկական սիրո հանդեպ վստահության նշան է:

Հոգեբանական այս ամբողջությունը ներառում է, սակայն, անգիտակցական պահանջներ, որոնք նրա ներսում անպայմանորեն ստեղծում են զգացմունքների ինտենսիվությունը և հրճվանքը: Եվ երբ սուբյեկտը զգում է, թե ինքը տարված է, և թե ինչ-որ ուժի ազդեցության և իշխանության ներքո է, նա կրկին բացահայտում է իր կյանքը և կրկին վերագտնում ու իմաստավորում է աշխարհի հետ իր ներքին հոգեկան կապը: Այդ պատճառով, երբ նա սիրահարվում է, աշխարհը բազմաթիվ ներքին իմաստներ է ձեռք բերում, և ցանկացած առօրեական մանրուք իմաստավորվում է այնկողմնայնությամբ:

Եվ երբ սիրահարվածությունն անցնում է, աշխարհը դառնում է մռայլ և դատարկ, թեև կինը և տղամարդը նորից մնում են նույն մարդիկ, որոնք ունեին այդ զգացումները: Այլ կերպ՝ սուբյեկտը, թեկուզ կարճա-

ժամկետ, սակայն կարծում է, թե կարող է հաղթահարել սովորական մահկանացուի իր կարգավիճակը և կյանքը դարձնել առավել ամբողջական, երջանկացնել իր ընտրյալին՝ սիրո օբյեկտին հաղորդելով կարևորության, առույգության ու էքստազի զգացողությունները և դրանց միջոցով փորձել հասնել ամբողջականության նաև աշխարհի հետ:

Արևմտահայ կին հեղինակներ Տյուսաբի և Միպիլի վեպերում սերը մեկնաբանվում է որպես կյանքի միակ իմաստ, հակադրվում է նյութին հարստությանը, թեպետ երկու դեպքում էլ (սիրո և հարստության սպառումներով) համահարթեցվում է կին-սուբյեկտի կարևորությունը: Արդյունքում, ռոմանտիկ զգացմունքների, հույզերի և ապրումների տևակա-նության մեջ սերը վերածվում է կյանքը ապրելու ունիվերսալ հնարավորության, քանի որ ռոմանտիկ սիրո մեջ առկա է նաև տառապանքի բաղադրիչը, որը միաժամանակ լինելության ճգնաժամը գոյաբանորեն հաղթահարելու ճանապարհն է: Միրահարվածի հոգևոր թռիչքի մեջ միաժամանակ առկա են հաղթանակի և պարտության, ուժեղության և թուլության, չարի և բարու բինար բաղադրիչները, քանի որ սուբյեկտը աստիճանաբար սկսում է ընկալել աշխարհի անկատարությունը, որը ոչ այնքան բանական է, որքան ներգրավված է գոյի օտարման և նյութակա-նացվող մարմնական փորձի լինելության տիրույթում:

Այս դեպքում է, որ ենթարկվելով *Ուրիշ*-ի հանդեպ սիրո ամենակույ զգացողությանը՝ կին-սուբյեկտը հասնում է սեփական օտարվածությանն ու մենակությանը, սակայն կարողանում է զգալ *Ուրիշ*-ի զգայութ-յունների ոչ բանական հիմքերը: Նա հասկանում է, որ ցավի և մենա-կության զգացողությունների դեպքում բոլոր մարդիկ ունեն այն նույն ապրումները, որոնք ձևավորում են հոգու և մարմնի հիշողությունները: Ցավի ճանաչողության այս նոր գիտելիքի շնորհիվ է կին-սուբյեկտը սկսում է հասկանալ այն բոլոր նշանները, որոնք հակադրվում են լոգո-սին, իշխանությանը, քանի որ հնարավոր իրական գիտելիքը նրան տրվում է փորձի միջոցով: Հետևաբար, առերեսումը ցավին և մենակությ-յանը առերեսվելն է սեփական ինքնությանը՝ տարածաժամանակային քրոնոտոպից դուրս: Այս առերեսումն էլ վերադարձնում է կին-սուբյեկ-տին աշխարհի արքետիպային ընկալմանը, որտեղ անձնական ցավը և աշխարհի ցավը միավորվում են ու դառնում անսահման: Այս դեպքում *Ուրիշ*-ը չի կարող օգնել, քանի որ նա նույնպես միայնակ է և անգոր է՝ վերացնելու գոյաբանական լինելության (էքզիստենցիալի) սահմաննե-րը: Դրանց հաղթահարումը հնարավոր է միայն քնքշության միջոցով, ո-րը որոշակիանում է, երբ *Ուրիշ*-ի մեջ սուբյեկտը ճանաչում է ինքն իրեն: Սերը վերապրած կին-սուբյեկտի տառապանքը կնիքվում է մենակությ-յան գիտակցմամբ և աշխարհի հետ հնարավոր միավորմամբ:

Մահը որպես սիրո անխուսափելի և բացարձակ փոխակերպություն

Միբուց ստեղծված անհանգստության էքզիստենցիալ-գոյաբանա-կան իմաստը տառապանքի միջոցով վեհանալն ու աշխարհի հետ միա-

վորվելն է: Միայն թե տառապանքը անսահման է և կարող է հանգեցնել վերջնակետի (մահվան), ինչպես Միպիլի «Աղջկան մը սիրտը» և Տյուսաբի «Միրանոյշ» վեպերի գլխավոր կին կերպարների՝ Բուբուլի և Միրանուշի դեպքում է. ***մահը գիտակցվում է որպես անխուսափելի և բացարձակ փոխակերպություն:*** Հետևաբար, մահը կարևոր դեր ունի ինչպես ռոմանտիկ սիրո, այնպես էլ սիրո առասպելացման և ապաստարացման տիրույթներում: Մահվան նշանագիտական պատկերման լեզվի մասնագետ ընթացքում (Միրանուշ, Բուբուլ, Հերիգա, Յուլիանե) իմաստային ունիվերսումը չի ամբողջանում, քանի որ խոցելի է:

Իրականությունից սնվող անհանգստության մեջ մահը բացարձակ մարզինալ է, այդ պատճառով մահվան և մահացածների, մասնավորապես սիրելիների մահվան թեման գրավում է ռոմանտիկներին: Այս հանգամանքը տեսանելի է նաև համաշխարհային գրականության նմուշների՝ «Տրիստան և Իզոլդա» ասպետական վեպի արքետիպային կերպարների, Շեքսպիրի «Ռոմեո և Ջուլիետ» ողբերգության և այլ երկերի համատեքստերում, որոնցում ռոմանտիկ սիրո պատմությունները ողբերգական են:

Մահը դառնում է կերպափոխման և ազատության անվերապահ խորհրդանիշ: Ռոմանտիզմի մեջ այս ավանդույթը շարունակվում է. այն լրացվում է տառապող և հիասթափված սուբյեկտի դեկադենտական-անկումային ինքնասիրությամբ, որը պատրաստ է ոչնչացնել ողջ աշխարհը հանուն սիրելիի: Լավագույն օրինակը այս դեպքում Միպիլի Բուբուլն է, որը հանուն սիրելիի հրաժարվում է իրեն բաժին հասած ապահով կյանքից, գնում է սիրո հետևից, սակայն հայտնվում է հայրիշխանական փակ սոցիումի իրականության մեկ այլ սահմանում. դոգմատիկ ու տաբուացված հասարակությունը մարզինալացնում է իր օրենքներին չենթարկվող աղջկան: Խոստովանության (նամակը գրելու) հայտնի տեսարանում Բուբուլը հաղորդություն ստանալու պես է արտասանում՝ *Ես Բուբուլն եմ՝* գերբնական կամք գործադրելով և ճեղքելով *օբյեկտից սուբյեկտ անցման ճանապարհը կյանքի և մահվան միջև*, ընդհուպ *մինչև այն սահմանը, որից այն կողմ չկա շարժում և չկա վերադարձ: Ռոմանտիկ սիրո դիվային և հաճախ «անբարոյական» բնույթը խլում է սոցիումով պայմանավորված նրա ազատությունը:*

Հետադիմական հասարակությունների կողմից անբարոյականություն համարվող այս դրսևորումը հատկանշական է 19-րդ դարին, և ինչու ոչ, առկա է նաև արդի ժամանակներում: Մույնը բնութագրական է չզարգացած և տգետ սոցիումներին, թեև Բուբուլը արդարացված է, քանի որ գործում է անկեղծության ազդեցությամբ: Բուբուլի կերպարը բացարձակի հասցված ռոմանտիկ աղջկա կերպար է, որում կյանքը իմաստավորող սիրո զգացումը ներհատուկ է մահվան, և որում ընդգծվում է անտարբերությունը այն ամենի նկատմամբ, ինչը սիրո առարկա չէ: Մրբության և սիրո այդ խառնուրդը, թվում է, ունի հեռանկարներ, քանի որ սիրո սրբացման և վերաիմաստավորման ճշգրտությունն առավել արժեքավոր է, քան այն, թե

աղջիկը երիտասարդ էր և անմեղ: Միայիլը գիտակցում է սիրո երկակիությունը՝ հայկական մշակույթ բերելով Բուբուլի և Գառնիկի կերպարները:

Սերը որպես միֆոլոգիական տիեզերք

Այսպիսով, սերը հնարավորություն է, որի միջոցով մարդը նախ ճանաչում է ինքն իրեն¹², իր առանձնակիությունը որպես ինքնուրույն արժեք և առաքինություն: Ռոմանտիկ սերը բնութագրվում է որպես սրբություն, որը հաճախ ուղղորդում է մարդուն՝ անցնելու թույլատրելիի սահմանները: Միրո սրբացումը, սակայն, տարբաժանելի չէ անխուսափելի պղծումից և առավել տեսանելի է, երբ այդ պղծումը տեղի է ունենում սուբյեկտի ինքնիրացման ներքին համակարգում: Ուստի՝ հասարակության բարոյականության հիմքերը խախտող որոշակի արարքի ընդունակ է միայն այն սուբյեկտը, ով գտել է սեփական *էս*-ը և կարող է վերականգնել աստվածային բարոյականությունը: Հետևաբար, սիրո պաշտամունքին զուգահեռ ծնվում է նաև ցանկալիի պաշտամունքը:

Միրելու և սիրված լինելու ցանկությունը *միֆոլոգիական տիեզերք* է ներմուծում մաքրության պատկերներով իդեալականացված *կանացիությունը*, որը Տյուսաբի «Միրանոյշ» վեպում հարկադիր ամուսնության միջոցով ենթարկվում է պղծման և հպատակության, իսկ ֆրանսուհի կնոջ՝ Ժանեթի կերպարի միջոցով Տյուսաբը ի հայտ է բերում կանացի դիվային բնույթը, որը նյութականացնում է սիրո պղծումը և ձգտում է գերակայության: Միրուց ծնված փորձառությունը գնահատվում է բարձր, քանի որ ռոմանտիկ սիրո սոցիալականացման ֆենոմենը, որպես առանձնակի ծիսակարգ, վերարտադրում է իրեն՝ ենթարկվելով *ռոմանտիկ սիրո* օրինաչափություններին: Այս ֆենոմենը լավագույնս նկարագրված է Խոսե Օրտեգա ի Գասեթի¹³ կողմից Ստենդալի «Միրո մասին» էսսեի և վերջինիս *բյուրեղացման*¹⁴ տեսության քննադատության մեջ, որում Գասեթը պնդում է, թե մարդկային սիրո հիմքը սիրո օբյեկտը փրկելու ցանկությունն է. չհիանալ, չտարվել, մոտ չթողնել, *սակայն համառորեն պնդել նրա գոյությունը*. մերժել աշխարհի այն կառուցվածքը, որտեղ սիրո օբյեկտը չի կարող գոյություն ունենալ¹⁵: Սակայն, ըստ էության, սա նույնն է, ինչ նրան անընդհատ կյանք ներշնչելը, քանի որ այն հասանելի է մարդուն միայն սեփական մտքերում: **Սերը կյանքի հավերժական պարզն է, արարում և հոգու խնամք:**

Միրո միջոցով կատարելության ձգտումը և *բյուրեղացումը* սուբյեկ-

¹² Տե՛ս **Jose Ortega Y. Gasset**, On love: aspects of a single theme, 2012, Publisher: Martino Fine Books, 204 էջ:

¹³ Տե՛ս նույն տեղը:

¹⁴ *Բյուրեղացում* հասկացությունը առաջադրել է Ստենդալը, որպեսզի նկարագրի սիրո ծնունդը: Տե՛ս **Stendal**, On Love, Translated from the French with an Introduction and Notes by **Philip Sidney Woolf** and **Cecil N. Sidney Woolf**, M. A., Fellow of Trinity College, Cambridge. New York. Brentano's: First Published 1915, Reprinted 1920 Printed in Great Britain at The May flower Press, Plymouth: William Brendon & Son, 336 էջ:

¹⁵ Տե՛ս **Jose Ortega Y. Gasset**, նշվ. աշխ.:

տի մեջ ստեղծում են օբյեկտին տիրանալու և ունենալու ցանկությունը, քանի որ նա ցանկալի է դառնում հենց այն մտավոր գործողության արդյունքում, որը ոչ այլ ինչ է, քան սիրահարված լինելու պրոցեսը: Այդ պատճառով Գասեթը առաջադրում է *սիրել* և *սիրահարված լինել* հասկացությունները: *Բյուրեղացման* ֆենոմենը, իհարկե, ամփոփում է սիրային ողջ պատմությունը, որը օբյեկտի ռոմանտիկացման և աստվածայնացման տիրույթում է: Ստենդալի առաջին *բյուրեղացումին* հաջորդում է երկրորդը՝ նա ինձ սիրում է¹⁶, որը բնութագրվում է սիրո օբյեկտի շուրջ անվերջ դիսկուրսով և ներառում է սուբյեկտի ողջ կենսական աշխարհը:

Եզրակացություն

Տյուսաբի «Մայտա», «Միրանոյշ» և Միպիլի «Աղջկան մը սիրտը» վեպերում ռոմանտիկ սիրո գոյաբանությունը, կյանքի և մահվան փիլիսոփայությունը դիտարկելի են բացառապես սիրուն առնչվող հույզերի ու զգացմունքների տեսանկյունից, որոնք արևմտահայ կին հեղինակները՝ Տյուսաբը և Միպիլը, իրացնում են *երևակայության* տիրույթում: Սույնը նաև օբյեկտին հեռահար ճանաչելու հնարավորությունն է, մինչև ֆիզիկական մերձեցումը ընկած ժամանակահատվածը: Այս դեպքում սուբյեկտը իր երևակայության տիրույթում ստեղծում է ինչպես սիրո օբյեկտը, այնպես էլ ինքն իրեն՝ որպես այդ օբյեկտը սիրողի: Մա սիրո սուբյեկտի ծիսականացման և օբյեկտի ստեղծման որոշակի ձև է: Կին հեղինակները կին կերպարների սիրահարվածության միջոցով են հայտնագործում սուբյեկտիվացման ֆենոմենը:

Միրո համամարդկային արժեքը այս դեպքում ծնվում է մարդու՝ հոգեբանական և սոցիալական ամբողջություն դառնալու կարիքից, որը հաճախ թվում է կեղծ, քանի որ այն ընդամենը երևակայության աշխատանք է, պատրանք, իռացիոնալություն: Հետևաբար, փորձը, որը հատուկ է ինչպես 19-րդ դարին, այնպես էլ ժամանակակից մշակույթին, դիսկուրսիվության և պատմականության տիրույթներում շարունակում է ներագդել կյանքի վրա: Այս տեսանկյունից ռոմանտիկ սերը իրական է, որքանով որ իրական են գաղափարները, որոնք կրում են Միպիլի և Տյուսաբի կերպարները՝ Բուբուլը, Միրանուշը և Մայտան: Միպիլը և Տյուսաբը վեպերի զարգացումները բխեցրել են 19-րդ դարի երկրորդ կեսին Օսմանյան կայսրության հայրիշխանական սոցիումում գործող բարքերից և չափանիշներից, բռնապետական արժեհամակարգից, հայոց ազգային հիմնախնդիրներին առնչվող համընդհանուր շահերից:

Օսմանյան կայսրության փակ հասարակության ավանդական մոդելներին հակադրվում են *սուբյեկտ* և *սուբյեկտիվություն* փիլիսոփայական և մարդաբանական կատեգորիաները, որոնք համապատասխանում էին փոխակերպվող հասարակության պահանջներին, կենտրոնացած էին քաղաքացիական, իրավական, տնտեսական սուբյեկտի

¹⁶ Stendal, նշվ. աշխ.:

ստեղծման վրա, որը կարող էր պատասխանատվություն ստանձնել ոչ միայն սոցիալական գործընթացի, այլև սեփական կյանքի համար:

НАИРА АМБАРЦУМЯН, СИРАНУШ ПАРСАДАНЯН – *Философско-антропологическая интерпретация романтической любви в произведениях Србуи Тюсаб и Сипил.* – Цель исследования – показать литературные тексты эпохи романтизма на примере романов западноармянских писательниц второй половины 19 века Србуи Тюсаб («Майта», «Сирануш», «Араксия, или Гувернантка») и Сипил («Сердце девушки»), которые сформировали культурологический феномен философско-антропологической интерпретации романтической любви, а также подчеркнуть глубинную связь романтической любви и романтического дискурса с потребностями и возможностями самореализации личности. Задача исследования – с помощью философско-антропологического дискурса выявить все те изменения, связанные с романтической любовью, которые материализовались и реализовались в романах западноармянских писательниц и присутствуют во всей многомерности семасиологических категорий *субъект* и *субъектность*. Актуальность исследования обусловлена новым прочтением романтического романа второй половины 19 века в условиях вызовов современности, что в историко-культурном контексте противопоставляется традиционной аналитической модели. Романтические тексты (романы) западноармянских писательниц – Србуи Тюсаб и Сипил – были изучены нами в рамках философско-антропологической поэтики с учетом контекста женской эмансипации, социально-культурных и концептуальных трансформаций, а также с точки зрения семиотического анализа.

Ключевые слова: *Србуи Тюсаб, Сипил, романтическая любовь, западноармянские писательницы, философско-антропологическая интерпретация, субъект, субъектность*

NAIRA HAMBARDZUMYAN, SIRANUSH PARSADANYAN – *Philosophical-Anthropological Interpretation of Romantic Love in the Works of Srбуhi Tyusab and Sipil.* – The aim of the study is to show the literary texts of the Era of Romanticism, as opportunities for the formation of a philosophical-anthropological interpretation of romantic love and a cultural phenomenon, using the example of the novels “Mayta”, “Siranush”, and “Araksia or the Teacher” by Srбуhi Tyusab and “A Girl’s Heart” by Sipil, Western Armenian female authors who lived and created in the second half of the 19th century, as well as to emphasize the deep connection of *romantic love* and *romantic discourse* with the needs and possibilities of an individual’s self-realization. The problem of the study is to emphasize all the changes conditioned by expressions of romantic love, which are materialized and realized in the novels of Western Armenian female authors and are present in the multidimensionality of the semantic domains of the categories of *subject* and *subjectivity*, through the philosophical-anthropological discourse. The relevance of the study is conditioned by the discovery of the romantic novel of the second half of the 19th century in a new way in the domain of modern challenges, which is opposed to the traditional analysis model in the historical and cultural context. We have studied the romantic texts (novels) of Western Armenian female authors, Srбуhi Tyusab and Sipil, in the context of philosophical-anthropological depiction and women’s emancipation from the perspectives of socio-cultural and world-view transformations, as well as symbolism.

Key words: *Srбуhi Tyusab, Sipil, romantic love, Western Armenian female authors, philosophical-anthropological interpretation, subject, subjectivity*

ԲԱՆԱՍՏԵՂԾ ԳՐԱԿԱՆԱԳԵՏԸ

ԺԵՆՅԱ ՔԱԼԱՆԹԱՐՅԱՆ

Հողվածում քննության են առնվում Վահագն Դավթյանի գրական-քննադատական հոդվածները, որոնք վերաբերում են հայ և տարբեր ազգերի գրողների (բանաստեղծների) և պարունակում են ընդհանրական նշանակություն ունեցող տեսական հարցադրումներ: Այդ հարցադրումները վերաբերում են պոեզիայի էությանը, ավանդույթի և նորարարության անխզելի կապին, գրականության ազգային բնույթին, թարգմանության խնդրին և այլն: Դավթյանի հոդվածները երկվյալն են, որովհետև մի կողմից բացահայտում են անհատ գրողի առանձնահատուկ կողմերը, մյուս կողմից՝ գրականության ընդհանուր օրինաչափությունները:

Դավթյանի գրականագիտական հոդվածների հետ սերտորեն առնչվում են ընդհանրապես մշակույթի և արվեստի տարբեր ճյուղերի՝ նկարչության, երաժշտության, թատրոնի ու ռեժիսուրայի, ճարտարապետության ու քանդակագործության վաստակաշատ գործիչների դիմանկարները՝ նրանց արվեստի նրբորեն դիտված հատկանիշների ընդգծմամբ: Նմանատիպ հոդվածները հակադարձ էֆեկտով ստեղծում են հենց Դավթյան արվեստագետի դիմանկարը:

Բանալի բառեր – *պոեզիա, ներդաշնակություն, ենթագիտակցություն, բնանկար, ավանդույթ, նորարարություն, ազգային, համամարդկային, չափանիշ, թարգմանություն*

Հարուստ ու բազմազան է Վահագն Դավթյանի գրական ժառանգությունը: Այն պայմանականորեն կարելի է բաժանել երկու հիմնական մասի՝ պոեզիա՝ իր ժանրային բազմազանությամբ և, գրողի իսկ բնութագրումով՝ զուգահեռ ճանապարհ: Ջուգահեռ ճանապարհն իր հերթին բազմաձյուղ է՝ գրական-տեսական ու քննադատական հոդվածներ, դիմանկարներ, գրախոսություններ, հրապարակախոսություն, հուշեր: Անշուշտ, թվարկածը չի սպառում գրողի գործունեության ամբողջ ցանկը՝ թարգմանություն, խմբագրական աշխատանք և թերևս այլ հասարակական պարտականություններ: Այս հոդվածում մեզ հետաքրքրողը բանաստեղծի գրական-քննադատական, կամ, ավելի ընդհանրական իմաստով՝ գրականագիտական ժառանգությունն է¹: Այդ ժառանգությունն ինքնատիպ է, կրում է հեղինակի անհատականութ-

¹ Այս խնդրին մասնակի անդրադարձ կա մեր «Վահագն Դավթյան» (Եր., 1991թ.) գրքում: Այլ հարցադրումներով ու չափանիշներով Դավթյանի քննադատական ժառանգությանն անդրադարձել է նաև Դ. Գասպարյանն իր «Վահագն Դավթյան. կյանքը և ստեղծագործությունը» (Եր., 2007) մենագրության մեջ:

յան կնիքը, ու ամեննին էլ զարմանալի չէ, որ ակադեմիկոս Վահագն Դավթյանի գրականագիտությունը ակադեմիական բնույթ չունի, բայց դա բնավ էլ չի նշանակում, թե այն գիտական չէ: Դավթյանն առանձնա- նում է այն իմաստով, որ իր հոդվածներում տողատակերին հղումներ չի անում, ինչպես նաև՝ բառացի մեջբերումներ: Հեղինակությունների տեսակետներին նա դիմում է այն դեպքում, երբ դրանք լիովին համա- հունչ են իր ըմբռնումներին: Բայց այդ ըմբռնումներն էլ իրենց հերթին ձևավորվել են ազգային ու համաշխարհային հարուստ գրականության յուրացման, սեփական կենսափորձի, այսինքն՝ անցած գեղարվեստա- կան ճանապարհին ձեռք բերած գիտելիքների, ինչպես նաև գրական մեծ անհատականություններից՝ Բլոկից, Թումանյանից, Վարուժանից, Չարենցից և բազում այլ մեծերից առած դասերի հիման վրա: Ըստ այդմ կարելի է ասել, որ Դավթյանի գեղագիտությունը սնվում է տարբեր ա- կունքներից և զարգանում է ժամանակին զուգընթաց: Այսքանով հան- դերձ Դավթյանն ունի գրականագետի սեփական չափանիշները: Սու- րեն Աղաբաբյանին նվիրված հոդվածում նա գրում է. «...լավագույն գրականագիտությունը, լավագույն քննադատությունն այն է, ուր գի- տությունն ու արվեստը ներդաշնակորեն միաձույլ են հանդես գալիս, բացահայտվում մեկը մյուսով»²: Այդ սկզբունքը, որով նա առաջնորդ- վում է Աղաբաբյանին բնութագրելիս, լիովին համապատասխանում է հենց իրեն: Սա նշանակում է, որ գրականագետ Դավթյանի մեջ միշտ առկա է բանաստեղծը, որն օգնում է արվեստով ձևակերպել իր գիտա- կան մտքերը և չմնալ խստագույն ակադեմիզմի շրջանակներում: Ավե- լորդ չի լինի հիշեցնել գրականագետին ներկայացվող Դավթյանի մի պահանջ ևս, որով առաջնորդվում է նաև ինքը. «Գրականագետն ու քննադատը այն ժամանակ է միայն կարողանում ազդեցություն ունե- նալ գրական ընթացքի ու երևույթների վրա, երբ հանդես է գալիս ոչ թե սոսկ որպես գրական երկի կամ երևույթի բարեխիղճ մեկնաբան ու տարեգիր, այլ որպես սեփական ասելիքը, աշխարհին ու երևույթներին նայելու սեփական դիտակետը, սեփական հայացքն ունեցող կրքոտ ստեղծագործող» («ԻՄԲ», էջ 562): Սրանք կարծես մեզ ուղղված ուղերձ- ներ են՝ ճիշտ հասկանալու իր գրականագիտական ժառանգությունը:

Արդ, ի՞նչ գրական խնդիրներ է շոշափում Վահագն Դավթյանը:

Կան հարցադրումներ, որոնք առանցքային են և մշտապես զբա- դեցնում են նրան ու դրսևորվում են գրեթե բոլոր հոդվածներում, և կան դիտարկումներ, որոնք թեև շատ ուսանելի, բայց կապված են այս կամ այն գրողի առանձնահատկությունների բացահայտման հետ: Երկու դեպքում էլ գրողը ձգտում է ընդհանրացման, փնտրում է օրինաչափը:

Վահագն Դավթյանի հոդվածներում հիմնական խնդիրը, որ ունի առաջին հերթին տեսական հետաքրքրություն, ոչ պատահականորեն,

² Վահագն Դավթյան, Ի սկզբանե էր բանն..., Եր., «Խորհրդային գրող», 1989, էջ 560: Այս գրքից արված հետագա քաղվածքների էջերը կնշվեն տեղում՝ «ԻՄԲ, էջ...» ձևով:

պոեզիան է: Դա ըստ էության չավարտվող թեմա է, և յուրաքանչյուր նոր հոդվածում Դավթյանը գտնում է մի նոր հավելյալ հատկանիշ, որն ամբողջացնում է նախորդ դիտարկումները, իսկ ամեն մի բանաստեղծի դիմանկարի մեջ նա հայտնաբերում է տվյալ անհատականության հետ կապված պոեզիայի դրսևորման մի նոր առանձնահատկություն: Այս առումով կարելի է ասել, որ պոեզիայի վերաբերյալ Դավթյանի դիտարկումները չեն ավարտվում որևէ մեկ հոդվածով, այլ ունեն շարունակական բնույթ: Դավթյանի համար պոեզիան ամենից առաջ սեր է, բայց դա շատ ընդհանուր պատկերացում է, ապա գալիս է հաջորդ միտքը՝ պոեզիան ներդաշնակության հասնելու կրքոտ ձգտում է: Նրա այս ըմբռնումը ավելի հարազատ է Բլոկի բնութագրությանը, թե պոեզիան ձգտում է ներդաշնակություն գտնել զգացմունքների աններդաշն փոթորիկների մեջ: Պոեզիան չունի միանշանակ և բոլորին բավարարող բնութագրություն, որովհետև բանաստեղծներից յուրաքանչյուրի համար այն տարբեր է, բխում է անհատականության ներքին էությունից, մեկի համար ճակատագիր է, մյուսի համար՝ գաղտնիք, երրորդի համար՝ գտնումի հրաշք ու հաճույք: Պոեզիայի համար Դավթյանն ունի մշտապես թարմացվող բանաձև: Իսկական պոեզիան, ըստ բանաստեղծի, ծնվում է ահեղ իրականության հետ բախվելիս, որի արդյունքը ողբերգական գեղեցկությունն է: Բանաստեղծների փորձը հուշում է Դավթյանին, որ բոլոր մեծերի ստեղծագործական սխրանքը նրանց անձնական տառապանքով ու ողբերգությամբ է ուղեկցվել: Դա հաստատվում է նրանց կենսագրությամբ: «Չլիներ արքորական Դանթեի ողբերգությունը, համաշխարհային պոեզիան հազիվ թե նվաճեր այն խորություններն ու բարձրությունները, որ նվաճված են «Աստվածային կատակերգության» մեջ: Եթե Դոստոևսկին «Մեռյալ տնից» դուրս չբերեր տառապանքի իր փորձը, հազիվ թե հասներ մարդկային ոգու ամենաթաքուն անկյունները թափանցելու և լուսավորելու կարողությանը» («ԻՄԲ», էջ 42-43): Իհարկե, հասկանալի է, որ չպետք է կենտրոնանալ հատկապես ողբերգության ու տառապանքի վրա, խոսքը վերաբերում է կյանքի ճանաչողությանը և զգացմունքի ապրված լինելուն: Անկախ ընտրված թեմայից ու բովանդակությունից, բանաստեղծությունը, ըստ Դավթյանի, պետք է ապրված զգացում լինի, այլապես կեղծ կստացվի: «Բանաստեղծությունը շատ մատնիչ բան է,- գրում է նա,- որքան ուզում ես պաճուճիր, խոր երևալու ակնկալությամբ, որքան ուզում ես պղտորիր ու խճողիր, միևնույն է, ոչինչ չես թաքցնի, եթե ցավ չունես ու ցավ ես խաղում, կմատնի, եթե չես սիրում ու սիրահարի կեցվածք ես ընդունում, մեկ է, ոչ մեկին չես խաբի» («ԻՄԲ», էջ 180): Ըստ Դավթյանի՝ բանաստեղծությունը չունի միանշանակ ու ավարտված բանաձևային բնորոշում: «Այսքան տարի, բանաստեղծության հետ գործ ունենալով, միայն մոտավորապես գիտեմ, թե ինչ է բանաստեղծությունը», - գրում է նա («ԻՄԲ», էջ 173): Չգիտենալով հանդերձ՝ այնուամենայնիվ, նա տա-

լիս է մի քանի բնութագրություններ: «Ինձ համար իսկական բանաստեղծություն է այն գործը, որ առաջին իսկ տողերով առնչվելով սրտիս մեջ եղած ինձ համար իսկ անհայտ ինչ-որ լարի, ստիպում է, որ այն թրթռա» (նույն տեղում, էջ 174): Ի վերջո, բանաստեղծությունը, որքան էլ ունենա ընդհանրացնող բովանդակություն կամ փոխանցվող հույզեր, անհատական հուզական ապրում է, որտեղ կարևոր դեր ունի ստեղծագործող անհատի ենթագիտակցությունը: Այդ է պատճառը նաև, որ, Դավթյանի կարծիքով, իսկական, հատկապես քնարական ու մեղեդային բանաստեղծությունը անհնար է պատմել: «Դե եկ ու վերապատմիր, ասենք, Տերյանի «Աշնան մշուշում շշուկ ու շրշում»... կամ Մեծարենցի «Գիշերն անուշ է, գիշերն հեշտագին» բանաստեղծությունները» (ն.տ., էջ 170): Այնուամենայնիվ, ոգեղեն լինելով հանդերձ բանաստեղծությունը խառն հույզերի անկապ միացություն չէ, այլ տրամաբանական ու միաժամանակ ներդաշնակ կառույց: Դավթյանը գրում է. «...ճշմարիտ բանաստեղծության նախանշաններից մեկը, այսուհանդերձ գտնում եմ, որ այնտեղ ամեն ինչ պիտի ներքին ճշգրտություն ունենա, այո, բանաստեղծության պես վերացական երևույթը մաթեմատիկական թաքուն ճշգրտություն պիտի ունենա, այնքան թաքուն, որ աննկատելի լինի» (ն.տ., էջ 181): Դավթյանի բնութագրությունները արտաքին, այսինքն՝ տեսողական ու լսողական տպավորությունների արդյունք չեն, այլ ապրված զգացումների բանաձևում: Եվս մի կարևոր դիտարկում՝ հասկանալու համար բանաստեղծության կարևոր առանձնահատկություններից մեկը: «...Իմ կարծիքով հենց կատարյալ բանաստեղծությունն այն է, ուր ոչ մի տող դուրս չի մղվում ընդհանուր հյուսվածքից, ոչ մի պատկեր չի շեշտում իր արտասովորությունը, ոչ մի համեմատություն այք չի ծակում, ոչ մի հանգ ավելի բարձր չի հնչում, քան կողքինը, այլ խոսքով, ամեն ինչ ներդաշնակ է, ինչպես բնական հոսքը» (ն.տ., էջ 183): Եթե կողք կողքի դնենք բանաստեղծության վերաբերյալ Դավթյանի բոլոր բնութագրությունները, կստանանք գրական տվյալ սեռի գրեթե ամբողջական պատկերը, գրեթե, որովհետև հարցադրումների ընտրությունը այս պարագայում պայմանավորված է բանաստեղծ-գրականագետի նախասիրությամբ: Բովանդակային, լեզվական ու ազդեցության առումով պոեզիան չի կարող ազգային չլինել, և այստեղ ազգայինն ունի իր բաղադրիչները: Նախ՝ լեզվի խնդիրը: Ոչ միայն բանաստեղծի, այլև հայ մարդու արժանիքները Դավթյանը չափում է մայրենի լեզվի ու մշակույթի նկատմամբ ունեցած վերաբերմունքով. «... ինձ համար ամենից առաջ յուրաքանչյուր մարդու՝ մտավորական լինի, թե շարքային աշխատավոր, վերաբերմունքն է մայրենի լեզվի, մշակույթի, ժողովրդի դարերով կուտակած բարոյական արժեքների նկատմամբ, որովհետև դրանք են հիմքերի հիմքը և ապագայի գրավականը» (ն.տ., էջ 267): Դավթյանը քաղբենիներ է անվանում նրանց, ովքեր իրենց հայրենիքում, պետական հիմնարկներում և

այլուր գերադասում են խոսել ոչ հայերեն. իր ժամանակ դա ռուսերենն էր, հիմա մոդայիկ է անգլերենը: Դավթյանն այս հարցը ավելի հանգամանակից է շոշափում Վարուժանին նվիրված հոդվածներից մեկում: Եվ դա արդարացի է, քանի որ Վարուժանը, կարելի է ասել, սպառնիչ պարզաբանում է խնդիրը. «Մեզի համար, որ զանազան սպառնալիքներու տակ ինկած փոքր ազգ մըն ենք, որ պետք ունինք մեր բոլոր տոհմային հատկությունները կեղրոնացնելու ու զարգացնելու, մեզի համար կըսեմ՝ մեր լեզուն մատի ծայրերով բռնելը խիթայի ոճիր մը կը համարվի» (ն.տ., էջ 87): Ազգային գրականություն ստեղծելու առումով բոլոր ժամանակների համար հստակ է հնչում Վարուժանի հատկապես «Մեր գրականության մեջ արվեստը հայ պետք է ըլլա, իսկ անոր հատակը կամ հիմը կազմող գաղափարը՝ համամարդկային» (ն.տ., էջ 88) բանաձևը: Վարուժանին նվիրված դիմանկարում, վերլուծելով նրա ստեղծագործական առանձնահատկությունները, Դավթյանը նկատում է. «Անձնականից դեպի ազգայինը, ազգայինից դեպի համամարդկայինը. այսպիսին էր Վարուժանի հոգեբանական ու ստեղծագործական ուղին» (ն.տ., էջ 82): Վարուժանի օրինակով այդ ուղին է Դավթյանն առաջարկում ստեղծագործող անհատին: Նրա համար ազգայինը ոչ այնքան նպատակ է, որքան անհրաժեշտ նախադրյալ՝ մարդուն ու համամարդկայինին հասնելու համար: Ինչ խոսք, որ համամարդկային գաղափարը ազգայինի միջով է անցնում, արքիտմա է, որ չկա վերացական համամարդկայնություն արվեստի բնագավառում: Հանրաձանոթ այս ձևավորումներին Դավթյանը հավելում է սեփական դիտարկումը, այն է՝ «...բանաստեղծները ոչ թե այն պատճառով են մեծ, որ ազգային են, այլ ուղիղ հակառակը՝ մեծ են, դրա համար են ազգային» (ն.տ., էջ 41): Մարդ - ազգություն - համամարդկայնություն ուղեգիծը Դավթյանը տեսնում է բոլոր մեծ բանաստեղծների՝ այդ թվում՝ Պետրոս Դուրյանի, Համո Սահյանի և այլոց ստեղծագործություններում: Ազգայինի դրսևորումը Դավթյանը փնտրում և գտնում է ոչ միայն քնարական կամ պատմական հերոսների մեջ, այլ նաև բնության պատկերներում, որի հանգույն ձևավորվում է մարդու կերպարը, հայրենի հողում, որը լիցքավորում է մարդու գիտակցական ու հուզական աշխարհը: Առաջին հայացքից սա կարող է նույնիսկ անհավանական հնչել: Կարելի է մտածել, որ, ի վերջո, մեր մոլորակն ամեն տեղ նույն բաղադրությունն ունի՝ հող, քար, ջուր, լեռներ, հարթավայր, անտառ ու անապատ: Բայց, Դավթյանի ընկալմամբ, հայրենիքում երկրաբանական այդ նմանատիպ երևույթներն ունեն այլ բովանդակություն, ներծծված են տարբեր հիշատակներով, լեզենդներով և առասպելներով ու արթնացնում են տարբեր գուտ ազգային ոգի: «Հայրենիքն ստեղծվում է այնպիսի հոգևոր գումարելիներից, որոնց թիվն անհամար է և սահմանն անչափելի: Այդ գումարելիների մեջ ամենամեծերից մեկը թերևս պոեզիան է՝ սովյալ ժողովրդի էպոսը, առասպելը, լեզենդները, երգը, բանաստեղ-

ծությունը: Գալիս են սերունդները և տեսնում, որ իրենց բնակավայրի հողն ու ջուրը իմաստավորված են, կավն ու քարը՝ շնչավորված, որ տափաստաններն ու անտառները, անդունդներն ու հովիտները լիքն են առասպելներով, լեգենդներով, երգերով, լիքն են ոգեղեն ու հոգեղեն խորհուրդներով, և զգում են, որ իրենց բնակավայրը սուկ աշխարհագրական հասկացողություն չէ, այլ հոգևոր հայրենիք»³: Ինքնին հասկանալի է, որ մատնանշած այս երևույթը միայն հայ գրողի ու հայ ազգային ոգուն չի վերաբերում, այլ ունի ընդհանրական նշանակություն:

Վ. Դավթյանի ընկալմամբ՝ պոեզիան բնության սուկ վերարտադրողը չէ, և բնությունն էլ սուկ նկար, պատկեր կամ հովվերգություն չէ: Նա հիշեցնում է Արկադի Գայդարի այն միտքը, թե գրողները հաճախ իրենց մանկական գրողներ են ձևացնում, որպեսզի շատ լուրջ ու կարևոր բաներ ասեն: Այդ միտքը նա կիրառում է Համո Սահյանի կապակցությամբ գրելով. «Համո Սահյանն էլ է հաճախ «խորամանկորեն» իրեն բանակարիչ ձևացնում շատ մեծ, բարդ ու լուրջ բաներ ասելու, մարդկային ողբերգություններ բացելու համար» («ԻՄԲ», էջ 142): Ամեննին չնսեմացնելով բանակարի գեղագիտական նշանակությունը՝ Դավթյանը գրում է. «...այնուամենայնիվ, կարծում եմ, որ Սահյանի հիմնական ժանրը բանակարը չէ, այլ դիմանկարը: Քարափի դիմանկար է դա ու պապի, եզան դիմանկար է դա ու մասրենու, իսկ ընդհանրացման մեջ՝ Հայաստանի, հայ մարդու, հայ ժողովրդի հավաքական դիմանկարը» (ն.տ., էջ 142): Եվ այդ ոչ հավակնոտ «դիմանկարները» Դավթյանը համեմատում է Գեղարդի վանքի առյուծների կամ Աղթամարի և այլ վանքերի զարդաքանդակների հետ: Այսինքն՝ ազգային ունի հարուստ ակունքներ և դրսևորման բազմազան ձևեր:

Բնության հետ կապված ևս մի դիտարկում: Բնությունը բանաստեղծի համար ամենից առաջ ներշնչանքի, գեղեցիկի ընկալման, պատկերավոր մտածողության հարուստ աղբյուր է: Իհարկե, բնության գեղագիտական դերի մասին արտահայտվել են ինչպես տարբեր ժողովուրդներ, այնպես էլ տարբեր նախասիրություն ունեցող արվեստագետներ՝ կլասիցիստները, ռոմանտիկները, իմպրեսիոնիստները... բայց յուրաքանչյուր ժամանակաշրջան յուրովի է իմաստավորում այդ խնդիրը: Դավթյանն իր հերթին հարցին նայում է այլ տեսանկյունից. «Ես չեմ հավատում, թե ասֆալտի վրա կարող են բանաստեղծներ և առհասարակ արվեստագետներ ծնվել: Ճշմարիտ արվեստագետների կնքահայրը բնությունն է, խոստովանատեղին՝ լեռը, անտառը, դաշտը, կիրճը, քարանձավը, իսկ ժողովրդի բարոյականությունն ու աշխատանքային ազնվությունը՝ խոստովանահայրը: Վերհիշեցեք մեր արվեստի մեծությունների կենսագրությունները և կհամոզվեք դրանում» («ԻՄԲ», էջ 278): Իհարկե, Դավթյանի այս ձևակերպման մեջ առաջին տեղում երևույթը

³ Վահագն Դավթյան, Չուգահեռ ճանապարհ, Եր., 1976, էջ 169: Այս գրքից հետագա քաղվածքների էջերը կնշվեն տեղում՝ «ՁՃ, էջ ...» ձևով:

հուզականորեն ընկալող բանաստեղծն է, քան տեսականորեն մտածող գրականագետը, այսուհանդերձ, դեռևս ոչ ոք չի ժխտել բնության դերը արվեստի՝ մասնավորապես այնպիսի ճյուղերում, ինչպիսիք են երաժշտությունը, նկարչությունը, բանաստեղծությունը և այլն:

Մյուս կարևոր խնդիրը, որ Դավթյանը հաճախ և տարբեր առիթներով շեշտադրում է, ավանդույթի և նորարարության հարաբերությունն է: Ընդհանրապես, անկախ Դավթյանի այս հարցադրումից, հիշեցնենք, որ գրականության՝ երկար դարերի ընթացքում ձգվող շղթան, որ օղակօղակ հանգուցվում է իրար, երբեմն պատմության անկումային պահերին կտրվել է, բայց շարունակության պահին վերականգնվել է կապը և առաջընթացը: Այսինքն՝ ավանդույթի ուժը չի անհետանում: Դավթյանն այն համոզմունքն ունի, որ յուրաքանչյուր գրող պետք է քաջատեղյակ լինի իրենից առաջ ստեղծված մշակույթին: Նա գրում է. «Չեմ հիշում, մեծերից ով է ասել, թե վարդի մասին բանաստեղծական նոր խոսք ասելու համար պիտի իմանաս վարդի մասին մինչ այդ գրված բոլոր բանաստեղծությունները: Նաև ավելացրել է, կարելի է, իհարկե, վարդի մասին նոր խոսք ասել, քեզանից առաջ եղածները չիմանալով, բայց այդ դեպքում պիտի հանճարեղ լինես»⁴: 1965 թվականի տարեվերջին Դավթյանը հանդես եկավ «Ժամանակակից պոեզիան և ռեալիզմի նախահիմքերը» հոդվածով, որը առիթ դարձավ երկար ձգվող մի բանավեճի, և որի ընթացքում, կարելի է ասել, առաջնությունը խլեց Պ. Սևակը՝ «Հանուն և ընդդեմ ռեալիզմի նախահիմքերի» հոդվածով: Պատկերավոր ասած՝ այստեղ «առաջին մեղքը» Մարտիրոս Մարյանինն էր, որին վկայակոչում է Դավթյանը՝ արվեստի նախնական ու պարզ ձևերին վերադառնալու առաջարկի առիթով: Իր արվեստի առանձնահատկությունների մասին խոսելով՝ Ս. Մարյանն ասում է. «Ես սկսեցի որոնել ավելի պարզ ձևեր ու գույներ, իրականության գեղանկարչական էությունը արտահայտելու համար»: Մարյանն առաջ է քաշում պարզ ու հստակ ձևերի միջոցով նախահիմքերին հասնելու անհրաժեշտության հարցը, որովհետև այդ պարզ կոչվող ձևերը ձեռք են բերվել երկար որոնումների ընթացքում և հայտնաբերել են էականը: «Եզրիպտական բուրգի հասարակ ձևի մեջ,- գրում է նա,- նիրհում է երբևէ ստեղծված ճարտարապետական ձևերից ամենաամուրը և համապատասխանում է բնիկ լեռների ձևերին: Դա մտքի աշխատանքի ու բնության կապի մի հանճարեղ մարմնացում է՝ հսկայական, ահռելի, հատկապես երբ տեսնում ես նրա ոտքերի տակ, Նեղոսի ափին կուչ եկած գյուղակը»⁵: Ազդակ ստանալով Մարյանից՝ Դավթյանը ևս առաջարկում է իր ժամանակի պոեզիան ազատել ավելորդ ծանրաբեռնվածությունից և մոտեցնել Սողոմոնի «Երգ երգոցին», 20-րդ դարի բանաստեղծ Ռաբինդրա-

⁴ **Վահագն Դավթյան**, Լույս առավոտի, Եր., «Սովետական գրող», 1984, Առաջաբան (էջակալված չէ):

⁵ **Մարտիրոս Մարյան**, Արվեստի մասին, կազմեցին՝ Վ. Հ. Մաթևոսյան, Յու. Գ. Խաչատրյան, Եր., «Սովետական գրող», 1986, էջ 121:

նաթ Տագորի «Պարտիզպանին» կամ էլ հայ բանավոր գրականության նմուշներին «Արտաշես և Սաթենիկ»-ի առասպելին կամ «Վահագնի երգին»: Նախկին պարզ ձևերին վերադառնալու փորձեր նա տեսնում է Նարեկացու տաղերում, Միամանթոյի ու Վարուժանի բանաստեղծություններում: Հարց կարող է առաջանալ՝ արդյոք այս կերպ Դավթյանը չէ՞ր առաջարկում վերադարձ դեպի միջնադար, ինչպես փորձում էին բացատրել ոմանք: Անկասկած՝ ոչ: Եթե հնագույն ժամանակներից ձևավորված և մեզ հասած ավանդները ձուլվում կամ ներդաշնակորեն զուգադրվում են ժամանակակից սկզբունքներին, ապա ստեղծվում է ազգային, բայց և ժամանակակից ինքնատիպ արվեստ: «Այսպիսով, ինչպես ցույց են տալիս փաստերը, - գրում է Դավթյանը, - 20-րդ դարի մեր բոլոր խոշոր արվեստագետները՝ Սարյանն ու Չարենցը, Միամանթոն ու Կոջոյանը, Վարուժանն ու Տերյանը, նրանք, որ նոր, ժամանակին համահնչուն խոսք են ասել և դուրս եկել ազգային շրջանակներից, այդ բանն արել են համարձակորեն գնալով հենց դեպի ազգային մշակույթի նախահիմքերը, ուր այնքան առատ են այդ գույներն ու ձևերը, որոնք պարզ են ու ամուր: Դա միաժամանակ նրանց տարել է դեպի մի այնպիսի ինքնատիպություն, այնպիսի ազգային ձևեր, որոնք, ինչպես Չարենցն էր ասում գրողների առաջին համագումարի ամբիոնից, «արմատապես տարբեր» են մյուս բոլոր արվեստագետների գործադրած ձևերից» (ԶՃ, էջ 285): «Հանուն և ընդդեմ ռեալիզմի նախահիմքերի» իր արձագանք հողվածում Սևակը, մասամբ համաձայնելով հանդերձ նախահիմքերի գաղափարին, այնուամենայնիվ, շեշտադրում է հատկապես գիտության զարգացման, ինչպես ինքն է ասում՝ հարաբերակալության տեսության, քվանտային ֆիզիկայի և այլ գիտական նոր նվաճումների փաստը՝ առաջադրելով այդ ամենին համապատասխան բանարվեստի նոր միջոցներ: Բանավեճի, որ ժամանակին շատ եռանդ է իլել շատերից, մեջ չմտնելու համար ցանկանում ենք այստեղ հիշատակել Մարտիրոս Սարյանի մի ուրիշ միտք, որ, չվերաբերելով հանդերձ սույն բանավեճին, պատասխանում է Սևակի հարցին: «Ասում են՝ մեր դարը գիտության դար է, - գրում է Սարյանը: - Բայց մի թե՛ մարդկության պատմության մեջ կարելի է հիշել որևէ դար, որ գիտության դար եղած չլինի: Շոգեքարշն իր դարի համար նույնպիսի հրաշք էր, ինչպես ատոմային էներգիան մեր դարի համար: Ո՛չ, չկա և երբեք չեն եղել գիտության դարեր և արվեստի դարեր առանձին-առանձին: Միայն սրանց միասնությունը, փոխկապակցությունն են միշտ գծել դարաշրջանի կերպարը»⁶:

Կարծես թե ավանդույթի հետ հաշվի նստելու խնդիրն այսպես թե այնպես հասկանալի է, ավանդույթից հրաժարումը՝ աղետաբեր՝ ըստ Դավթյանի: Իսկ նորարարությունը, ո՛վ և ինչպե՛ս է նորարար: Մա նույն հարցի շարունակությունն է: Դավթյանը խոստովանում է, որ այդ

⁶ Մարտիրոս Սարյան, նշված գիրքը, էջ 37:

հարցի վերաբերյալ պատրաստի դեղատոմս չունի, այնուամենայնիվ, հակված չէ ոչ միայն ավանդականն ու նորը հակադրելու, այլև համոզված է, որ գրեթե բոլոր նորարարները, այսպես թե այնպես, հենվում են ավանդականի վրա: Լավագույն օրինակը նա համարում է Չարենցին, սակայն Չարենցի նորարարությունը կարծես թե չի համընկնում ընդունված չափանիշներին: «Բանն այն է,- գրում է Դավթյանը,- որ նորարարությունն ասելով մենք հաճախ հասկացել ու հասկանում ենք հնի, ավանդականի, մինչ այդ եղածի ժխտում: Մինչդեռ Չարենցի գրական գործն ու փորձը, անկախ նրա դեկլարացիաներից ու հայտարարություններից, բոլորովին այլ բան են ապացուցում» («ԻՄԲ», էջ 115): Եթե մի ուրիշը այդքան դիմեր ավանդականին, ապա նա անպայման կմեղադրվեր էպիգոնության մեջ: Դավթյանը թվարկում է Չարենցի այն բոլոր գործերը, որոնց ակունքները նշմարելի են: «Վաղ Չարենցի վրա հսկում է Տերյանը, Բլոկն է հսկում, հսկում են սիմվոլիստները: «Դանթեական առասպելի» մթնոլորտից արդեն Թումանյանի, հատկապես «Դեպի անհունը» պոեմի, շունչն է զգացվում», «Տաղարանի» հասցեն առավել քան որոշակի է»: Այդպես նաև մնացած գործերից շատերը: Այնուամենայնիվ, Չարենցը մեծ նորարար է, և այդտեղ ոչ մի պարադոքս չկա: «Այդպիսի նորարարության համար,- գրում է Դավթյանը,- նախ պիտի ունենալ հսկա տաղանդ, ունենալ բանաստեղծական այնպիսի ոգի, որի բռնկումների մեջ հինը վերածուլվի, շողա բոլորովին նոր փայլով, որ ամեն ինչի դիպչելիս շնչավորի ու դարձնի իրենը: Չարենցը հենց այդպիսի տաղանդ էր ու այդպիսի ոգի» (ն.տ., էջ 116): Առհասարակ Դավթյանը բազմիցս է անդրադարձել Չարենցին՝ մերթ համոզմունք հայտնել, որ նրա մեջ միաժամանակ մի քանի բանաստեղծ են ապրում, մերթ էլ գրել, որ Չարենցն «իր բանաստեղծական գործությամբ ու բազմազանությամբ եզակիներից է աշխարհում»:

Ավանդականի ու նորի համադրության իմաստով նա բերում է նաև Համո Սահյանի օրինակը: Իր ապրած ժամանակն իբրև մեկնակետ ընդունելով՝ Դավթյանը հայտարարում է, որ վերջին 50-60 տարիների ընթացքում մեր պոեզիայում հիմնականում իշխել են երկու ուղղություններ՝ թումանյանական-խսահակյանական և տերյանական- չարենցյան: Համո Սահյանին հաջողվում է զուգահեռ ընթացող այդ ուղղությունները միացնել. «Նա իր ստեղծագործության մեջ կարողացավ հասնել այդ երկու ավանդների ներդաշնակ միասնությանը, որի արդյունքը եղավ մի շատ բնական ինքնատիպություն, մի նոր որակ» (ն.տ., էջ 20): Ի վերջո, Դավթյանը հանգում է այն եզրակացության, որ նորարարությունը հատուկ բանաձև չունի, դա նախ և առաջ անհատականության ու ոճի խնդիր է, և որքան մեծ է անհատականությունը, այնքան մեծ է նրա նորարարությունը, և, վերջապես, «ամեն մի իսկական բանաստեղծ նորարար է»:

Չուտ տեսական հարցեր շոշափող հողվածների հազվադեպ կարելի է հանդիպել Դավթյանի մոտ, բայց նրա գրեթե բոլոր հողվածները,

դիմանկարները, գրախոսություններն աչքի են ընկնում տեսական կարևոր հարցերի արծարծումներով, իսկ բանաստեղծական պատկերավոր խոսքը ներքուստ տրամաբանական է ու պատճառաբանված: Գրողներին նվիրված նրա բազմաթիվ դիմանկարները ժանրային առումով որակապես տարբեր են: Որպես կանոն՝ Դավթյանը այս կամ այն գրողի կենսագրական տվյալներն ու ստեղծած գործերը չի հիշատակում դիմանկարներում կամ, ավելի ճշգրիտ, այդ սկզբունքով չի առաջնորդվում: Նա փորձում է իր ներկայացրած գրողների՝ հիմնականում բանաստեղծներից յուրաքանչյուրի տարբերակիչ առանձնահատկությունը շեշտել, մատնանշել այն առանցքային գիծը, որը տիրական է տվյալ գրողի մոտ: Դավթյանը համոզված է, որ իսկական բանաստեղծ լինելու համար բավարար չէ նույնիսկ լավ բանաստեղծություն գրելը: «Հարկավոր է լինել մոլորակ, սեփական օրենքներով ապրող, սեփական մթնոլորտ, սեփական գույներ, լեռներ ու անդունդներ, հովիտներ ու դաշտեր, նաև գաղտնի քարանձավներ ունեցող մոլորակ: Եվ այնքան էլ կարևոր չէ, մեծ է այդ մոլորակը, թե փոքր»⁷: Այս կարևոր խնդիրը պարզելու համար բանաստեղծ-գրականագետը այս կամ այն բանաստեղծի ստեղծագործության վերլուծությունը կատարում է նախապես իր մտքում, իբրև լաբորատոր կամ սև աշխատանք, որի արդեն կշռադատված եզրակացությունն է ներկայացնում ընթերցողին: Օրինակ՝ «Հանճարեղ տրտունջ» հոդվածում բանաստեղծ-գրականագետը Դուրյանի ամբողջ ստեղծագործության իմաստն է կենտրոնացնում ընդամենը մեկ-երկու տողերում: Թեև դիտարկման ելակետը «Տրտունջք» բանաստեղծությունն է, բայց ստորև բերվող քաղվածքը հավասարապես վերաբերում է Դուրյանի ամբողջ ստեղծագործությանը. «Կարծում ենք, որ այս դեպքում դարձյալ մահվան սպառնալիքն էր, մենամարտն էր մահվան հետ, որ եկել էր ոգեկոչելու պատանի բանաստեղծի հոգու գաղտնարաններում ննջող բոլոր ուժերը, ժամանակից շուտ արթնացնելու հանճարը...»⁸ («ԻՄԲ», էջ 49): Թեև Դուրյանն ունի մի շարք գլուխգործոցներ, բայց Դավթյանի ներկայացմամբ «Տրտունջքի» կայծակնային բռնկման լույսերի մեջ է, որ առավել իմաստավորվում ու մեր դեմ իրենց ամբողջ գլխապտույտ խորությունն են բացում նրա մյուս գործերը: «Տրտունջքը» զորավոր մագնիսի նման իր շուրջը հավաքած է պահում» Դուրյանի մյուս ստեղծագործությունները, որոնց, Դավթյանի կարծիքով, կարելի է տալ «Հանճարեղ տրտունջ» վերնագիրը: Մի քանի տեղին և դիպուկ դիտարկումներից հետո Դավթյանն անցնում է համոզիչ ընդհանրացման. «Բայց ոչ միայն ամբողջական, նաև ավարտուն բանաստեղծ է նա», որովհետև «Դուրյանի նման բանաստեղծները մեկ փիլիսոփայությամբ ու մեկ հիմնական ասելիքով են գալիս աշխարհ» («ԻՄԲ», էջ 54-55):

Վարուժանի դիմանկարը մի փոքր ավելի ընդարձակ է ու համեմա-

⁷ Վ. Դավթյան, «Լույս առավոտի», Առաջաբան:

⁸ Նույն հոդվածը տե՛ս նաև «Զուգահեռ ճանապարհ» գրքում:

տաբար հանգամանակից, ու այդպես էլ պիտի լիներ Վարուժանի վաստակի համեմատ: Բայց ընդհանուր առմամբ այստեղ էլ գործում է նույն օրինաչափությունը: Հուշող վերնագրին՝ «Երգ տառապանքի ու գեղեցկության», իհարկե, ոչ անմիջապես, հաջորդում է բանաստեղծի ստեղծագործության ընդհանրացված պատկերը. «Եթե ամեն իսկական ու մեծ բանաստեղծ նման է ինքնուրույն մոլորակի, ապա Վարուժանը մի շատ ինքնատիպ մոլորակ է: Նա կարծես պտտվում է միայն Արեգակի շուրջը և իր առանցքի շուրջը չի պտտվում: Այդ իսկ պատճառով նրա մի կեսը միշտ լուսավորված է արևով, մյուս կեսը միշտ խավարի մեջ է» («ԻՄԲ», էջ 80): Բանաստեղծ-գրականագետի խոսքը պատկերավոր է, արտահայտիչ ու հուզական: Նրա կարծիքով՝ Վարուժանի պոեզիայի լուսավոր կեսում ցորենի ծփուն արտեր են, գեղեցիկ ասպետներ, չքնաղ կանայք, արևելյան բաղնիքներ, իսկ մյուս կեսում մարդկային տառապանքի հրաբուխներ են գործում, արյան լավաներ են հոսում, ու մահն իր խրախճանքն է անում: Եվ լույսի ու խավարի սահմանի վրա մի կողմում երազանքն է կամ իդեալը, մյուս կողմում՝ իրականությունը, նրանք ուզում են խառնվել, բայց դա անհնար է: Սակայն պատկերավոր խոսքի հիմքում Դավթյանի սթափ միտքն է, առողջ տրամաբանությունը, ու նա խոսքի շարունակության մեջ և՛ պատկերավոր, և՛ սթափ հաստատում է իր ասելիքը Վարուժանի բանաստեղծության օրինակներով՝ հրնթացս նոր հատկանիշներ ավելացնելով արդեն ասվածին:

Կարելի է ասել, որ հիմնականում նույն սկզբունքով են գրված Թումանյանի, Իսահակյանի, Չարենցի, Մեծարենցի, Սիամանթոյի, Մահարու, Մահյանի, Բլուկի, Պուշկինի, Պետեֆու, Եսենինի, Մայակովսկու և շատ այլ մեծերի մասին բազմաթիվ հոդվածները: Վերնագրում կամ ընդհանրացված խոսքում ձեռագիրը նույնն է՝ գտնել ու մատուցել առանձնահատուկը, տվյալ գրողի համար բնորոշը: Օրինակ՝ Թումանյանի համար առանձնահատուկը նա համարում է կյանքին բարձրից նայելը. «Հանճարներին բնորոշ նաև այլ նախանշաններ կան, որոնք զարմանալի բնականությամբ գալիս ու սերտորեն առնչվում են Թումանյանին: Եվ այդ նախանշաններից մեկն էլ կյանքին ու աշխարհին բարձրից, աստծո բարձրությունից, օլիմպիական կատարներից նայելու, կյանքն ու աշխարհը իր ամբողջության մեջ տեսնելու և, սակայն, կյանքի բոլոր ողբերգությունների միջով դեպի երազանքն ու համընդհանուր սերը գնալու կարողությունն է» («ԶՃ», էջ 128): Եվ ապա՝ Դավթյանի համար Թումանյանը կատարյալի չափանիշ է, որով որոշվում են նաև մյուսների արժանիքները: Նա գրում է. «Թումանյանը իմ պաշտամունքներից է: Թումանյանի ժամանակակիցների ու նրանցից հետո եկածների հոգեկան առողջությունը ես ակամա չափել եմ Թումանյանի նկատմամբ նրանց վերաբերմունքով» («ԻՄԲ», էջ 123): Մա Թումանյանին է տրված ինքնատիպ գնահատական է: Կարծում ենք, որ նման նմուշ-օրինակները բավարար են գաղափար կազմելու համար Դավթ-

յանի վերլուծական առանձնահատուկ եղանակի մասին: Մա, եթե կարելի է ասել, դեղուկտիվ մեթոդ է, որի դեպքում գրականագետը ընդհանուր օրինաչափության մատնանշումից գնում է դեպի մասնավոր բացահայտումները՝ օրինակներով հաստատելով նախապես իր մատնանշածը:

Ինչ-որ չափով դիմանկարներին մոտ է նրա «Փոքրիկ գլուխգործոցներ» շարքը, որտեղ նա առաջնորդվում է իրեն բնորոշ մի այլ սկզբունքով. մեկ ստեղծագործության խորունկ վերլուծության միջոցով հասնում է մեծ ընդհանրացման: Այս պարագայում բնութագրվող հեղինակի անհատականությունը երևան է գալիս մանրամասների մեջ: Այսինքն՝ Դավթյանը գրողին նայում է տարբեր դիտանկյուններից, և եթե մի պահ համեմատելու լինենք կինոյի հետ, պիտի ասենք՝ հեռու և մոտիկ կադրերով: Հետաքրքրականն այն է, որ ում կամ ինչի մասին էլ գրում է Դավթյանը, մշտապես ձգտում է ընդհանրացման:

Գրականագետ Դավթյանի հետաքրքրությունների շրջանակում է նաև թարգմանության խնդիրը, և դա ամեննին էլ պատահական չէ, որովհետև բանաստեղծ Դավթյանը հայտնի է տարբեր ազգությունների բանաստեղծների լավագույն թարգմանություններով: Այս դեպքում արդեն վստահ կարող ենք ասել, որ տեսական սկզբունքներից գատ, Դավթյանին օգնության է գալիս նրա հարուստ կենսափորձը: Կարելի է ասել, որ Դավթյանը գրեթե հավասարության նշան է դնում հեղինակի ու թարգմանչի աշխատանքի միջև: Եթե ինչ-որ մեկը մեծ անհատականություն չէ, ուրեմն նաև ստեղծագործող էություն չէ, ուստի նա չի կարող շունչ ու ոգի դնել թարգմանվող ստեղծագործության մեջ: «Բանաստեղծության թարգմանիչը հեղինակակից է» վերնագրով հոդվածում գրում է. «...պոեզիայի թարգմանությունը ոչ թե տվյալ գործը այլ մի լեզվով կատարել է նշանակում, այլ ներշնչումով ու ոգով վերստեղծել. թարգմանիչն, այո, վերստեղծող է, թարգմանվող գործի հեղինակակիցը, եթե ոչ ավելին» («ԻՄԲ», էջ 155): Այստեղ անգամ լեզվին կատարյալ տիրապետելը ևս կարող է վճռական նշանակություն չունենալ, առավել կարևոր է թարգմանվող և թարգմանող հեղինակների հոգեհարազատությունը: Կարևորելով հանդերձ թարգմանվող երկի լեզվի իմացությունը, այն համարելով մեծ առավելություն, այնուամենայնիվ, Դավթյանը առավելությունը տալիս է երկու հեղինակների ոգու նմանությանը: Թերևս այս դիտարկման մեջ ինչ-որ չափով սուբյեկտիվիզմ կա, չէ՞ որ ինքն էլ հաճախ թարգմանություններ կատարել է միջնորդ լեզվի օգնությամբ: Բայց իր ասածը հաստատելու համար Դավթյանը բերում է խոսուն օրինակ: Գյոթեի նույն՝ «Թափառականի գիշերային երգը» թարգմանել են և՛ Թումանյանը, և՛ Չարենցը, երկու մեծ բանաստեղծներ: Թումանյանը չգիտեր գերմաներեն, Չարենցը, ըստ Դավթյանի, գիտեր բնագրի լեզուն, «բայց Թումանյանի թարգմանությունն է դարձել հայ պոեզիայի գեղարվեստական փաստ» (ն.տ., էջ 158): Դավթյանը բա-

ցատրում է տարօրինակ թվացող այդ փաստը. «Թումանյանն այդ բանաստեղծությունը թարգմանել է այնպիսի մի ժամանակ, երբ իր ստեղծագործական որոնումները, իր հոգեվիճակը համահունչ են եղել այդ բանաստեղծությանը. մինչդեռ Չարենցը, ինչպես վկայում են նրա այդ շրջանի սեփական ստեղծագործությունները՝ անհանգիստ, մարտնչող, կրքոտ, հեռու էր Գյոթեի փոքրիկ գլուխգործոցի ոլիմպիական խաղաղությունից: Բհարկե, լավագույնը թարգմանչի՝ բնագրի լեզվի իմացությունն է և թարգմանվող հեղինակի հետ թարգմանչի հոգեկան հարազատությունը, բայց դրանք հազվադեպ համընկնող երևույթներ են»: Եզրակացությունն այն է, որ թարգմանական արվեստը ստացվում է, երբ թարգմանվող գործը լիովին համահնչուն է թարգմանչի էության մեջ նիրհող ասելիքին:

Դավթյանի գրականագիտական հոդվածների հետ սերտորեն առնչվում են ընդհանրապես մշակույթի և արվեստի տարբեր ճյուղերի՝ նկարչության, երաժշտության, թատրոնի ու ռեժիսուրայի, ճարտարապետության ու քանդակագործության վաստակաշատ գործիչների դիմանկարները՝ նրանց արվեստի՝ նրբորեն դիտված հասկանիչների ընդգծմամբ: Նմանատիպ հոդվածները հակադարձ էֆեկտով ստեղծում են հենց Դավթյան արվեստագետի դիմանկարը:

ЖЕНЯ КАЛАНТАРЯН – Поэт-литературовед (Ваагн Давтян - 100). – В статье рассматриваются литературно-критические статьи армянского поэта Ваагна Давтяна, в которых обсуждаются армянские и неармянские писатели (поэты), а также поднимаются общие теоретические вопросы. Эти вопросы касаются природы поэзии, органической связи традиции и новаторства, национального характера литературы, проблемам перевода и т.д. Статьи Давтяна двухплановые, поскольку, с одной стороны, раскрывают особенности личности писателя, а с другой стороны, общие закономерности литературы.

Ключевые слова: поэзия, гармония, подсознание, пейзаж, традиция, новаторство, национальное, общечеловеческое, критерий, перевод

ZHENYA KALANTARYAN – Poet-Literary Critic (Vahagn Davtyan - 100). – The article discusses Armenian poet Vahagn Davtyan's critical articles, where he both discusses the work of Armenian and non-Armenian writers (poets), and makes research on general theoretical issues. Those questions refer to the essence of poetry, the organic connection between tradition and innovation, the national nature of literature, the problem of translation, etc. Davtyan's articles are twofold, because on the one hand, they reveal the character of an individual writer, and on the other, discuss general literary patterns.

Key words: poetry, harmony, subconsciousness, landscape, tradition, innovation, national, universal, standard, translation

ԱԿՍԵԼ ԲԱԿՈՒՆՅԻ ԱՐՁԱԿԻ ՌԻԹՄԸ

ԱՇԽԵՆ ՋՐԲԱՇՅԱՆ

Արձակի ռիթմի քննությունը գրականագիտության բավական հետաքրքիր և միևնույն ժամանակ բարդ խնդիրներից է: Ռիթմը, որը տաղաչափության կարևորագույն հասկացություններից է, լիովին ընկալելի է չափածոյում, այնինչ արձակում դրա գոյության մասին սկսել է խոսվել 19-20-րդ դդ. սահմանագծին. այդ հարցին անդրադարձել են այնպիսի նշանավոր գրականագետներ, ինչպիսիք են Բ. Տոմաշևսկին, Վ. Ժիրմունսկին և ուրիշներ: Արձակի ռիթմը, անշուշտ, յուրահատուկ իրողություն է, և այն կարևորագույն դեր է կատարում գեղարվեստական խոսքի կազմակերպման գործում, սակայն խնդրին մինչ օրս միարժեք գնահատական չի տրվել: Մի շարք գրականագետներ ընդհանրապես ժխտում են դրա գոյությունը: «Արձակը չունի սեփական ռիթմ, և... եթե դա նրան պետք է, ապա նա ստիպված է այն փոխառել չափածոյից»¹, - գրում է Լ. Տիմոֆեևը: Շատերն էլ, ընդհակառակը, ընդլայնում են ռիթմի գործառնությունները՝ այն համարելով խոսքի (առավել ևս՝ գեղարվեստական խոսքի) բնական հատկություն:

Պետք է նկատի ունենալ, որ արձակի ռիթմը ոչ թե արտաքին ձև է, ինչպես չափածոյում, այլ սերտորեն կապված է գեղարվեստական բովանդակության հետ և նրա արտահայտման եղանակներից մեկն է: Այն դրսևորվում է ոչ միայն հնչյունական ու բառապաշարային մակարդակներում, այլև կոմպոզիցիայի, սյուժեի ձևավորման ու զարգացման եղանակներում, պատկերաստեղծման կարևորագույն սկզբունքների, բովանդակության արտահայտման ձևերի մեջ: Հետևաբար, արձակի ռիթմի քննությունը կարելի է մոտենալ ամենատարբեր դիրքերից՝ բանաստեղծական չափ ու ռիթմական միավորներ հայտնաբերելու ձգտումից մինչև բուն արձակին բնորոշ հատկանիշների վերհանումը:

Բանալի բառեր – *արձակի ռիթմ, բանաստեղծական չափ, օրնամենտալ արձակ, քնարականություն, գեղարվեստական պատկեր, ներքին ռիթմ, կոմպոզիցիա, ֆրագմենտար սյուժե, զուգահեռականություն*

Արձակի ռիթմի քննության տեսանկյունից մեր գրականության մեջ թերևս ամենահետաքրքիր նյութը ընձեռում է Ակսել Բակունցի ստեղծագործությունը, որն իր բովանդակային, լեզվական ու կառուցվածքային հատկանիշներով միանգամայն նոր որակ նշանավորեց հայ արձակում:

Հարցին մի փոքր այլ մոտեցմամբ է անդրադառնում Սուրեն Աղաբաբյանն իր «Ակսել Բակունց» մենագրության մեջ. բանավիճելով Խ.

¹ Тимофеев Л. И. Ритм стиха и ритм прозы: О новой теории ритма проф. А. М. Пешковского // На литературном посту, 1928, № 19, с. 30.

Մարգարյանի հայտնած այն տեսակետի հետ, որ բակունցյան արձակը «հակում ունի արձակ բանաստեղծություն լինելու»՝ նա ընդհանուր առմամբ դեմ է արձակին չափածոյի հատկանիշներ վերագրելուն: «Ֆոնետիվ Բակունցի ոճի երաժշտական սկզբունքների մասին, - գրում է նա, - դա չպետք է սահմանափակել սոսկ ռիթմական միավորների պարբերականության, տողի երգայնության, նախադասության ֆոնետիկական տարրերի ընդգծման, պրոզայի մեջ մուծած բանաստեղծական շեշտերի և այլն, շրջանակներում: Հարցի էությունն այն է, որ Բակունցն ունի իրականության երաժշտական զգացողություն՝ լայն առումով, որ կյանքի բանաստեղծական բովանդակությունը նրա պատմվածքում գրնգում է որպես աշխարհի «երաժշտական սկզբունքի» արտահայտություն»²:

Ռ. Իշխանյանն իր «Բակունցի լեզվական արվեստը» աշխատության «Լեզվի բանաստեղծականություն» գլխում հատուկ նշում է, որ «բակունցյան խոսքն ունի նաև յուրահատուկ ներքին չափ (ռիթմ), որը երբեմն շատ հստակ է զգացվում» և «ավելի է ուժեղացնում նրա հուզական ներգործությունը: Միաժամանակ, հետաքրքիր է, որ երբեմն ընդհուպ չափածոյին մոտեցող խոսքը, այնուամենայնիվ, միշտ մնում է իսկական արձակ (օրինակ, երբ փորձում ենք այն տողատել, չի ստացվում)»³:

Այստեղ հարկ ենք համարում կատարել երկու կարևոր դիտարկում. նախ, ցանկացած տեքստ, ի վերջո, հնարավոր է տողատել, որի միջոցով կփոխվեն դրա արտասանության բնույթն ու հուզական արտահայտչաձևերը (այդ մասին են վկայում ազատ ոտանավորի բազմաթիվ նմուշներ, անտիպոեզիայի կառուցման սկզբունքները և այլն): Մյուս դիտարկումն այն է, որ խոսելով արձակի ռիթմի մասին՝ ամենևին չպետք է այնտեղ տեսնել չափածոյին բնորոշ ռիթմական սկզբունքներ: Բանն այն է, որ ցանկացած տեքստ, առավել ևս գեղարվեստական տեքստը ունի իր կառուցման օրենքներն ու ռիթմական ներգործության ձևերը: Եվ երբ խոսում ենք, այսպես կոչված, «արձակի ռիթմի» մասին, ապա պետք է անդրադառնանք հենց միայն արձակին և ոչ թե չափածոյին բնորոշ կշռույթային հնարքներին: Ավելին, դեռևս անտիկ մշակույթում մեծ կարևորություն էր տրվում արձակ խոսքի ճարտասանական ֆիզուրներին, որոնք մեծ չափով պայմանավորում էին դրա ներգործության ուժն ու ազդեցությունը ունկնդիրների վրա:

Ընդհանուր առմամբ ճիշտ մոտենալով խնդրին՝ Դ. Գասպարյանը գրում է. «Արձակի կշռույթը բարդ ու հարուստ կազմություն ունի և, ի տարբերություն չափածոյի, ուր տաղաչափական ձևերը կարելի է նույնացնել և ընդհանրացնել, արձակ խոսքի ամեն մի դրսևորում ունի ներդաշնակության իր անկրկնելի յուրահատկությունները: Այդպիսի անկրկնելի յուրահատկություններ ունի նաև Բակունցի խոսքը...»⁴:

² Մ. Աղաբաբյան, Ակսել Բակունց, Եր., 1963, էջ 452-453:

³ Ռ. Իշխանյան, Բակունցի լեզվական արվեստը, Եր., 1965, էջ 18:

⁴ «Ակսել Բակունց. Ժառանգություն», Եր., 1999, էջ 242:

Մակայն շարադրանքի հաջորդ հատվածում նա «Միրիավ» պատմվածքի սկիզբը վերլուծում է հենց չափածո խոսքի սկզբունքներով՝ առանձնացնելով վանկային մոտավոր հավասարություն ունեցող որոշակի հատվածներ (պայմանական ասված՝ արձակի անդամներ)՝ 5, 6, 8, 11, 13 կամ ավելի շատ վանկեր պարունակող միավորներով պնդելով, որ այդ «հավասարաչափ միավորներն» են ի վերջո ստեղծում «արտաքուստ աննկատ, բայց խոսքի կշռույթը ներքուստ կարգավորող շարժում»⁵՝ փաստացի արձակի ռիթմի խնդիրը կրկին հարաբերելով չափածոյի սկզբունքների հետ:

Պետք է նշել, որ գրականագիտության մեջ արձակի, այսպես կոչված, չափածոյացված ռիթմի քննության փորձերն աշխուժացել են հատկապես 20-րդ դարի սկզբներին, ընդ որում՝ տարբեր լեզուներում արձակի ռիթմի նմանատիպ քննությունը կատարվել է տարբեր սկզբունքներով: Այսպես, գրականագետների համոզմամբ՝ ռուսական արձակի ռիթմը տոնիկական է, ինչպես չափածոյում, և հաճախ փորձել են առանձնացնել շեշտային կանոնավորություն ունեցող որոշակի հատվածներ Պուշկինի, Գոգոլի, Անդրեյ Բելլու արձակում: Մ. Գիրշմանը «Գեղարվեստական արձակի ռիթմը» գրքում նկատում է. «...Յուրաքանչյուր լեզու այդ առումով յուրահատուկ է, և, համապատասխանաբար, յուրաքանչյուրի ռիթմն իրենն է: Ռուսաց լեզվում խոսք կարող է լինել տոնիկական ռիթմի մասին, այսինքն՝ շեշտված և անշեշտ վանկերի հերթագայության»⁶: Հայերենում, քանի որ չափածոյի ռիթմն այլ բնույթի է, արձակի ռիթմը նույնպես տարբերվում է. այն կարելի է դիտարկել արտահայտության, ֆրազի արտաբերմամբ կամ դրանց միջև տրվող դադարներով: Գրականագիտության մեջ արձակ խոսքը չափածոյի հետ համադրելու այդպիսի փորձեր մշտապես եղել են առանձնացնելով նույնանման ոտքեր, անդամներ, ռիթմական միավորներ: Մակայն եթե խոսքի որոշակի սահմանափակ հատվածում դա հնարավոր է, ապա ողջ տեքստը չի կարող երբևէ նմանատիպ վերլուծության ենթարկվել. այդպիսի վերլուծությունը կկրի սոսկ ձևական բնույթ, որն է շոշափելի արդյունքի չի հանգեցնի և ինչ-որ պահի ուսումնասիրողին կկանգնեցնի փակուղու առջև:

Բ. Տոմաշևսկին, որն այս խնդրի ուսումնասիրման մեջ առաջին ճանապարհի հարթողներից էր, այն խորին համոզմուն ուներ, որ արձակի ռիթմի ուսումնասիրությունն անբաժան է ընդհանրապես խոսքի ռիթմի քննությունից, քանի որ մեկը մյուսի մասնավոր դրսևորումն է: «...Բոլորովին անօգուտ կլիներ արձակի գեղարվեստական ռիթմականության հարցին անդրադառնալը՝ չլուծելով խոսքային ռիթմի խնդիրը...»⁷, - գրում է նա: Մյուս կողմից, ռիթմը կապված է նաև գրողի ան-

⁵ Տե՛ս նույն տեղը, էջ 243:

⁶ **Гиршман М. М.** Ритм художественной прозы. М., 1982, с. 7.

⁷ **Томашевский Б. В.** Ритм прозы. - В его сб.: О стихе. Л., 1929, с. 257.

հատականության, նրա խոսքի ոճական որոշակի հատկանիշների հետ, որոնք նույնպես պետք է հաշվի առնել:

Արձակի ռիթմի քննության պարագայում պետք է ելնել այն կանխադրյալից, որ վերջինս շատ ավելի լայն հասկացություն է, քան չափածոյին բնորոշ ռիթմը: Այս առումով հետաքրքիր է Գ. Ֆլորերի մոտեցումը հարցին: Նրա համոզմամբ՝ եթե բանաստեղծը պարտադրված է հետևում ռիթմի որոշակի կանոնների, որոնք նրան «տանում են» իր հետևից և ենթարկում իրենց, ապա արձակագրին անհրաժեշտ է բնական խոսքի ռիթմի խորը զգացողություն, ռիթմ, որը կարող է փոփոխվել ամեն մի նոր պատկերի և տրամադրության հետ⁸: Արձակագրի նման զգացողության մասին են խոսել նաև Չեխովը, Ռոմեն Ռոլանը, Բունինը, Անդրեյ Բելին և շատ ուրիշներ: Այսպես, Բունինը խոստովանել է, որ գրել սկսելուց առաջ պետք է «գտնել հնչյունը», որն ըստ էության նշանակում է գտնել ռիթմը և նրա հիմնական հնչողությունը⁹:

Այս տեսանկյունից հետաքրքիր նյութ է տալիս Բակունցի արձակը. ինչպե՞ս է նա սկսում իր պատմվածքները, ի՞նչ հնչողություն, ի՞նչ ձայն է գտնում, որը դառնում է գերիշխող տվյալ երկում: Ստեղծագործության սկիզբը առհասարակ շատ կարևոր դեր ունի նրա հետագա ընթացքի և ռիթմի զարգացման համար: Այնպես, ինչպես երաժշտության մեջ առաջին ակորդը կամ հնչյունը պայմանավորում է ողջ ստեղծագործության ռիթմը, այնպես էլ բակունցյան արձակում հենց սկզբից կարծես կանխորոշվում է հետագա ողջ ընթացքը: Նրա պատմվածքների սկիզբը շատ դեպքերում նման չէ սովորական պատմողական երկերի մեկնարկին, երբ հեղինակը փորձում է հնարավորինս ամբողջական պատկերացում տալ իրավիճակի և գլխավոր հերոսների մասին: Տպավորություն է, որ շատ բան արդեն ընթերցողին հայտնի է, անգամ հերոսներն են ծանոթ, տարածքը, որտեղ ապրում են նրանք. ահա պատմվածքների մի քանի հատկանշական մեկնարկներ. «Գյուղում բուլորն էլ ճանաչում են Վաղունց Բաղուն, գիտեն, որ նրա տունը վերի հանդը տանող ճամփի վրա է, ջաղացներին չհասած, Աթանանց մեծ ընկուզենու մոտ»¹⁰, «Թեկուզ անունը Ծիրանի տափ է, բայց և ծիրանի ոչ մի ծառ չկա այնտեղ» (42), «Առաջին արլորականչի հետ զարթնում է Պետին, տրեխները հագնում...» (29), «Մինա բիբուն ասել էին, որ երեկոյան հարսն ու որդին գյուղ պիտի հասնեն» (59), «Տարօրինակ թվաց զուռնայի կանչը զիլ և դիոլի աղմուկն ընդհատ աշնան արևոտ ցերեկին, բրի լանջին արևկող անող գյուղում» (66), «Նրա համար ամենից մեծ հաճույքը այգին ու արտերը ջրելն էր» (96), «Շարմաղ բիբին երեկոյան, երբ ժամհարը քաշում էր եկեղեցու զանգերը, - խրճիթի ծանր դուռը տնքալով բաց էր անում» (198), «Ես հարցնում եմ Ավագին. - Մտո՛ւմ է

⁸ Տե՛ս Мопассан Г. Статьи о писателях, М., 1957, էջ 33:

⁹ Տե՛ս Паустовский К. Иван Бунин. - Тарусские страницы, Калуга, 1961, էջ 32:

¹⁰ Ակսել Բակունց, Երկեր, Եր., 1955, էջ 8: Բակունցի երկերից հետագա մեջբերումները կարվեն այս գրքից փակագծերում նշելով էջը:

այն վարագույրը...» (237), «Տեղատարափ անձրևին նա բախեց տան դուռը» (269) և այլն: Կան նաև ավելի քնարական մուտքեր, ինչպես «Միրհավի» նշանավոր սկիզբն է՝ «Աշուն էր, պայծառ աշուն... Օդը մաքուր էր, արցունքի պես ջինջ» (228), որը գրեթե բոլոր ուսումնասիրողները քննել են՝ իբրև ռիթմական արձակի ակնառու նմուշ և, ինչպես նշեցինք, նույնիսկ փորձել են այդտեղ գտնել վանկական-անդամավոր կառույցի որոշակի տարրեր:

Մակայն արձակի ռիթմը պետք է որոնել ոչ թե առանձին հատվածների քնարականության կամ ռիթմիկ բնույթի մեջ, այլ գեղարվեստական ողջ կառույցի, կոմպոզիցիայի, սյուժեի զարգացման բնույթի, պատկերների սիմետրիկության ու կառուցիկության, սկզբի ու վերջի ներդաշնակության մեջ: Արձակ երկն անհրաժեշտ է դիտարկել իբրև մեկ ամբողջականություն, որտեղ բոլոր մասերը ծառայում են ամբողջի ձևավորմանը:

20-րդ դարասկզբին, հատկապես 20-30-ական թթ. համաշխարհային և ռուսական արձակում տեղի են ունենում բովանդակային ու կառուցվածքային լուրջ փոփոխություններ, որոնց անմասն չի մնում նաև հայ գրականությունը: Մասնավորապես, ձևավորվում է արձակի մի նոր տեսակ, որը ստանում է «օրնամենտալ (զարդանախշային) արձակ» անվանումը: Այն փորձում է արձակը մոտեցնել չափածոյին՝ կիրառելով վերջինիս բնորոշ պատկերավորման յուրահատուկ գծերը՝ մետաֆորիկ մտածողությունն ու լիրիզմը, ռիթմն ու կառուցիկությունը: 1920-ական թթ. վերջին ռուս նշանավոր ֆորմալիստ Վիկտոր Շկլովսկին գրում է. «Ժամանակակից ռուսական արձակն իր բավական մեծ մասով օրնամենտալ է, **պատկերը նրանում գերիշխում է սյուժեի վրա**»¹¹ (*ընդգծումը մերն է՝ Մ. Ջ.*): Վ. Շիրմունսկու կարծիքով՝ այդ տիպի արձակի ակունքները հասնում են մինչև ռոմանտիկական ոճ, մինչդեռ «դասական ավանդույթը լավ արձակից պահանջում էր, որ այն նման չլինի ոտանավորի: Ֆրանսիական կլասիցիզմի տեսաբանները... արգելում էին՝ իբրև ոճի սխալ, օգտագործել «պատահական չափական տողեր»¹²:

Օրնամենտալ արձակի աշխուժացմանը զուգահեռ՝ հնչում են նաև ավանդական արձակ-չափածո հակադրությունից հրաժարվելու կոչեր: Ռուսական օրնամենտալ արձակի առաջատար դեմքերը (Բելի, Չամյատին, Բաբել, Պաստերնակ, Մանդելշտամ և ուրիշներ) իրենց տեսական ելույթներում և ստեղծագործության մեջ ընդգծում են այն միտքը, որ գեղարվեստական խոսքի բաժանումը արձակի և չափածոյի արդեն հնացել է ու սպառել իրեն: Անդրեյ Բելու համոզմամբ՝ դեռևս Գոգոլն էր «արձակում կոտրել արձակը»: Ստեղծագործության մեջ սկսում են գերիշխել ֆրանզմենտար, կտրտված, մոզաիկ կոմպոզիցիաները, դրվա-

¹¹ Шкловский В. О теории прозы. М., 1929, с. 216.

¹² Жирмунский В. Теория стиха. Л., 1975, с. 571.

գային սյուժեն: Պատումը և օրնամենտալիզմը, որոնք առաջին հայացքից անհամատեղելի են թվում, հետաքրքիր ձևերով միաձուլվում են ստեղծելով գեղարվեստական խոսքի միանգամայն նոր որակ:

Նոր տիպի արձակի աշխուժացման տեսանկյունից պետք է քննել նաև Բակունցի ստեղծագործությունները, դրանց կառուցվածքը, կոմպոզիցիոն ձևերը, ծավալը, գլուխների, պարբերությունների ու նախադասությունների երկարությունը, սյուժետային դրվագների բնույթն ու համադրման եղանակները:

Բակունցյան արձակում սյուժեն՝ որպես այդպիսին, մղվում է երկրորդ պլան, այն դառնում է հատվածական, ներկայացվում կտորկտոր, որից ընթերցողը պետք է հավաքի ամբողջական շրթան, բացի թաքուն ծալքերը, երևակայությամբ ամբողջացնի: Սյուժե դասական իմաստով չկա Բակունցի պատմվածքներում, առավել ևս՝ սյուժեի համակարգված զարգացում՝ տարբեր օղակներով: Գրականագետ Մերգեյ Աթաբեկյանի դիպուկ բնութագրմամբ՝ այդտեղ առկա է «համր սյուժե», երբ «գործողությունն անշարժ է կամ արտաքուստ թվում է անշարժ: Ավելի ճիշտ՝ դա ներաշխարհում իլացված գործողություն է. ոչ թե դեպքերի ծավալում, այլ՝ մտավոր շարժում: Նման պարագայում դրվագային պատումն իր տեղը զիջում է խոհական-վերլուծական գործողությանը, և խոսքային-ձայնային պատումին փոխարինում է կերպարի լռին-խոհական վիճակը...»¹³: Այդ տիպի սյուժեում հերոսների ուղղակի խոսքը նույնպես չի կատարում իր ավանդական գործառույթը. այն հաճախ աննկատ միաձուլվում է հեղինակի խոսքին, դառնում, այսպես կոչված, «ոչ ուղղակի ուղիղ խոսք»¹⁴, հուշը դառնում է պատկեր, պատկերը՝ հուշ, և իրականության ու երագի այս սահմանագծում է ուրվագծվում կերպարը: Ահա «Խաչատուր Աբովյան» անավարտ վեպից մի հատված, որտեղ դորպաստյան անձրևի աղմուկն ու հայրենի երկրի կարոտը, հուշերը նուրբ թելերով միահյուսվում են՝ ստեղծելով անկրկնելի պատկերներ. «Մուօ էր. դրսից լսվում էր միայն անձրևի աղմուկը. մի ջրորդանից թափվում էր անձրևաջուրը... Ինչո՞ւ հիշեց Մայրանին... Այն երկրում էլ խավար գիշեր է և ա՛յս անձրևն է գալիս, թե պարզկա գիշեր է, գարնան սպիտակ աստղերով... Տեսնես հիմա ի՞նչ է անում նանին» (635-636):

Այս համատեքստում պետք է դիտարկել նաև այն իրողությունը, որ Բակունցի արձակում նախադասություններն ու պարբերությունները համեմատաբար կարճ են: Ռ. Իշխանյանը մասնավորապես նկատում է, որ նա խուսափում է բարդ ստորադասական կառույցներից գրելով. «Բակունցը սեղմ, կարճ խոսքի վարպետ է: Բազմաթիվ են նրա մոտ վարպետի վարժ գրչով քանդակված կարճառոտ, պարզ նախադասությունների շրթանները... Այս կարգի նախադասություններից կազմ-

¹³ Ս. Աթաբեկյան, Ակսել Բակունց. խոսքի ու... լռության պոեզիան, Եր., 2000, էջ 169:

¹⁴ Ռուս գրականագիտության մեջ ընդունված է «не собственно прямая речь» տերմինը:

ված խոսքը լավ է արտահայտում հեղինակի քնարական տրամադրությունը»¹⁵: Այս իրողության վրա ուշադրություն է հրավիրում նաև Դ. Գասպարյանը. «Բակունցը գրում է կարճ, սեղմ արտահայտություններով, որոնք հաջորդական հոսքի մեջ ստեղծում են ժամանակային տևողության, տևականության շնչի շարժընթացային հավասարաչափություն»¹⁶: Սակայն նախադասությունների կարճությունն ինքնին բխում է տեքստի ամբողջական կառույցից, որտեղ առհասարակ իշխում են պատումի հատվածայնությունն ու ֆրագմենտային բնույթը: Բակունցի արձակում նաև պարբերություններն են կարճ. գրեթե բոլորը բաղկացած են 4-5 տողից, և ամեն մի նոր պարբերության հետ կարծես ձևավորվում է մի նոր պատկեր, պատումը նոր շունչ է ստանում, նոր տրամադրություն, և այս ամենը յուրահատուկ ռիթմ է հաղորդում խոսքին: Ահա «Լառ-Մարգար» պատմվածքի մի քանի պարբերությունների սկիզբ՝ «Լուսնյակ գիշերներին...», «Ջրտուքի այդ գիշերներին...», «Լուսաբացին...», «Արևի առաջին շողերի հետ...», «Ամեն առավոտ կանուխ...», «Ձմեռն անցավ...» և այլն, որոնք կարծես համահունչ են բնության ռիթմին, նրա շարժմանը, փոփոխությանը: Կարճ, փոքրիկ պարբերություններով է գրված նաև «Միրհավը». այստեղ անցյալը, ներկան, վերհուշն ու բնության պատկերներն անդադար փոխարինվում են մեկը մյուսով, միահյուսվում, դառնում մեկ ամբողջություն՝ ստեղծելով պատմվածքի յուրահատուկ ռիթմը: Ահա «Անձրևը» մի ինքնատիպ պատկեր, որտեղ ամեն մի պարբերություն բնության մի նոր նկար է՝ տերևաթափ, մթին սարերի ամպեր, քարանձավ, խշշացող մասրենիներ, ձորի աղմուկից դողացող գետին. այս ամենն իրոք ստեղծում է բնության շարժման մի յուրահատուկ ռիթմ, որը Բակունցն ստեղծում է բառերի, խոսքի միջոցով:

«Ալպիական մանուշակ»-ում նույնպես պարբերությունների անցումները պայմանավորում են արձակի ներքին ռիթմը, շարժումը, զարգացումը՝ բնության պատկերներից դեպի ներկան, անցյալը, կրկին դեպի ներկան ու նորից անցյալ: Ահա մի քանի պարբերության սկիզբ. «Կինը թեյի պատրաստություն էր տեսնում, անխոս ու արագ շարժումներով», «Այն կինն էլ ուներ խշխշան շորեր...», «Կինը նստել էր օջախի առաջ, հաճախ բարձրացնում էր թեյամանի կափարիչը...», «Այն կինը երբեք բոբիկ ոտքերով չի՝ քայլել, չի՝ նստել մխացող աթարի առաջ», «Թեյամանի մեջ ջուրը եռաց, կափարիչը ձայն հանեց», «Հետո ուրիշ օրեր եկան: Այնքան պատահական եղավ ճամփաբաժանը և այնպես պարզ» (193-194) և այլն, մյուս կողմից՝ բնության պատկերները՝ Կաքավաբերդի գլխին նստած ամպը, ալպիական մանուշակը, Բասուտա գետը, որոնք ստեղծում են բնության մի յուրահատուկ ռիթմ, շարժում:

Բակունցյան արձակի ռիթմը ձևավորվում է նաև հերոսների ուղ-

¹⁵ Ռ. Իշխանյան, նշվ. աշխ., էջ 15:

¹⁶ «Ա. Բակունց. Ժառանգություն», էջ 243:

ղակի խոսքի տարաբնույթ հնարքներով, դրանց կարճությամբ ու միաշափուությամբ: Հաճախ հարցը, խոսքը հնչում են առանց պատասխան ակնկալելու՝ իբրև հույզի, ապրումի արտահայտման միջոց. «Մանաս, ինչո՞ւ տունդ Օրանջիայում շինեցիր, չգիտեի՞ր, որ Դավոյենց Առաքելն էլ այք ուներ դրած ձորակին»... (77): Երբեմն էլ այն վերածվում է մենախոսության, ինչպես «Խոնարհ աղջիկը» պատմվածքում. «Այս կաճանով տասներկու տարի առաջ գնացի Ձորագյուղ,-ասաց ընկերս: Թվում էր, թե ինքնիրեն է խոսում» (117): Եվ պատմվածքի ողջ պլոտեն զարգանում է կարծես ինքնիրեն խոսող հերոսի պատումի միջոցով: Երկխոսությունները կարճ են, առանց ավելորդ բառերի. «Բաղը մարդ կգա, Դիլան,-դողալով խնդրեց նա», ու հնչում է պատասխանը. «Կաց, անխիղճ...» (29-30):

Չեխովի ժամանակակիցներից մեկը պատմել է, որ նա հատուկ ձգտում էր պարբերությունները կամ մեծ հատվածներն ավարտել բարեհունչ բառերով՝ իբրև եզրափակիչ երաժշտական ակորդ: Բակունցի արձակում պարբերությունների, նախադասությունների ավարտը նույնպես կարևորված է, հաճախ պատմվածքում ձևավորվում է յուրօրինակ շրջանակ՝ սկզբի և վերջի պատկերների համանմանությամբ (ինչպես ալպիական մանուշակի պատկերն է պատմվածքի սկզբում և վերջում կամ աշնան նկարագրությունը «Միրհավ»-ում): Բառային, քերականական ու շարահյուսական զուգահեռականություններն ուղեկցում են ընթերցողին ողջ ստեղծագործության ընթացքում, բայց միևնույն ժամանակ գրողը խուսափում է խոսքի միապաղաղ, միօրինակ բնույթից:

Եզրափակելով նշենք հետևյալը. մեր համոզմամբ՝ Բակունցի երկերը պետք է դիտարկել 20-րդ դարի օրնամենտալ արձակի համատեքստում՝ իբրև ժամանակի գեղարվեստական փոփոխությունների հայկական արձագանք, իբրև արձակի և չափածոյի պատկերավորման սկզբունքների մերձեցման յուրահատուկ արտահայտություն, որն էապես լայնացրեց մեզանում գեղարվեստական խոսքի պատկերավորման հնարավորությունները և նոր ճանապարհ բացեց արձակի հետագա զարգացման համար:

АШХЕН ДЖРБАШЯН – Ритм прозы Акселя Бакунца. – В статье делается попытка проанализировать элементы ритма в прозе Акселя Бакунца, показать, что ритм растворяется во всех элементах прозаического произведения, в характере сюжета, композиционном строении, диалогах, в параллелизме художественных образов. В то же время проза Бакунца рассматривается в контексте так называемой «орнаментальной» прозы в русской литературе начала XX века, как армянский отклик на художественные изменения того времени, как своеобразное сближение принципов прозы и стиха. Все это значительно расширило возможности художественного выражения в армянской литературе и открыло новый путь для дальнейшего развития отечественной прозы.

Ключевые слова: *ритм прозы, стихотворный размер, орнаментальная проза, лиризм, художественный образ, внутренний ритм, композиция, фрагментарный сюжет, параллелизм*

ASHKHEN JRBASHYAN – *The Rhythm of Prose Axel Bakunts's.* – The article attempts to analyze the elements of rhythm in the prose of Aksel Bakunts, to show that rhythm dissolves in all elements of a prose work - in the nature of plot, compositional structure, dialogues, in the parallelism of artistic images. At the same time, prose of Bakunts is considered in the context of the so-called “ornamental” prose in Russian literature of the early 20th century, as an Armenian response to the artistic changes of that time, as a kind of convergence of the principles of prose and verse. All this significantly expanded the possibilities of artistic expression in Armenian literature and opened a new path for the further development of Armenian prose.

Key words: *prose rhythm, meter, ornamental prose, lyricism, artistic image, internal rhythm, composition, fragmentary plot, parallelism*

ՀԻՆ ՀԱՅԵՐԵՆԻ ԵՐԿՐԱՐՔԱՌԱՅԻՆ ԵՎ ԵՌԱԲԱՐՔԱՌԱՅԻՆ
ԿԱԶՄՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՁ
(համաժամանակյա քննություն)

ՎԱՐԴԱՆ ՊԵՏՐՈՍՅԱՆ

Հին հայերենի երկբարբառային և եռաբարբառային կազմությունների տարբերակումը եղել և այսօր էլ մնում է հայերենագիտության ամենից խնդրահարույց հարցերից մեկը: Կախված տարբերակման հիմքում դրվող չափանիշներից՝ էականորեն կարող են փոխվել դրանց ոչ միայն քանակական, այլև որակական բնութագրերը: Այդ բաղադրիչների նկատմամբ տարահատկանիշ չափորոշիչների կիրառումը հիմք է տալիս առանձնացնելու *երկբարբառներ*, *երկբարբառակերպեր* և *եռաբարբառակերպեր* և դրանք դասակարգելու ըստ *կայուն* և *ոչ կայուն* տեսակների: Առաջին տեսակին վերաբերում են նրանք, որոնք, անկախ բառի (բառաձևի) կրած ձևափոխությունից (հոլովում, խոնարհում, բառաբաղադրում), միշտ արտաբերվում են մինևույն վանկում և վերաբերում են մինևույն ձևային: Երկրորդ տեսակին վերաբերում են նրանք, որոնց երկբարբառային/եռաբարբառային բնույթը պայմանավորված է հնչաշղթայում զբաղեցրած դիրքով, այն է՝ հնչաշղթայի տրոհման կամ փոփոխության դեպքում նրա բաղադրիչները կարող են հայտնվել տարբեր վանկերում կամ անջատվել ձևային կարով: Հին հայերենի երկբարբառներից կայուն էր միայն *եա* (ea)-ն, որը հնչյութաբանորեն համարժեք էր մեկ բարդ հնչյութի: Մյուսները ոչ կայուն, երկհնչյութ կառույցներ էին: Երկբարբառակերպերն ու եռաբարբառակերպերը գերազանցապես, եթե ոչ բացարձակորեն, վերաբերում էին կայուն տեսակին: Վերոհիշյալ չափանիշների կիրառումը հիմք է տալիս հին հայերենում տարբերակելու 1 *կայուն* և 7 *ոչ կայուն* երկբարբառ, 15 երկբարբառակերպ և 15 եռաբարբառակերպ:

Բանալի բառեր – *կայուն երկբարբառ, ոչ կայուն երկբարբառ, երկբարբառակերպ, եռաբարբառակերպ, վանկային բաշխում, ձևաբանական չափանիշ, ձևային կար*

Համաժամանակյա հայեցակերպում հին հայերենի երկբարբառային և եռաբարբառային կազմությունների հիմնախնդիրներին անդրադարձել ենք ինչպես հատուկ դրանց քննությանը նվիրված հոդվածներում¹, այնպես էլ *յ* (յ) և *ւ* (ւ) ձայնորդների հնչաբանական բնութագրերի

¹ Տե՛ս Վ. Պետրոսյան, Հայկական և հնդեվրոպական երկբարբառային համակարգերը // ՎԷՄ, 2015, թիվ 3, էջ 115-127, նույնի՝ Հին հայերենի երկբարբառային կազմությունների հնչյութաբանական և հնչիւնաբանական արժեքները // Հայկազեան հայագիտական հանդես, 2018, էջ 57-78, նույնի՝ Հին հայերենի եռաբարբառային կազմությունները (համաժամանակյա հայեցակետ) // Հայագիտության հարցեր, թիվ 1, 2017, էջ 128-136, նույնի՝ Եռաբարբառային և քառաբարբառային կազմությունները հին հայերենում (համաժամանակյա քննություն) // Էջմիածին, 2022, թիվ 9, էջ 128-136:

քննության առնչությամբ՝ որպես երկբարբառակերպերի կիսաձայնական բաղադրիչները²: Այդ աշխատանքներում մենք հին (իմա՝ գրաբարյան) հայերենում տարբերակել ենք 1 երկբարբառ (այլ տերմինաբանությամբ՝ *իսկական երկբարբառ*)՝ *եա* (հմմտ. *մատեան, սեան վայրկեան*), 7 երկբարբառակերպ (այլ տերմինաբանությամբ՝ *անիսկական երկբարբառ*)՝ *աւ* (հմմտ. *հաւր, մատ*), *եւ* (հմմտ. *հարեւր, բեւր*), *իւ* (հմմտ. *արհւն, սիւն*), *ու* (հմմտ. *լեզու, ուրու*), *ւո* (հմմտ. *որդւոց, հոգւոց*), *այ* (հմմտ. *սայր* «(նիզակի, տեգի) սուր ծայր», *տայր* «(նա) տալիս էր»), *ոյ* (հմմտ. *լոյս, փոյթ* «հոգ, խնամք. ջանք»), 8 եռաբարբառակերպ՝ *եայ* (հմմտ. *հրեայք* «հրեաներ», *քաղեայք* «աստղահմաներ, գուշակներ»), *եաւ* (հմմտ. *եաւթն, արդեաւք*), *ւոյ* (հմմտ. *այգւոյ*/-ն), *կղզւոյ* «կղզու»), *ուա* (հմմտ. *չուստ* «թշվառ», *լուարուք* «(մենք) լսեցինք»), *ուի* (հմմտ. *արծուի* (սեռ.-տր. *արծուոյ*) «արծիվ», *նուիրեալ* «մկրտված. ձեռնադրված»), *ուէ* (հմմտ. *չուէլ* «մեկնել, տեղափոխվել», *թուէմ* «համրել, հաշվել»), *ուէ* (հմմտ. *նուէր, պատուէր*), *ուո* (հմմտ. *թուոց* «թվերի» («թի» գոյ. հգն. թ., սեռ.-տր. հլ.), *տուոյ* («տալ» բայի ենթակայ. դերբ.): Նշված աշխատանքներում երկբարբառային կազմություններին տրված բնութագրերում ավանդական պատկերացումներից շեղվել ենք երկու հարցում. 1) կատարել ենք *երկբարբառ(ներ)ի* և *երկբարբառակերպ(եր)ի* տարբերակում՝ երկրորդ կարգի մեջ դասելով *յ* (յ) և *ւ* (ւ) ձայնորդական բաղադրիչներով կազմությունները, 2) երկբարբառակերպերի կարգին ենք դասել նաև *ու* (օւ)-ն, որն ուրիշները համարել են պարզ ձայնավոր: Ինչ վերաբերում է եռաբարբառային կազմություններին, մեր կարծիքով, 1) հին հայերենը չի ունեցել իսկական եռաբարբառ, 2) *ու* (օւ)-ի և *աւ*, *եւ*, *էւ*, *իւ*, *ո* ձայնավորների միացությամբ կազմությունները, որոնք հայերենագետներից շատերը դասել են երկբարբառների կարգին, որովհետև *ու* (օւ)-ն համարել են պարզ ձայնավոր³, մենք դասում ենք եռաբարբառակերպերի կարգին, որովհետև, ինչպես նշեցինք, առնվազն գրերի գյուտի շրջանում՝ 5-րդ դարի սկզբին, *ու* (օւ)-ն ունեցել է երկբարբառային արտաբերություն⁴:

Հետագա դիտարկումները ցույց տվեցին, սակայն, որ, նշված հանգամանքներով հանդերձ, մեր աշխատանքներում տարբերակված երկբարբառային և եռաբարբառային միավորների կազմը նույնպես ամ-

² Տե՛ս **Petrosyan V. Z.**, Происхождение в древнеармянском языке сонорного звука *յ* (*у*) и его фонематическая значимость (исторический аспект) // European Journal of Humanities and Social Sciences, 2017, № 5, էջ 24-29, **Վ. Պետրոսյան**, Հին հայերենի *յ* (*у*) ձայնորդի համաժամանակյա և տարաժամանակյա բնութագրերը // Բանբեր Երևանի համալսարանի. Բանասիրություն, 2017, թիվ 3, էջ 11-22:

³ Տե՛ս **Հ. Աճառյան**, Հայոց գրերը, Եր., 1984, էջ 581, **Գ. Ղափանցյան**, Հայոց լեզվի պատմություն. հին շրջան, Եր., 1961, էջ 241, **Է. Աղայան**, Գրաբարի քերականություն, Եր., 1964, էջ 92-96, **Հ. Մուրադյան**, Հայոց լեզվի պատմական քերականություն, հ. I, Եր., 1982, էջ 29-30, **Туманян Э.**, Древнеармянский язык, М., 1971, էջ 26-27:

⁴ Տե՛ս **Վ. Պետրոսյան**, Հին հայերենի ձայնավորական համակարգի ծագումը և հնչարանական արժեքայնությունը // Բանբեր Երևանի համալսարանի. Հայագիտություն, 2017, թիվ 2 (23), էջ 48-50:

բողջական չէ: Ըստ այդմ՝ պիտի նկատի ունենալ նաև հետևյալ երկու դիտարկումները:–

1. Հին հայերենի, առնվազն՝ նրա գրաբարյան փուլի երկբարբառային կազմությունների կարգը, նշվածներից բացի, պիտի համալրել ևս 7 երկբարբառով՝ *էա* (ēa) (հմմտ. *էակ* «արարած», *էապես* «իսկապես», *ունէաք* «ունենում էինք» (անց. անկ.ժ., հգն. թ., 1-ին դ.)), *էի* (ēi) (հմմտ. *դնէի* «(ես) դնում էի», *շարժէիր* «շարժում (/շարժվում) էիր» (անց. անկ.ժ., եգ. թ., 2-րդ դ.), *շարժէիր* «շարժում (/շարժվում) էիր» (անց. անկ.ժ., հգն. թ., 2-րդ դ.), *ունէիր* «ունենում էիր» (անց. անկ. ժ., հգն. թ., 2-րդ դ.), *ունէին* «ունենում էին» (անց. անկ. ժ., հգն.թ., 3-րդ դ.)⁵, *էն* (ēo)

⁵ *էի* (ēi) երկբարբառը, ինչպես երևում է բերված օրինակներից, հանդիպում է բացառապես հին հայերենի *է* և *ի* լծորդության բայերի անցյալ անկատարի ձևերում: Իբրև անկատարի վերջավորություն կամ վերջավորության բաղադրիչ (հմմտ. *-էի, էի-ր, էի-ն*) *էի* (ēi)-ի *է* (ē) մասնիկի նախնականության վերաբերյալ հայերենագիտության մեջ միասնական պատկերացում չկա: Ա. Մելյեն և Հ. Աճառյանը, հիմք ընդունելով մասնավորապես 9-րդ դ.-ից պահպանված հնագույն հայկական ձեռագիր ավետարանի (887 թ.) տվյալները, անցյալ անկատարի վերջավորության նախնական ձև են համարել *-էի* (ei)-ն, այսինքն *է* (e)-ով (տե՛ս **Meillet A.**, *Esquisse d'un grammaire comparée de l'arménien classique*, Vienne, 1936, էջ 126-127, **Ачарян Р.**, *Имперфект в древнеармянском и некоторых индоевропейских языках // Доклады и сообщения, т. IV, АН СССР, Институт языкознания, М., 1953, էջ 85-90, Հ. Աճառյան*, *Լիակատար քերականություն հայոց լեզվի*, հ. IV, գ. Ա, Եր., 1959, էջ 366, **Թ. Ղարազոյան**, *Հին հայերենի խոնարհման համակարգի ծագումը*, Եր., 1961, էջ 131-132): Ուրիշները, վկայակոչելով այլ փաստարկներ, այդ թվում՝ այն, որ ինչպես հին ձեռագրերում, այնպես էլ, օրինակ, վաղ միջնադարյան եկեղեցիների վրա արված արձանագրություններում, որոնք թվագրվում են 7-8-րդ դդ., հաճախ շփոթված են *է*-ն և *է*-ն, այն է՝ մեկը գրված է մյուսի փոխարեն, նախնական են համարել *է*-ով ձևերը (տե՛ս **Է. Աղայան**, նշվ. աշխ., էջ 358-359, **Ս. Գյուլբուրադյան**, *Հայերենի ուղղագրության պատմություն*, Եր., 1973, էջ 41-42): Թե՛ն Ն. Մառն այդպիսի հարց չի քննել, բայց նրա քերականության մեջ ևս անցյալ անկատարը ներկայացված է *-էի*-ով: Բացի այդ, նա նշում է, որ անկատարի վերջավորություններն ունեին նաև ինքնուրույն գործածություն՝ իբրև օժանդակ բայ, որից կարելի է դատել, որ քննելու դեպքում, ըստ ամենայնի, կպաշտպաներ երկրորդ տեսակետը (տե՛ս **Мартъ Н.**, *Грамматика древнеармянского языка (этимология)*, С.-П., 1903, էջ 169): Ա. Ղազարյանն անցյալ անկատարի վերաբերյալ իր քննության մեջ ընդհանուր առմամբ հակված է Հ. Աճառյանի տեսակետին, բայց վերջավորության *է*-ի, թե՛ *է*-ի նախնականության հարցում նրա դիրքորոշումը հստակ չէ (տե՛ս **Ս. Ղազարյան**, *Հայոց գրական լեզվի պատմություն*, Եր., 1961, էջ 326-333): Գ. Ջահուկյանը հիմնահարցը քննել է բացառապես պատմահամեմատական տեսանկյունից (տե՛ս **Джаукян Г. Б.**, *Сравнительная грамматика армянского языка*, Ер., 1982, էջ 187 և 230՝ ծնթթ. 63), ուստի նրա տեսակետին կանոնադաշտնանք խնդրի տարածամանակյա քննության մեջ:

Հին ձեռագրերում և արձանագրություններում *է*-ի և *է*-ի գրությունների շփոթը վկայում է, որ՝ 1) արդեն գրաբարյան շրջանում տեղի էր ունեցել այդ տառերով նշանակված հնչյունների հնչարտաբերական նույնացում կամ առնվազն խիստ մերձեցում, 2) գրիչները, հաճախ չունենալով պահանջված գրագիտությունը, մասնավորապես չտիրապետելով բառերի և բառաձևերի ստուգաբանական գրությանը (դա միանգամայն բնական պիտի համարել այն ժամանակների համար), հիմնականում առաջնորդվել են գործող արտասահմանությամբ, որն էլ հանգեցրել է այդ տառերի գործածության շփոթի, 3) հին գրությունների վիճակագրական ուսումնասիրությունը ևս չի կարող հարցի հանգուցալուծման հուսալի միջոց լինել: *այդպիսի միջոց կարող է լինել միայն խնդրի պատմահամեմատական, այն է՝ տարածամանակյա հայեցակետով իրականացվող քննությունը*: Ուստի, նկատի ունենալով գրաբարագիտության ավանդույթը, համաժամանակյա հայեցակերպում կարելի է առաջնորդվել անկատարի վերջավորության *-էի* (ēi) գրությամբ, հետևաբար՝ տարբերակել *էի* (ēi) երկբարբառ, իսկ հիմնահարցի վերջնական հանգուցալուծումը թողնել տարածամանակյա քննությանը:

(հմմտ. *Գեղեղն, Գէորգ, Թաղէոս, Մատթէոս, Պտղոմէոս, Տիմոթէոս*), *իա* (ia) (հմմտ. *միակ, միասպէս* «հավասարապէս», *միակեաց* «մենակյաց, ճգնավոր», *Ազարիա, Ամասիա* և այլն), *իե* (ie) (հմմտ. *միեղէն* «միակ, եզակի», *միեղինություն* «միեղեն՝ եզակի լինելը» և այլն), *իէ* (iē) (հմմտ. *սպրիէլ*⁶, *Գաբրիէլ, Դանիէլ, Բզնասոիէ*, վերջինն իբրև կոչական գործածվելիս⁷), *իո* (io) (հմմտ. *Անտիոք, Սիոն, Տիբերիոս, Քիոս*), և 8 երկբարբառակերպով՝ *ւա* (ua) (հմմտ. *նաւագ, աւագ, աւագ, հիւանդ, աւանդ, հաւասար* և այլն), *ւե* (ue) (հմմտ. *աւելի, նաւել, աւեր, աւետարեր, աւետեմ* «ուրախալի լուր հաղորդել» և այլն), *ւի* (ui) (հմմտ. *յաւիտեան* «մշտատևություն», *յաւիտեանս* «հավիտենապէս», *յաւիտենից* և այլն), *ւէ* (uē) (հմմտ. *յաւէժ (յաւերժ), յաւէտ, յաւէտողէշ* «մշտադալար», *յաւէտանալ* «հավերժանալ» և այլն), *յա* (ja) (հմմտ. *աղայսք* «(մենք) աղում էինք / աղացվում էինք» (անց. անկ. ժ., հգն. թ., 1-ին դ.), *գոյսք* «(մենք) կայինք, գոյություն ունեինք» (անց. անկ. ժ., հգն. թ., 1-ին դ.) և այլն), *յո* (jo) (հմմտ. *յովագ, Յովտ, յորդ* և այլն), *յի* (ji) (հմմտ. *գողանայիր* «գողանում էիր» (անց. անկ. ժ., եգ. թ., 2-րդ դ.), *ամայիր* «թափում էիր» (անց. անկ. ժ., հգն. թ., 2-րդ դ.) և այլն), *յե* (je) (հմմտ. *հայեցայ* «նայեցի» (անց. կատ. ժ., եգ. թ., 1-ին դ.), *հայեցիս* «նայելու ես / նայես / կնայես / պիտի նայես» (ստոր. 2-րդ ապո. ժ., եգ. թ., 2-րդ դ.) և այլն): Իհարկե, ըստ Հ. Հյուբշմանի, որին հետևել է հայերենագետների մեծ մասը, երկբարբառ են ձայնավորի և կիսաձայնի՝ բաղաձայնանախորդ դիրքում հանդիպող կապակցությունները, իսկ բառավերջում և միջձայնավորական դիրքում հանդիպողները երկբարբառ չեն, այլ ձայնավորի և բաղաձայնի պարզ հաջորդականություններ⁸: Այսինքն՝ Հ. Հյուբշմանի և նրա հետևորդների կարծիքով՝ այդ դիրքում կիսաձայնավորողը վերածվում է սովորական բաղաձայնի: Ըստ այդմ՝ *նաւագ*-ը հնչել է [navaz], այլ ոչ թե [navaz], *աւագ*-ը՝ [avag], այլ ոչ թե [avag], *աւագ*-ը՝ [avaz], այլ ոչ թե [avaz]: Այս առնչությամբ պիտի նկատի ունենալ հետևյալը. 1) Նշվածներից միջձայնավորական դիրքում հանդիպում է միայն *ւա* (ua)-ն, մյուսները բաղաձայնանախորդ դիրքում են, հետևաբար նույնիսկ Հյուբշմանի չափանիշով դրանց երկբարբառակերպային բնույթը կասկածից դուրս է: 2) Այժմ էլ մնում ենք այն կարծիքին, որ արդարացի էին Ա. Մեյեն և Հ. Աճառյանը, երբ բոլոր դիրքերում, այսինքն՝ նաև բառավերջում և երկու ձայնավորի միջև, ձայնորդին վերագրում էին կիսաձայնական, այլ ոչ թե՝ բաղաձայնական արտաբե-

⁶ «Հռովմեական տոմարի չորրորդ ամիսը՝ *սպրիլ* (Հ. Աճառյան, Հայերեն արմատական բառարան (այսուհետև՝ ՀԱԲ), հ. 1, Եր., 1971, Եր., էջ 243. հմմտ. նաև՝ *Նոր բառգիրք հայկազգեան լեզուի* (այսուհետև՝ ՆՀԲ), հ. 1, Եր., 1979, Եր., էջ 279, *Առձեռն բառարան հայկազգեան լեզուի*, Անթիլիաս, 1988, էջ 107): Ըստ ՆՀԲ-ի՝ հանդիպում է նաև *սպրիէլ* տարբերակով (տե՛ս նույն տեղը):

⁷ Տե՛ս **Ա. Աբրահամյան**, նշվ. աշխ.:

⁸ Տե՛ս **Հ. Հյուբշման**, Հայագիտական ուսումնասիրություններ, Եր., 2004, էջ 70-71:

րություն: Այլապես Մաշտոցին ոչինչ չէր խանգարի բառավերջում և երկու ձայնավորի միջև արտաբերվող ձայնորդը գրությամբ արտահայտելու շրթնատամնային [վ/վ] բաղաձայնի գրային նշանով՝ *վ* (v), այլ ոչ թե՛ *ւ* (u)-ով, եթե իրականում այն արտաբերվեր իբրև բաղաձայն [վ/վ], քանզի դա էր պահանջում գրության մաշտոցյան սկզբունքը⁹: Կարծում ենք՝ հոգուտ այդ տեսակետի են վկայում, օրինակ, *բով* (-ոյ/-ու), *գով*, *կով* (-ու), *հով* (-ոյ) բառերի գրությունները, որոնցում բառավերջի բաղաձայնական շրթնատամնային [վ/վ] հնչյունը գրվել է *վ* (v)-ով, ի տարբերություն, օրինակ՝ *բու* (սեռ. *բուոյ*), *դու* (անձն. դեր., սեռ. *քո*), *կու* «թրիք» (սեռ. *կուոյ*), *նու* «հարս» (սեռ. *նուոյ*), *չու* «տեղափոխություն» (սեռ. *չուոյ*) բառերի, որոնց բառավերջի դիրքում հնչել է կիսաձայնական *ւ* (u) բաղադրիչով երկբարբառակերպ: Ուշագրավ է, որ Գ. Ջահուկյանը հին հայերենում՝ փակ վանկում, [ou] (իմա՝ երկբարբառային) արտաբերություն է վերագրել նույնիսկ գրային *ու* [ov]-ին (հմմտ. *կով-ք* [k^hov-k^h] «կովեր»)՝¹⁰ ըստ ամենայնի՝ նկատի ունենալով տվյալ դեպքում *ու*-ի երկբարբառային ծագումը (հմմտ. **g^hou* > *կով*): Սա նշանակում է, որ, ըստ Գ. Ջահուկյանի, բաց վանկում բաղաձայնական հնչյուն ունեցող [վ/վ]-ն, որը սերել է հ.-ե. **u*-ից, փակ վանկում վերականգնել է իր կիսաձայնական (= ձայնորդական) հնչարտաբերությունը: 3) Ինչ վերաբերում է հնարավոր հարցին, թե ինչու, օրինակ, *նաւագ*, *աւագ*, *հիւանդ*, *հաւասար*, *աւելի*, *աւեր*, *աւետեմ*, *յաւիտեան*, *յաւիտենից*, *յաւէժ* (*յաւերժ*), *յաւէտ*, *աղայաք* և նման բառերում պիտի տարբերակել *ւա*, *ւե*, *ւի*, *ւէ*, *յա*, այն է՝ «S + V» տիպի, այլ ոչ թե՛ *աւ*, *այ*, այսինքն՝ «V + S» տիպի կաղապարով երկբարբառակերպեր, կարծում ենք՝ պատասխանը պարզ է. նշված բառերում կիսաձայնն անցնում է հաջորդ վանկին և սերտ (= երկբարբառային) միասնություն է կազմում հաջորդող ձայնավորի հետ (հմմտ. *նաւ-աւագ*, *աւ-աւագ*, *հիւ-անդ*, *հաւ-ասար*, *աւ-ւելի*, *աւ-ւեր*, *աւ-ւետեմ*, *յաւ-ւիտեան*, *յաւ-ւիտե-նից*, *յաւ-ւէժ* (*յաւ-ւերժ*), *յաւ-ւէտ*, *աւ-ղայաք*):

Ձայնավորական կազմությամբ վերոհիշյալ երկբարբառներն առաջինը տարբերակել է Հ. Աճառյանը «Հայոց գրերը» աշխատության մեջ¹¹: Իհարկե, *էի* (ēi)-ի փոխարեն նա տարբերակել է *եի* (ei) երկբարբառ, ըստ ամենայնի՝ ծանոթագրություն 5-ում նշված նկատառումներով: Դրանցից բացի, նա տարբերակել է նաև *ա*, *ե*, *է*, *ի*, *ո* ձայնավորների և *ու*-ի, կրկնակ *ու*-երի (*ուու*) բաղադրությամբ երկբարբառներ: Ինչ վերաբերում է *ու* (ou)-ով կազմություններին՝ *իու*, *ուա*, *ուե*, *ուէ* և այլն, ինչպես արդեն նշել ենք, դրանք եռաբաղադրիչ են, հետևաբար՝ եռաբարբառակերպեր են՝ «V₁ + V₂ + S» և «V₁ + S + V₂» կաղապարներով:

Ձայնավորական կազմությամբ («V₁ + V₂» կաղապարով) վերոհիշ-

⁹ Sté u Meillet A., նշվ. աշխ., էջ 48-49, Հ. Աճառյան, Հայոց գրերը, էջ 588:

¹⁰ Sté u Джаукян Г. Б., նշվ. աշխ., էջ 27:

¹¹ Sté u Հ. Աճառյան, Հայոց գրերը, էջ 581:

յալ *էա, էի, էո, իա, իե, իէ, իո* երկբարբառների տարբերակումը կարող է խոցելի թվալ դրանց բաղադրիչների վանկային բաշխվածության առումով, այն է՝ դրանք հին հայերենում արտաբերվել են մեկ վանկի կազմում, թե՛, այնուամենայնիվ, տրոհվել են երկու վանկերի միջև: Այսինքն՝ *էա-պէս*, թե՛ *է-ա-պէս*, *շար-ժէիք*, թե՛ *շար-ժէ-իք*, *Գէորգ*, թե՛ *Գէ-որգ*, *միա կ*, թե՛ *մի-ակ*, *միե-ղէն*, թե՛ *մի-ե-ղէն*, *Իգ-նա-տիէ*, թե՛ *Իգ-նա-տի-է*, *Ան-տիոք*, թե՛ *Ան-տի-ոք* և այլն: Այլ կերպ նշված ձայնավորական հաջորդականությունները, հնչյունաբանական տեսանկյունից լինելով երկբաղադրիչ՝ երկհնչյուն, հնչյութաբանական տեսանկյունից երկհնչյութ կազմություններ են, թե՛ միահնչյութ: Լեզվաբանական գրականության մեջ ոչ հազվադեպ այս հիմնախնդրի լուծման կարևոր եղանակ է համարվում ձևաբանական չափորոշիչի կիրառումը, ըստ որի՝ երկու ձայնավորի կամ երկու վանկարարի հաջորդականությունը հնչաշղթայում (այլ ոչ թե միևնույն վանկի կառուցվածքում) պիտի համարել երկբարբառ, եթե դրանք չեն տրոհվում ձևությային կարով¹²: Ն. Տրուբեցկոյը երկբարբառ չի համարում անգամ բառավերջի դիրքում՝ մեկ վանկի կազմում արտաբերվող «ձայնավոր + i» կապակցությունը, եթե մեկ այլ բառաձևում *i* [j]-ն կարող է փոխարինվել այլ հնչյութով (ձևաբանական մասնիկով) (հմմտ. ու. *да-ѣ* [daj] «տուր» // *да-тъ* [dat'] «տալ» // *да-ѣѣ* [das'] «կտաս») ¹³:

Ձևաբանական չափանիշի կիրառումը ոչ միայն չի ընդլայնում երկբարբառային կազմությունների տարբերակման շրջանակը, այլև, ընդհակառակը, որոշակիորեն սահմանափակում է դրա հնարավորությունը: Այսպես, վերը նշված ձայնավորական հաջորդականությունների նկատմամբ ձևաբանական անտրոհելիության չափանիշի կիրառման դեպքում նշվածներից ոչ մեկը չի կարող համարվել կայուն երկբարբառ: Նույնիսկ *էի*-ն, որի բաղադրիչները չեն տրոհվում ձևությային կարով, որովհետև իբրև անցյալ ժամանակի իմաստ արտահայտող քերականական ձևությ ձևաբանական մեկ ամբողջություն է (հմմտ. *շարժ-էի* «(ես) շարժում էի») կամ այդպիսի ձևային մաս (հմմտ. *շարժ-էիք* «(դու) շարժում էիք», *շարժ-էիք* «(դուք) շարժում էիք», *շարժ-էին* «(նրանք) շարժում էին») ¹⁴, վանկային բաշխման տեսանկյունից դադարում է միասնական ամբողջ լինելուց (հմմտ. *շար-ժէ-ի, շար-ժէ-իք* և այլն) ¹⁵:

Լ. Շչերբան առաջարկել է երկբարբառի բնորոշման էլ ավելի

¹² Տե՛ս **Зиндер Л. Р.** Общая фонетика, М., 1979, էջ 212-216:

¹³ Տե՛ս **Трубенкой Н. С.** Основы фонологии. М., 2000, էջ 61: Հմմտ. հին հյ. *բա-յ* «(նա) ասում է», ի հակադրություն *բա-մ* «(ես) ասում եմ», *բա-ս* «(դու) ասում ես» ձևերի, *գո-յ* «(նա) կա», ի հակադրություն *գո-մ* «(ես) կամ», *գո-ս* «(դու) կաս» ձևերի:

¹⁴ Նկատի ունենք համաժամանակյա հայեցակերպում, ընդ որում՝ որպես *էի*, այլ ոչ թե՛ *էի*, ուր *է*-ն չի կարող առանձնացվել իբրև լծորդիչ, որովհետև գրաբարյան հայերենում պարզապես չեն եղել է լծորդության բայեր:

¹⁵ Անցյալ անկատարի եզ. թ. 3-րդ դ. *շարժէր*, և հզն. թ. 1-ին դ. *շարժէաք*. ըստ էության, տեղի է ունենում երկբարբառի երկրորդ բաղադրիչի հերթագայություն մի դեպքում՝ գրոյի հետ (*շարժ-էի-ր - շարժէ(թ)-ր՝ ի/թ*), մյուս դեպքում՝ ա-ի հետ (*շարժ-էա-ք ի/ա*):

խիստ չափանիշ, ըստ որի՝ իսկական երկբարբառ են մեկ վանկի կառուցվածքում հանդես եկող երկու ձայնավորի այնպիսի անմիջական հաջորդականությունները, որոնք այդ վանկում հավասարաթեք են¹⁶: Այսինքն՝ երկուսն էլ վանկարար են, այլ ոչ թե՝ նրանցից մեկը միայն, ինչպիսին է, օրինակ, *ա*-ն հին հայերենի *էա* երկբարբառի կազմում, առավել ևս՝ *աւ*-ի կամ *այ*-ի կազմում:

Վերոշարադրյալը հիմք է տալիս արձանագրելու հետևյալ իրողությունները. 1) հին հայերենը չի ունեցել երկբարբառ, որի բաղադրիչները վանկային կառուցվածքում լինեն հավասարաթեք, 2) միևնույն ձևությոնի վերաբերող ոչ բոլոր ձայնավորական հաջորդականություններն են վերաբերում միևնույն վանկին (հմմտ. *շարժ-էիր*, բայց *շար-ժէ-իր*):

Հավասարաթեքության չափանիշը հիմք ընդունելու դեպքում ոչ միայն հին հայերենում, այլև առհասարակ երկբարբառային կազմություններ տարբերակող լեզուների ճնշող մեծամասնության դեպքում դրանց գոյությունը կբացառվի¹⁷: Մեր կարծիքով, դա խիստ սուբյեկտիվ և ծայրահեղ չափանիշ է: Ըստ իս՝ ընդունելի կարող է լինել երկբարբառային կազմությունների տարբերակման երկու չափանիշ՝ *վանկային բաշխման* և *ձևային կարով անտրոհելիության*: Նշված չափանիշները հիմք ընդունելու դեպքում կտարբերակվեն երկու կարգի երկբարբառներ. 1) *կայուն երկբարբառներ*, որոնց բաղադրիչները ոչ միայն արտաբերվում են միևնույն վանկում, այլև վերաբերում են միևնույն ձևային. հին հայերենի երկբարբառներից այդպիսին է միայն *էա*-ն (հմմտ. *պատանէակ*, *սեան*, *տեարց* «տերերի» (տէր գոյ., հգն. սեռ. հլ.), *յանցեար* «մեղք գործել, սխալվել» («յանցանել» բայի անցյ. կատ. ժ., եզ. թ., 2-րդ դ.), 2) *ոչ կայուն երկբարբառներ*, որոնք բավարարում են այդ պայմաններից մեկին, այն է՝ նրանց բաղադրիչներն արտաբերվում են միևնույն վանկում, բայց վերաբերում են տարբեր ձևայինների կամ, ընդհակառակը, վերաբերում են միևնույն ձևային, բայց բաշխվում են երկու հաջորդական վանկերի միջև: Երկրորդ տեսակի են մյուսները՝ *էա* (հմմտ. *էակ*՝ *է-ակ*), *էէ* (հմմտ. *Գալիլէէ*՝ *Գա-լի-լէ-է*), *էի* (հմմտ. *ունէին*՝ *ու-նէ-ին*), *էո* (հմմտ. *Գէորգ*՝ *Գէ-որգ*), *իա* (հմմտ. *միակ*՝ *մի-ակ*), *իե* (հմմտ. *միեղեն*՝ *մի-ե-ղեն*), *իէ* (հմմտ. *Գաբրիէլ*՝ *Գաբ-րի-էլ*), *իո* (հմմտ. *Անտիոք*՝ *Ան-տի-ոք*): Ոչ կայուն տեսակին վերաբերողները երկբարբառ են հնչաշղթայում, ավելի ստույգ՝ բառի (/բառաձևի) կազմում, այլ ոչ թե վանկի կամ ձևային, իսկ հնչաշղթայից դուրս նրանց երկբարբառային բնույթը կարող է խնդրահարույց լինել: Այդպիսիք բնույթով միջանկյալ դիրք ունեն կայուն երկբարբառի և երկբարբառակերպի միջև: Դրանք կայուն երկբարբառի հետ ընդհանուր են բաղադրիչների

¹⁶ Տե՛ս **Зиндер Л. Р.**, նշվ. աշխ., էջ 210, **Бондарко Л. В.**, Дифтонг // Лингвистический энциклопедический словарь, М., 1990, էջ 138:

¹⁷ Այդ չափանիշով, որի հեղինակը, ըստ ամենայնի է. Շչերբան է, երկբարբառներ տարբերակվել են տունգուս-մանջուրական լեզվաբնիկների ուղեկերեն լեզվում (տե՛ս **Зиндер Л. Р.**, նշվ. աշխ., **Суник О. П.**, Удэгейский язык // Языки народов СССР, т. V, Л., 1968, էջ 212):

կազմով (երկուսն էլ ձայնավոր են և առանձնաբար տվյալ լեզվում կարող են իրականացնել վանկարար գործառույթ), իսկ երկբարբառակերպերի հետ ընդհանուր են նրանով, որ երկհնչույթ կապակցություններ են. դրանց բաղադրիչները կարող են տրոհվել, ի տարբերություն կայուն երկբարբառների, որոնց բաղադրիչները կարող են հնչունափոխվել՝ վերածվելով պարզ ձայնավորի (հմմտ. *պատանեակ-պատանեկի, սենեակ-սենեկապան* և այլն), բայց չեն տրոհվում ձևաբանական կարով: Կայունները հնչույթաբանորեն մեկ միավոր են՝ համարժեք են մեկ բարդ հնչույթի և որպես մեկ ամբողջություն՝ կարող են հերթագայվել ձայնավորի (հմմտ. *պատանեակ // պատանեկի, սենեակ // սենեկապան, տեարց // տէր* և այլն), այլ երկբարբառի կամ երկբարբառակերպի հետ (հմմտ. *սեան // սին, արեան // արին* և այլն):

Վանկային բաշխման (հնչունաբանական չափանիշ) և ձևային կարի անտրոհելիության (ձևաբանական չափանիշ) առումներով երկբարբառակերպերն առավելապես ընդհանրություն են դրսևորում կայուն երկբարբառների հետ, սակայն դրանցից տարբերվում են նրանով, որ երկբարբառակերպերի բաղադրիչներից մեկը՝ ձայնորդը, դիտարկվող լեզվում (տվյալ դեպքում՝ հին հայերենում), չունի վանկարար գործառույթ:

Եվս մեկ ուշագրավ դիտարկում. ստացվում է, որ հին հայերենում միևնույն ձայնորդական բաղադրիչով եղել են և՛ «V + S», և՛ «S + V» տիպի կաղապարներով երկբարբառակերպեր, այսինքն՝ *աւ* և *ւա*, *ել* և *լե*, *իւ* և *լի*, *այ* և *յա*, *ոյ* և *յո*, նույն կերպ՝ *ու* և *լո*: Կարծում ենք՝ այս իրողությունը ևս հավելյալ կերպով հուշում է հին հայերենի *ու* (օւ)-ի երկբարբառային, այլ ոչ թե պարզ ձայնավորական բնույթի մասին:

Կարծում ենք՝ վերոշարադրյալը բավարար հիմք է տալիս հին հայերենում տարբերակելու 8 (ութ) երկբարբառ, որոնցից մեկը՝ *կայուն* (*եա*), մյուսները՝ *ոչ կայուն* տեսակի (*էա*, *էի*, *էո*, *իա*, *իե*, *իէ*, *իո*) և 15 (տասնհինգ) երկբարբառակերպ (*աւ*, *ել*, *իւ*, *ու*, *ւա*, *լե*, *լի*, *լէ*, *լո*, *այ*, *ոյ*, *յա*, *յի*, *յե*, *յո*):

II. Հին հայերենի եռաբարբառային կազմությունների համաժամանակյա քննությանը նվիրված մեր վերջին աշխատանքում տարբերակել ենք *եայ* (հմմտ. *հրեայք* «հրեաներ»), *եաւ* (հմմտ. *պատանեաւք* «պատանիներով»), *ւոյ* (հմմտ. *բարւոյ*(ն) «բարու»), *ուա* (հմմտ. *նուագ* «1. անգամ. 2. գինի խմելու գավաթ»), *ուի* (հմմտ. *նուիրակ* «եկեղեցական դեսպան»), *ուե* (հմմտ. *արուեստ*), *ուէ* (հմմտ. *պատուէր* «հրաման. պատուիրան»), *ուո* (հմմտ. *թուոց* «թվերի») եռաբարբառակերպերը¹⁸: Այս դեպքում էլ, սակայն, մեր նոր դիտարկումները ցույց են տալիս, որ վերոհիշյալ ցանկը ևս չի կարող ամբողջական համարվել: Մասնավորապես, այդ շարքը պիտի համարել *յաւ* (հմմտ. *յաւղ* «հող, կապ», *յաւղուած* «կապակցություն. շարադրանք», *յաւժար* «պատրաստական,

¹⁸ Տե՛ս Վ. Պետրոսեան, Եռաբարբառային և քառաբարբառային կազմությունները հին հայերենում (համաժամանակեայ քննություն) // Էջմիածին, 2022, թիվ 6, էջ 128-136:

հավան»), *յոյ* (հմմտ. *յոյժ* «խիստ, սաստիկ», *յոյր* «գեր, գիրուկ», *յոյլ* «ծույլ, դանդաղկոտ»), *յու* (հմմտ. *յուզել* «խուզարկել, պրպտել», *յուլու-թիւն* «ծուլութիւն», *յու ւշ* «հիշի՛ր, զգուշացի՛ր», *յուշիկ* «զգուշ, կամաց», *յուրան* «1. ցորենի դեզ. 2. բուրգ, կոթող. 3. կճուճ, պուտուկ»¹⁹), *յիւ* (հմմտ. *յիւրել* «ձգել, երկարացնել (պարանը)»²⁰, *յիւրնուած* «կազմութիւն (՞)»²¹), *էու* (հմմտ. *էութիւն* «1. Գոյացութիւն. 2. աստվածութիւն»), *իու* (հմմտ. *միութիւն* «միակ լինելը») եռաբարբառակերպերով: Եթե *էու*-ի և *իու*-ի՝ իբրև մեկ-միասնական բաղադրիչների արտաբերության հարցը կարող է խնդրահարույց լինել վանկային բաշխման առումով, այն է դրանք արտաբերվում են մե՞կ վանկում (*էութիւն, միութիւն*), թե՞ տրոհվում են երկու հաջորդական վանկերի միջև (*է-ու-թիւն, մի-ու-թիւն*), ըստ այդմ՝ ոչ թե եռաբարբառակերպեր են, այլ «պարզ ձայնավոր + երկբարբառակերպ» հաջորդականություններ, ապա մյուսների դեպքում նման հարցադրում լինել չի կարող: Ակնհայտ է, որ մյուս բոլոր բաղադրիչներն արտաբերվում են մեկ վանկում, հետևաբար հնչարտաբերական մեկ ամբողջություն են (հմմտ. *յաւղ, յաւ-դուած, յոյժ, յոյր, յուզել, յու-լութիւն, յու ւշ, յու-շիկ, յիւ-րել*) և վերաբերում են միևնույն ձևույթին, այն է՝ չեն տրոհվում ձևույթային կարով (հմմտ. *յաւղ-ուած, յոյժ, յոյր, յուզ-ել* (*յոյզ* «որոնում, փնտրում» հիմքից), *յուլ-ութիւն* (*յոյլ* «ծույլ, դանդաղկոտ» հիմքից), *յու ւշ, յուշ-իկ* (*յուշ* «ուշ, կամաց» հիմքից), *յիւր-ել*): Իսկ *էու* և *իու* կառույցների մասին պիտի կրկնենք նույնը, ինչ որ ասվեց նմանօրինակ երկբարբառակերպային կազմությունների առնչությամբ. առնվազն հնչաշղթայում՝ բաղաձայնանախորդ դիրքում, դրանք արտաբերվել են իբրև եռաբարբառային կազմություններ, հետևաբար այդ կառույցները ևս պիտի ներառել եռաբարբառակերպերի մեջ: Հատկապես, որ խոսքը ոչ թե բուն եռաբարբառների, այն է՝ երեք ձայնավորից կամ երեք վանկարար հնչյունից կազմված բաղադրիչների մասին է (իսկ այդպիսիք հին հայերենը չի էլ ունեցել), այլ եռաբարբառակերպերի, այլ կերպ ոչ բուն եռաբարբառների մասին:

Ըստ բաղադրիչների կայունության՝ եռաբարբառակերպերը ևս կարող են բաժանվել երկու տեսակի. 1) *կայունների*, որոնք վերաբերում են միևնույն վանկային կառուցվածքին, ավելի պարզ՝ արտաբերվում են նույն վանկում և չեն տրոհվում ձևույթային կարով, 2) *ոչ կայունների*, որոնք կարող են տրոհվել երկու հարևան վանկերի միջև,

¹⁹ Իմաստների համար տե՛ս **Հ. Աճառյան**, ՀԱԲ, հ. III, Եր., 1977, էջ 411, **Գ. Ջահուկյան**, Հայերեն ստուգաբանական բառարան (այսուհետև՝ ՀՄԲ), Եր., 2010, էջ 557, *Առձեռն բառարան հայկազնեան լեզուի*, էջ 600, **Ռ. Ղազարեան**, Գրաբարի բառարան, Անթիլիաս, 2004, էջ 925:

²⁰ Օրինակն ըստ՝ **Ռ. Ղազարեան**, նշվ. աշխ., էջ 915: ՆձԲ-ն այս ձևը նշում է որպես *յիւրեւ-ի* «ընդ իրեարս կցել. յեռույ, և մխել, մղել. յարել. կարկառել. երկայնել» գրչագրական տարբերակ (*Նոր բառգիրք հայկազնեան լեզուի*, հ. 2, Եր., 1981, էջ 561): Բառը չունեն **Հ. Աճառյանի** ՀՄԲ-ը, **Գ. Ջահուկյանի** ՀՄԲ-ը, *Առձեռն բառարան հայկազնեան լեզուի*-ն:

²¹ Ըստ **Հ. Աճառյանի**՝ «թերևս ուղղելի *յօրինուած*» (**Հ. Աճառյան**, ՀԱԲ, հ. III, էջ 400): Հմմտ. **Գ. Ջահուկյան**, ՀՄԲ, էջ 553:

կամ որոնց կարող է բաժանել ձևությային կարը: Առաջին տեսակին կվերաբերեն *եաւ, եայ, տյ, ուա, ուի, ուե, ուէ, ուո, յաւ, յիւ, յոյ, յու* եռաբարբառակերպերը, իսկ երկրորդ տեսակին՝ *էու-ն* և *իու-ն*:

Եռաբարբառակերպի տարբերակման վերոշարադրյալ մոտեցումը թելադրում է վերանայել նաև *իայ*-ի առնչությամբ ավելի վաղ մեր արտահայտած տեսակետը²²: Նշված աշխատանքում *իայ*-ը համարել էինք «*ի* ձայնավոր + *այ* երկբարբառակերպ» հաջորդականություն՝ նկատի ունենալով, որ բաղադրյալ կազմություն ունեցող «միայն» բառում նրա բաղադրիչները տրոհվում են երկու վանկերի միջև՝ *մի-այն*: Սակայն, հաշվի առնելով, որ *իայ* հաջորդականությունը հանդիպում է նաև մի շարք հատուկ անունների սեռականի ձևերում (հմմտ. *Ազարիայ* (սեռ. *Ազարիա-ի*), *Ամասիայ* (սեռ. *Ամասիա-ի*), *Չաքարիայ* (սեռ. *Չաքարիա-ի*), *Կիլիկիայ* (սեռ. *Կիլիկիա-ի*), *Սամարիայ* (սեռ. *Սամարիա-ի*)²³, *Քիայ* (սեռ. *Քիոս-ի*)), որոնցում այն չի տրոհվում տարբեր վանկերի միջև (հմմտ. *Ա-զա-րիայ, Սա-մա-րիայ, Չա-քա-րիայ* և այլն), ըստ այդմ՝ *իայ*-ը ևս պիտի դասել եռաբարբառակերպերի կարգում: Ուշագրավ է, որ, ըստ վանկային բաշխման, *իայ*-ը դրսևորում է երկակի վարքագիծ. որոշ կիրառություններում այն վերաբերում է *ոչ կայուն* տեսակին (*մի-այն, Լի-այ* (*Լիա* հատուկ անվան սեռ. իլ. ձևը))²⁴, մյուսներում՝ *կայուն* (*Ազա-րիայ, Սամա-րիայ, Չաքա-րիայ*):

Այդպիսով, բավարար հիմքեր կան հին հայերենում ճանաչելու 15 (տասնհինգ) եռաբարբառակերպի գոյությունը, որոնք, ըստ բաղադրիչների հաջորդման կարգի, ներկայացնում են երեք տիպի կաղապար՝ «V₁+V₂+S» (հմմտ. *եաւ, եայ, իայ, էու, իու*), «V₁+S+V₂» (հմմտ. *ուա, ուի, ուե, ուէ, ուո*), «S₁+V+S₂» (հմմտ. *տյ, յաւ, յիւ, յոյ, յու*):

Վերոշարադրյալը հիմք է տալիս հետևյալ եզրահանգումների համար.

1) Ըստ վանկային բաշխման և ձևությային կարի անտրոհելիության սկզբունքների կիրառման՝ հին հայերենում կտարբերակվի ութ երկբարբառ և տասնհինգ երկբարբառակերպ:

2) Երկբարբառներից *եաւ*-ն վերաբերում է *կայուն*, մյուսները՝ *ոչ կայուն* տեսակին: Կայունները հնչությաբանորեն համարժեք են մեկ բարդ հնչույթի, իսկ ոչ կայունները երկու տարբեր հնչույթների համադրություն են:

²² Տե՛ս Վ. Պետրոսեան, Եռաբարբառային և քառաբարբառային կազմությունները հին հայերենում (համաժամանակեայ քննություն), էջ 130:

²³ Որպես *Սամարիա*-ի սեռական նշվում է նաև *Սամարեայ* ձևը (տե՛ս Վ. Առաքելեան, նշվ. աշխ., էջ 30):

²⁴ *Միայն-ից* և նրանից բաղադրված բառերից (հմմտ. *միայնաբար, միայնակ, միայնակեաց, միայնուհի* «միանձնուհի» և այլն) բացի, *իայ* հաջորդականությունը հանդիպում է նաև *միայաւոյ* (միայոյ) բառի կազմում: Այս դեպքում, սակայն, կարող է խոսք լինել «*իա* երկբարբառ + *յաւ* եռաբարբառակերպ» կառույցի մասին, որովհետև, բացի այն բանից, որ *յ*-ն բարդության երկրորդ բաղադրիչի *յաւոյ*, սկզբնահնչյունն է և հնչերանգով էլ կապվում է նրա հետ, վանկային բաշխման սկզբունքով ևս անցնում է հաջորդ վանկին՝ *միա-յաւոյ*:

3) Հին հայերենն ուներ տասնհինգ (15) եռաբարբառակերպ, բայց չուներ ոչ մի եռաբարբառ: Ինչպես հնչարտաբերական, այնպես էլ ձևույթային կարի անտրոհելիության չափանիշներով եռաբարբառակերպերը զգալի ընդհանրություն ունեին երկբարբառակերպերի հետ՝ մեկ տարբերությամբ, որ եռաբաղադրիչ կազմություններ էին:

ВАРДАН ПЕТРОСЯН – К вопросу о древнеармянских дифтонгических и трифтонгических образований (синхроническое исследование). – Различение древнеармянских дифтонгических и трифтонгических соединений было и является сегодня одним из самых проблематичных вопросов. В зависимости от взятых в основе их различения критериев могут существенно меняться не только их количественные, но и качественные характеристики. Использование для этих компонентов разнопризнаковых критериев дает основание выделять дифтонги, дифтонгоиды и трифтонгоиды и классифицировать их по *устойчивым* и *неустойчивым* видам. К первому виду относятся те, которые независимо от изменения слова (/словоформы) (склонения, спряжения, словообразования) всегда воспроизводятся в том же слоге и относятся к той же морфеме. Ко второму виду относятся те, чьи дифтонгные/трифтонгные свойства обусловлены позицией, занимаемой в фонетической цепи, то есть в случае разделения или изменения фонетической цепи его составляющие могут оказаться в разных слогах или отделяться морфемным швом. Устойчивым среди древнеармянских дифтонгов был только *luu* (ea), который фонематически равнозначен одной сложной фонеме. Другие являются неустойчивыми, дифтонжными структурами. Дифтонгоиды и трифтонгоиды преимущественно, если не исключительно, относятся к устойчивому виду. Применение вышеназванных критериев дает основание различать в древнеармянском языке 1 устойчивый и 7 неустойчивых дифтонгов, 15 дифтонгоидов и 15 трифтонгоидов.

Ключевые слова: *устойчивый дифтонг, неустойчивый дифтонг, дифтонгоид, трифтонгоид, слоговое распределение, морфологический критерий, морфемный шов*

VARDAN PETROSYAN – On the Formation of Old Armenian Diphthongs and Diphthongal Structures (Synchronic analysis). – The distinction of Old Armenian (OA) diphthongs and diphthongal structures has always been one of the most controversial issues in Armenological studies. Their quantitative, as well as qualitative nature may be dependent on the criterion the distinction is based upon.

The application of various criteria to these constituents results in the distinction between diphthongs, diphthongoids and triphthongoids and their classification into stable and non-stable types. The first group is made up of the elements which, regardless of the word transformation (declension, conjugation, compounding) are always uttered in the same syllable and refer to the same morpheme. The second group contains the ones whose diphthongal/ triphthongal nature is conditioned by their position in the chain. It is noteworthy that owing to the division or change in the phonemic chain, its elements can find themselves in different syllables or can be divided by a morphemic seam. Among the OA diphthongs only *luu* (ea) was stable which, when viewed from a phonemic perspective, was equivalent to one complex phoneme. The rest were non-stable diphthongal structures. Most, if not all, diphthongoids and triphthongoids fall into the stable group. The application of the above-mentioned criteria makes it possible to distinguish 1 stable, 7 non stable diphthongs, 15 diphthongoids and 15 triphthongoids in Old Armenian.

Key words: *stable diphthongs, non-stable diphthongs, diphthongoids, syllable distribution, morphological criterion, morphemic seams*

MAIN FACTORS CONDITIONING THE ABSENCE OF THE FINAL *Ը*
AND THE ORIGIN OF THE FINAL *Ի* OF THE IMPERATIVE SINGULAR
IN ARMENIAN DIALECTS

SARGIS AVETYAN

The 2 sg. Imperative, which was formed in several ways in Old Armenian, has displayed a general tendency toward uniformity in the course of the further development of the Armenian language. In this respect, the strong analogical interaction between the imperative forms of simple verbs of the *ե* and *ի* conjugations is especially remarkable. Whereas in some dialects the original distinction between active vs. medio-passive inflection has been preserved, in other dialects simple verbs of the former *ե* and *ի* conjugations have coalesced into a single conjugation type partially or fully, whereby either the ending *-իք* or *-է* (< Old Arm. *-էւ*) of the 2 sg. Imperative has been generalized as a result of analogical extension. Furthermore, on the one hand, the final *ք* of the Imperative sg. ending *-իք* has been lost either by phonetic change or by analogy in a number of dialects, and on the other hand, the final vowel *-է* (going back to the Old Armenian diphthong *-էւ*) of the 2 sg. Imperative has undergone further change *է>ի* in the same dialectal areas. Hence, the final *ի* of the 2 sg. Imperative in such cases may in principle have resulted either from the phonetic and/or analogical loss of the final *ք* in the ending *-իք* or from the phonetic change *է>ի*. It is not infrequently hard to say unequivocally which of the two aforementioned developments is responsible for the appearance of the form in question. Besides, it is sometimes far from clear whether phonetic change or analogy has entailed the actual disappearance of the final *ք* in the ending *-իք* in a particular dialect. In this respect, the retention vs. loss of the final *ք* in the 2 sg. Imperative of irregular verbs mainly serves as a guideline for revealing the actual cause (namely, articulatory vs. analogical motivation) of the lack of the final *ք* in the 2 sg. Imperative of regular verbs, though the final *ք* of the 2 sg. Imperative of some irregular verbs is likely to have been restored secondarily by analogy with the 2 pl. Imperative in a few instances.

Key Words: *Old Armenian, Armenian dialects, analogical interplay, simple verbs of the ե and ի conjugations, analogical extension, the Imperative sg. ending -իք, phonetic change, analogy, the 2 sg. Imperative, irregular verbs, regular verbs*

In Old Armenian, the final *ք* of the imperative singular mainly occurred in the medio-passive ending *-իք*¹. However, not all verbs following

¹ Apart from this, the imperative singular of some irregular verbs was characterized by a root-final or desinential *-ք*, cf. *բերել - բե՛ք*, *ուտել - կե՛ք*, *տալ - տո՛ւք*, *դնել - դի՛ք*, *տանել - տա՛ք*.

the medio-passive inflection in the aorist, took the ending *-իր*. In general, the 2 sg. medio-passive Imperative exhibited formal diversity and sometimes doublets². Root stems of the aorist as well as monosyllabic *g*-aorist stems regularly received the ending *-իր* in the 2 sg. Imperative, cf. *հասանել – հասիր* «հասովի՛ր, կտրվի՛ր», *ուսանիլ – ուսիր*, *զգենում – զգեցիր*, *փախչիլ – փախիր*, *բանամ – բացիր* «բացվի՛ր» etc. Similarly, the ending *-իր* was typical of simple verbs of the *u* conjugation when used in the passive or medio-passive function, and the *են*-suffixed ones in general, cf., e.g., *աղամ, ագայ – աղացիր* «աղացվի՛ր» *մերձենամ, եգայ – մերձեցիր* նւ: As to *ան*-suffixed verbs of the *u* conjugation, they were often characterized by doublets in the 2 sg. Imperative, for the endingless aorist stem of a number of verbs served as the 2 sg. Imperative alongside the regular form with the ending *-իր*. Moreover, the stem-final *g* could be dropped: cf. *ընթանամ, ագայ – ընթացիր/ընթա՛ր/ընթաց* (ՆՀԲ, հ. 1, էջ 776)³, *իմանամ, ագայ – իմա՛ր/իմա՛ց/իմացիր* (ՆՀԲ, հ.1, էջ 846), *մոռանամ, ագայ – մոռացիր/մոռա՛ր* (ՆՀԲ, հ. 2, էջ 297). The canonical form of the 2 sg. Imperative of simple verbs of the *t* conjugation when used in the passive or medio-passive function, and the 2 sg. Imperative of simple verbs of the *h* conjugation in general coincided with the accented aorist stem, of which the final *g* was usually preserved: cf. *խորհիլ, aor. stem խորհեաց-*, Imp. sg. *խորհեաց՛, բազմիլ, aor. stem բազմեաց-*, Imp. sg. *բազմեաց՛* etc. However, here, too, there often occurred parallel forms without the final *g* as well as ones with the ending *-իր*, cf. *ողորմիլ, aor. stem ողորմեաց-*, Imp. sg. *ողորմեաց՛/ողորմեա՛ր* (ՆՀԲ, 2, էջ 510), *խօսիլ, aor. stem խօսեաց-*, Imp. sg. *խօսեաց՛/խօսեա՛ր* (ՆՀԲ, հ. 1, էջ 997), *երեւիլ, aor. stem երեւեաց-*, Imp. sg. *երեւեաց՛/երեւեցիր* (ՆՀԲ, հ. 1, էջ 678) etc.⁴

Owing to some phonetic and analogical changes, the imperative has exhibited a tendency toward uniformity in the further development of the Armenian language. However, the change has proceeded in different directions in different dialects. In this respect, the strong analogical interaction between the imperative forms of simple verbs of the *t* and *h* conjugations is especially remarkable. The following factors seem to have contributed to or favoured the analogical change. The 2 sg. active Imperative of simple verbs of the *t* conjugation, which represented the accented aorist stem minus the

² Cf. **A. Aytönean**, K'nnakan K'erakanut'iwñ ašxarhabar kam ardi hayerēñ lezui, [A Critical Grammar of the Ašxarhabar or Modern Armenian language], Vienna, 1866, pp. էջ 449, 453, 459-460, **A. Abrahamyan**, Grabari jernark, [A manual of Grabar], Yer., 1976, pp. 153-157, **P. Šarabxanyan**, Grabari dasynt'ac' [A Course of Grabar], Yer., Եր., 1974, pp. 187-188, **H. Jensen**, Altarmenische Grammatik, Heidelberg, 1959, S. 101.

³ Here and below the dictionary *Nor bərgirk' haykazeñ lezui* [New Dictionary of the Armenian language], Vol., 1-2, (Venetik, 1836-1837) is referred to by the notation ՆՀԲ [NHB].

⁴ Cf. also **P. Šarabxanyan**, op. cit., p. 188, **J. Klein**, Classical Armenian Morphology, In: **A. S. Kaye** (ed.), Morphologies of Asia and Africa, Vol. 1, Winona Lake, Indiana, 2007, Ch. 37, p. 1077.

final *g* in Classical Armenian (cf. *uḥrku*, aor. stem *uḥrkuḡ-*, Imp. sg. *uḥrku* (< *uḥrkuḡ*), in Middle Armenian underwent the phonetic change *kw* > *t*, the latter having changed further to *h* in some modern Armenian dialects.

It is also significant that the final *t* (>*h*) under consideration as well as the final *w* of the 2 sg. Imperative of simple verbs pertaining to the *w* conjugation (cf. *uḥw*, aor. stem *uḥwḡ-*, Imp. sg. *uḥw* (< *uḥwḡ*) came to be conceived of as actual endings of Imperative, added to the present stem. This is evidenced by some analogical forms of the 2 sg. Imperative built on the present stem secondarily in Middle Armenian (cf. *ḡwḥw*, Imp. sg. *ḡwḥw* «ḡwḡḥ ḡ», *ḡwḥw*, Imp. sg. *ḡwḥw* «ḡwḡḥ ḡ», *ḡwḥw*, Imp. sg. *ḡwḥw* «ḡḡḥ ḡ» ևն)⁵: On the other hand, the ending *-hp* of the 2 sg. medio-passive Imperative that was only used occasionally as a by-form with simple verbs of the *h* conjugational class in Old Armenian, takes over in Middle Armenian, displacing the original endingless form of the Imperative, cf. Cl. Arm. *ḡwḥw*, 2 sg. Imp. *ḡwḥwḡ*, Middle Arm. 2 sg. Imp. *ḡwḥwḡḥ* etc.⁶ Furthermore, simple verbs of the *h* conjugation have come to form the 2 sg. Imperative in New Armenian not from the aorist stem as they did formerly, but from the present stem (cf. Middle Arm. 2 sg. Imp. *ḡwḥwḡḥ*, New Arm. 2 sg. Imp. *ḡwḥwḡḥ*), the latter formation type being obviously analogical after the 2 sg. Imperative of simple verbs of the *t* and *w* conjugational classes. Later, the ending *hp* was extended to the 2 sg. Imperative of simple verbs of the *t* conjugation in some dialects as a result of analogical extension (more on which below). It follows that, due to a reanalysis of the original morphological relationship by speakers (language users) in New Armenian, a new unitary pattern of forming the 2 sg. Imperative from simple verbs has emerged, namely the model: *present stem (= verbal root) plus the ending (t', -w', -hp)*.

As to the directionality of the analogical changes triggered by the interplay between the imperative forms of simple verbs of the *t* and *h* conjugations, three main lines of development can be singled out.

1. In a number of dialects, the original morphological distinction between active and medio-passive inflection has been retained in the 2 sg. Imperative of simple verbs of the *t* and *h* conjugational classes, surviving synchronically as an opposition between the ending *t* (<*tw*) and the ending *hp* (<*hp*) or their further modifications. For example, in the dialect of Malatya, the 2 sg. Imperative of simple verbs of the *t* and *h* conjugations is formed from the present stem by the addition of the endings *-t* (< *-tw* < **-twḡ*) and *-hp* (< *-hp*), respectively, cf. *ḡḡḡḡt* (< *ḡḡḡḡt*), *uḥḡḡt*, 2 sg. Imp. *ḡḡḡḡt*,

⁵ Cf. J. Karst, *Historische Grammatik des Kilikisch-Armenischen*, Strassburg, 1901, S. 334-335, 338, Anm.

⁶ *Ibid.*, p. 338.

uhrk' on the one hand and *hujh*, *huoh*, 2 sg. Imp. *hujh'p*, *huoh'p* on the other hand⁷. Insofar as the formation of the 2 sg. Imperative is concerned, a similar situation obtains in the dialect of Shapin Garahisar⁸. In the dialect of Tigranakert, the distinction between active and medio-passive inflection is expressed by the opposition of the active ending *-t* (< *-tu'*) to the medio-passive *-h* (< *hp*), cf. on the one hand, *pprh* (< *prt*), *hprh* (< *hpr*), Imp. sg. *pprt'*, *hprt'* 'nũ, and on the other hand, *hprh*, *pprh* «*hprh*, *pprh*», Imp. sg. *hprh'*, *pprh'* 'nũ⁹. Similarly, in the dialect of Karno, the above morphological distinction is manifested as an opposition between the ending *t* (< *tu'*) and the ending *h* (< *hp*), respectively (cf. *pprt*, 2 sg. Imp. *pprt'*, *huoh*, 2 sg. Imp. *huoh'* 'nũ)¹⁰, while in the dialect of Bayazet, the active ending *u* (< *tu'*) and the medio-passive *h* (< *hp*) are opposed to each other in the 2 sg. Imperative, cf. *pprt*, 2 sg. Imp. *ppru'*, *hpru*, 2 sg. Imp. *hpru'*, as well as *hpru*, 2 sg. Imp. active *hpru* «*hpru*» and 2 sg. Imp. medio-passive *hpru* «*hpru*»¹¹:

2. In other dialects, the 2 sg. Imperative marker *-t* (< *tu'*) of simple verbs of the *t* conjugation was extended to simple verbs of the former *h* conjugation analogically¹². Moreover, the Old Arm. diphthong *tu'*, depending on the place of the stress, underwent twofold further change in some dialects. For example, in the dialect of Agulis carrying the stress on the penultimate syllable, *tu'* yielded *t'* in the accented position and *u* in the unaccented one, cf. *prt* (< *prt*), 2 sg. Imp. *prt'*, *hpr* (< *hpr*), 2 sg. Imp. *hpr'*, *u* (< *u*), 2 sg. Imp. *u* on the one hand, and *hpr* (< *hpr*), 2 sg. Imp. *hpru'*, *u* (< *u*), 2 sg. Imp. *u* on the other hand¹³: This is also the case in the dialect of Karchevan¹⁴.

⁷ See T'. Danielyan, Malat'iyi barbař [The dialect of Malat'ia], Yer., 1967, pp. 119-123, 127-131.

⁸ See H. Xač'atryan, Šapin Garahisari barbař (holovumə ew xonarhumə) [The dialect of Šapin Garahisar: declension and conjugation]. In Hayereni barbařagitakan atlas: usumnasirut'yunner ew nyut'er, Vol. 2, Yer., 1985, pp. 151-155.

⁹ A. Haneyan, Tigranakerti barbař [The dialect of Tigranakert]. Yer., 1978, pp. 126, 133-135. Cf. also pp. 112-113, 144-145.

¹⁰ Cf. H. Mkrtč'yan, Karno barbař [The dialect of Karin]. Yer., 1952, pp. 69, 71-75, 78-80.

¹¹ See V. Katvalyan, Bayazeti barbař yev nra lezvakan ařnč'ut'yunnerə řjaka barbařneri het [The dialect of Bayazet and its linguistic relationships with surrounding dialects], Yer., 2016, pp. 382, 426, cf. also p. 140.

¹² Cf., for example, H. Ač'aryan, K'nnut'iwn Nor-Naxijewani (Xrimi) barbaři [Study of the dialect of Nor-Naxijewan (Crimea)], Yer., 1925, pp. 261-262, 264-265, D. Kostandyan, Erznkayi barbař [The dialect of Erznka]. Yer., 1979, pp. 103, 105-109, Melik' S. Dawit'-Bėk, Arabkiri gawařabarbař: jaynabanakan ew k'erakanakan usumnasiru'iwn [The dialect of Arabkir: a phonetic and grammatical study], Vienna, 1919, pp. 258-261, cf. also 118-119, 129-130, H. Muradyan, Kak'avabardi barbař [The dialect of Kak'avaberd], Yer., 1967, pp. 62-63, 138-140, M. Maxudianz, Le parler arménien d'Akn (quartier bas), Paris, 1911, pp. 86-88, 90. The 2 sg. Imp. ending *m* of simple verbs of the *t* and *h* conjugations in the dialect of Hamshen, is also likely to continue the earlier *t* (< Old Arm. *tu'*), as evidenced by the same phonetic development *t* > *m* in the 3 sg. of the present subjunctive (otherwise termed present optative) (cf. H. Ač'aryan, K'nnut'yun Hamšeni barbaři [Study of the dialect of Hamšen], Yer., 1947, pp. 127-128).

¹³ See S. Sargseanc', Agulec'oc' barbař (zōkeri lezun): lezuabanakan hetazōtut'iwn [The dialect of Agulis: a linguistic study]. Vols. 1-2, Moscow, 1883, pp. 119-120, also pp. 34, 49-52, 108-109.

endings *-h'/-t'* (խուսէմ (< խօսիմ), Imp. sg. խուսի՛//խուսէ՛ etc.). As to the loss of the final *-p* in the ending *h'p*, the articulatory motivation seems more likely in view of the fact that irregular verbs (being generally characterized by high frequency of use) also have regularly undergone the same change, cf. *բիրիմ* < *բերեմ*, 2 sg. Imp. *բի՛* < *բե՛p*, 2 pl. Imp. *բիրիե՛ք*, *նուսիմ* < *նուսեմ*, 2 sg. Imp. *կի՛* < *կե՛p*, 2 pl. Imp. *կիրիե՛ք*, *նուսում* < *ուսում*, 2 sg. Imp. *տե՛օ* < *տն՛իք*, 2 pl. Imp. *տըվիե՛ք*, *դընեմ* < *դնեմ*, 2 sg. Imp. *դե՛* < *դի՛p*, 2 pl. Imp. *դրիե՛ք*¹⁹. Furthermore, the fact that the phonetic change *h > t* has usually taken place in the last closed syllable in the dialect of Kesab²⁰, plausibly suggests that the disappearance of the final *p* in the ending *h'p* is chronologically a later phenomenon than the change *h' > t'*. To put it another way, the change seems to have proceeded in the following steps: *-h'p > -t'p > -t'*.

Similarly, analogical change gave rise to doublets in the 2 sg. Imperative in the dialect of Meghri. To begin with, a mixing and redistribution of verbs pertaining to the former *t* and *h* conjugations have taken place with the result that now two syllabic verbs containing the reduced vowel *p* in the first syllable belong to the *t* conjugation (cf. *խսեմ* > *խսեմէլ*, *կրեմ*, > *կրրեմէլ*, *սրեմ* > *սրրեմէլ*, *նստիմ* > *նրստեմէլ*, *ծնանիմ* > *ծրնեմէլ* etc.), whereas verbs having a full vowel in the first syllable are included in the *h* conjugational class (cf. *սիրեմ* > *սերիմ*, *քերեմ* > *քիրիմ*, *խօսիմ* > *խօսիմ* etc.). Besides, most of the verbs coming from the erstwhile *u* conjugation have also been transferred to the *h* conjugation (cf. *աղամ* > *աղիմ* etc.)²¹. But what is more important for our present purpose is the fact that verbs of the *t* conjugation make the 2 sg. Imperative with the ending *եմ* (< *h'p*) alone²², while verbs of the *h* conjugation take either the ending *ւ* (< *եւ*) or *եմ* (< *h'p*) in the 2 sg. Imperative, cf. *սրրեմ* (< *սրեմ*), 2 sg. Imp. *սրրեմ* «սրի՛ք» on the one hand, and *սերիմ* (< *սիրեմ*), 2 sg. Imp. *սերիւ* / *սերեմ* «սիրի՛ք» on the other hand²³. It goes without saying that the doublets with the endings *ւ* (< *եւ*) and *եմ* (< *h'p*) have resulted from the analogical extension of the ending *եմ* (< *h'p*), with the transitional stage still persisting in the case of the new *h* conjugation, while with the new *t* conjugation the original ending *-ւ* (< *եւ*) has been ousted completely by the ending *-եմ* (< *h'p*).

However, it is sometimes hard to ascertain which of the above analogical changes has occurred in a particular dialect, the effects having often been blurred by later analogical and/or phonetic developments. Examining all the relevant changes in detail in modern Armenian dialects would be going too

¹⁹ Ibid., p. 164.

²⁰ Ibid., p. 36.

²¹ Cf. **Ē. Atayan**, *Metru barbar* [The dialect of Metri], Yer., 1954, pp. 203-210, also p. 199.

²² By the way, in the dialect of Metri, the regular phonetic change *h > t* is attested in accented as well as in posttonic syllable (see *ibid.*, pp. 39-42).

²³ Cf. *ibid.*, pp. 203-210.

far, hence we will only elucidate the issue by considering some typical instances. In the middialect of Vayots Dzor, verbs of the former *t* and *h* conjugations have been merged into a single *t* conjugation and usually follow the active inflection, although they have preserved the characteristic verbal vowel *h* in the infinitive. Nevertheless, it is difficult to say unequivocally whether the ending *h'* of the 2 sg. Imperative has arisen from the phonetic change *tu' > t' > h'* or is due to the loss of the final *n* in the former ending-*h'n*. The reason for this unclarity lies in the fact that the 3 sg. Optative also ends in *-h²⁴*, which is to say, with simple verbs of the *t* conjugation the 2 sg. Imperative and the 3 sg. Optative have fallen together historically in the middialect of Vayots Dzor (as is also true of the situation in many other dialects²⁵). On the other hand, the final *n* of the ending *-h'n* has obviously been dropped in the 2 sg. Imperative of suffixed verbs of the former *h* and *u* conjugations, cf. *թըռնիլ* (< *թոնչիլ*), 2 sg. Imp. *թըռնի'* (< *թըռնի'ն*), *թիլսնսլ* (< *թոլսնսլ*), 2 sg. Imp. *թիլս գի* (< *թիլս'ն գի*) etc.²⁶ In the latter case the elimination of the final *n* appears to have been analogical after the simple verbs of the former *u* and *t* conjugations, of which the 2 sg. Imperative has been ending in a vowel since the Old Armenian period. The point is that the final *n* has not been lost in the 2 sg. Imperative of irregular verbs, cf. *տընիլ* (< *ննիլ*), 2 sg. Imp. *տի'ն*, *ուղիլ* (< *ուտիլ*), 2 sg. Imp. *լի'ն*, *տսլ*, 2 sg. Imp. *տոն'ը*, *պերիլ* (< *բերիլ*), 2 sg. Imp. *պե'ր*²⁷. On the other hand, it is a common knowledge that irregular verbs (and irregular linguistic forms in general) are usually characterized by high frequency of use in the languages of the world, and that high frequency words, as a rule, undergo sound change earlier than low frequency ones do. As regards analogical change, the reverse situation is the case, namely analogical change takes place in low frequency words earlier than in high frequency ones²⁸. Accordingly, if the loss of the final *n* of the 2 sg. Imperative in the middialect of Vayots Dzor were motivated articulatorily, the irregular verbs would have undergone the change earlier than the regular ones. However, the constant presence of the final *n* in the 2 sg. Imperative of irregular verbs seems to speak in favour of the analogical motivation of its loss in the ending *-h'n* of the 2 sg. Imperative of regular verbs.

²⁴ Cf. **A. Vardanyan**, Vayoc' jori mijbararə [The middialect of Vayoc' jor], Yer., 2004, pp. էջ 60-63.

²⁵ Cf. **A. Margaryan**, 1975 Gorisi barbarə [The dialect of Goris], Yer., 1975, pp. 195-201, **M. Asatryan**, Urmiai (Xoyi) barbarə [The dialect of Urmia (Xoy)], Yer., 1962, pp. 103-116, **B. Mežunc'**, Šamšadin-Dilijani xosvack'ə [The subdialect of Šamšadin-Dilijan], Yer., 1989, pp. 80-81, 83-88, to mention just a few.

²⁶ Cf. **A. Vardanyan**, op. cit., pp. 60, 63.

²⁷ Cf. *ibid.*, p. 52.

²⁸ Cf. **S. Avetyan**, Ardi hayereni ynt'ac'ik p'op'oxut'yunneric' mekə kirarəhen lezvabanut'yan luysi nerk'o [One of the Ongoing Changes in Modern Armenian in the Light of Usage-Based Linguistics] // Banber Yerevani hamalsarani: Banasirut'yunn, 2019, № 2 (29), pp. 48-62.

Similarly, the historical interpretation of the lack of the final *p* in the 2 sg. Imp. ending *-h* (< Old Arm. *-hp*) in the dialect of Karno is far from simple. The final *p* is missing altogether in the 2 sg. Imperative of regular verbs, whereas some irregular verbs show doublets with and without the final *p*, cf. *pʰpʰtʰ*, 2 sg. Imp. *pʰtʰ(p)*, 2 pl. Imp. *pʰtʰpʰtʰpʰ*, *nɪnʰtʰ*, 2 sg. Imp. *ʎtʰ(p)*, 2 pl. Imp. *ʎtʰpʰtʰpʰ*, *unw*, 2 sg. Imp. *unn i(p)*, 2 pl. Imp. *unpʰtʰpʰ*²⁹. Accordingly, the disappearance of the final *p* is more likely to have been motivated analogically in view of the fact that high frequency words, as stated above, are generally more resistant to analogical change. However, this assumption is not without controversy because causative verbs also display similar doublets with and without the final *p*, cf. *ʃupʰʃpʰtʰ*, 2 sg. Imp. *ʃupʰʃgn i(p)*³⁰. Obviously, it would not be right to think that causative verbs are characterized by higher frequency of use as compared to non-causative regular verbs. Nevertheless, the constant presence of the final *p* in the 2 sg. Imperative of the irregular verb *nʰpʰtʰ* (cf. 2 sg. Imp. *nʰpʰ*, 2 pl. Imp. *nʰpʰtʰpʰ*)³¹ appears to be more decisive and to speak against the possible articulatory motivation of the loss of the final *p* in the 2 sg. Imperative of other verbs. Therefore, it seems more reasonable to assume that the final *p* in the ending *-hp* in the dialect of Karno has disappeared by analogy with the original vowel-final forms of the 2 sg. Imperative of simple verbs pertaining to the *t* and *w* conjugational classes³². On the other hand, the final *p* in the 2 sg. Imperative of causative verbs may have been restored analogically after the doublets of irregular verbs (cf. especially the adduced 2 sg. Imperative *unn i(p)* of the verb *unw*).

In our view, the situation is relatively clear in the dialect of Tigranakert, for the final *p* is always missing in the ending *-h p* of the 2 sg. Imperative with regular verbs, whereas all the relevant irregular verbs have retained the final *p* in the Imperative singular³³. Therefore, in the light of the above discussion, the loss of the final *p* in the 2 sg. Imperative of regular verbs is quite likely to have been motivated analogically after the vowel-final forms of simple verbs of the *t* and *w* conjugations.

In the dialect of Maragha, conversely, the disappearance of the final *p* appears to have been motivated articulatorily. Above all, H. Acharyan's claim that the 2 sg. Imp. ending *-p* has developed out of the Old Arm. diphthong *kw* characteristic of the 2 sg. Imperative of simple verbs of the *t* conjugation, having gone through the intermediate stage *t*, namely by the phonetic change *kw > t > p*,³⁴ seems questionable if not refutable. It should be noted the H. Acharyan does not adduce evidence in support of the alleged

²⁹ Cf. H. Mkrtč'yan, op. cit., pp. 69-70, 86.

³⁰ Cf. *ibid.*, pp. 81-82.

³¹ Cf. *ibid.*, 85.

³² For the original vowel-final forms of the Imperative singular in the dialect of Karno, see *ibid.*, pp. 71-78.

³³ Cf. A. Haneyan, op. cit., pp. 126, 131-132.

³⁴ Cf. H. Ačarean, K'nnut'iwñ Maratayi barbari [Study of the dialect of Maratā]. Yer., 1926, p. 234.

